

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1913

ԵՍՏԱՄ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈԼԱՆԻ ԾՐՁԱՆՆԵՐՈՎ

ԽՈԿՈԼՈՎ, յեզ ՈՒՃԱՐՈՎ, ԽՍՀՄ-ի աշխարհագրությունից

Կրնատումներով փոխադրեց՝
Հ. ԵԼԻԲԵԿՅԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՖՈԽԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ




17437

ՊԵՏՈԼԱՆ

1930

ՅԵՐԵՎԱՆ



ԽՍՀՄ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԱՆԻ ՃՐՁԱՆՆԵՐՈՎ

ՍՈՎԵՏՈՎԻ ՀՆԿ ՈՒ-Վ. Ա. ՐՈՎԻ ԽՍՀՄ-Ի առարկագրությունից

Կրնառումներով փոխադրեց՝

Հ. ԵԼԻԲԵԿՅԱՆ

17436
A $\frac{\pi}{41533}$

—

ԵԵՐԿՐՈՐԴ ԲԱՐԵՓՈԽԱԾ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏՈՒԱՆ

1980

ՅԵՐԵՎԱՆ

Հըստ. № 1313

Գրառեալ. № 5215 (բ). Պատվ. № 576. Տիրաժ 4000


Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Սոկոլովի յեվ Ուվարովի ԽՍՀՄ-ի աշխարհագրության այս հրատարակությունը բավական տարբերվում է առաջին հրատարակությունից:

1. Թվական տվյալները (աղյուսակները) հանել ենք.
2. Պահպանելով նյութի բաժանումը մենք հարկ համարեցինք գլուխները դասավորել այլ կերպ. նախ տալիս ենք Անդրկովկասը, չյուս. Կովկասը, ապա Ուկրայինան, կենտ. Սեվանողային, կենտր. արդյունագործական յեվ այլ շրջաններ. Այս դասավորությունն անդրկովկասու համար ավելի բնական է:
3. Գիրքը թեթեվացնելու նպատակով գլուխները խիստ կրնատման ենք յենթարկել. 10—12 յերեսը ամփոփելով 4—5 յերեսի մեջ, Շատ գլուխներ համարյա նորից են թարգմանված:
4. Ավելացրել ենք նոր հոդվածներ հնգամյա պլանի, կոլտնտեսությունների մասին յեվ այլն, ոգտվելով Բարանսկուց:
5. Անդրկովկաս գլուխն առաջին հրատարակությունից ամբողջապես հանվել է յեվ տեղը դրվել նորը, վորն ավելի մատչելի յերեխանների համար:

Տ. ԵԼԻՔԵԿՅԱՑ



1. ԸՆԳՐԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՈՀՄ-ի ԳԻՐՔԸ, ԱՌԵՄՑՆԵՐԸ ՅԵՅ. ՄԱԿՐԴԱԿԻ ՄԵՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՍՀՄ-ն գտնվում է Յեվրասիայում, բռնում և Յեվրոպայի արևելյան կեսը, Կովկասը, ամբողջ Հյուսիսային և Միջին Ասիայի տրեմը՝ այս մասը։ Նրա ամենահեռավոր կետերն են՝ Զեյզուսկին երկանդանը (Հյուսիսում), Կուչկան (հարավում, Աֆղանստանի հետ ունեցած սահմանում), Դեմենի հրվանդանը (արևելքում), արևմալան հեռավոր կեռը գտնվում է Աւկրայնայում (Լեհաստանի հետ ունեցած սահմանում):

Զեյզուսկին հրվանդանը և Կուչկան կայսրանն ինչ լայնության վրա յեն գտնվում Դեմենի հրվանդանը և ԽՍՀՄ-ի ամենաարևմտյան ծայրն ինչ յերկարության վրա յեն գտնվում (Հ. Սլիբեկյան, Աշխարհագրական ատլաս, ԽՍՀՄ-ի ժամանեղ):

Յերբ լենինդրագում ժամի 12-ն եւ, այդ միջոցին վճը ժամն և լինում վկացիվաստկում և Դեմենի հրվանդանի վրա։

ԽՍՀՄ-ի հյուսիսային սահմանը կազմում է Հյուսիսային Բնեթառապելին ծովը, սկսած Զկնորական թերակղզուց մինչեւ Բերինյան նեղուցը. այս նեղուցով ԽՍՀՄ-ն բաժանվում է Ալյասկայից, Վորը պատկանում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին։

Արևելքում սահմանն անցնում է Բներինդյան նեղուցից մինչև Պոսիետի ծոցը։ Այս ամբողջ տարածության վրա ձգվում են խաղաղ ովկիանոսը, վորը Միության ափերի մոտ գոլացըել և մի քանի ծովեր (վորմնը են)։

Պոսիետի ծոցից սկսվում է հարավային ցամաքային սահմանը։ Ալյասեղ ԽՍՀՄ սահմանակից եւ Յապոնիային (Կորեային), Զինաստանին (Մանջուրիային), Շոնդոլիային, Տաննու-Ծուվայի հանրապետության, դարձյալ Զինաստանին (Արևել. Թուրքեստանին), Աֆղանստանին, Պարսկաստանին և Թյուրքիային։ Այսուհետեւ սահմանն անցնում է Սև ծովով և հասնում մինչև Դանուբը գետը։

Դանուբի հյուսիսային ճյուղից սկսվում է արևմտյան ցամաքային սահմանը։ Ալյասեղ սահմանակից են Ռումանիան (*), Լեհաստանը, Լատվիան, Եստոնիան և Ֆինլանդիան։

* Բեռարքիան, զոր ներկայումս բանագրավել և Ռումանիան, համարում ենք ԽՍՀՄ-ի մի մասը։

ԽՍՀՄ-ի թե ծովալին և թե ցամաքային սահմանների ընդհաւանուր յերկարությունը մոտ 70,000 կմ. է, վորի $\frac{1}{3}$ -ը ցամաքային սահմաններ են, իսկ $\frac{2}{3}$ -ը՝ ծովալին:

Թեպետ ընդհանուր սահմանագծի $\frac{2}{3}$ մասը ծովալին սահմաններ են, բայց և այնպես ԽՍՀՄ համարվում ե ցամաքային լեռկիր: Միության մեծագույն մասը՝ կամ շատ հեռու լի ծովերից կամ շրջապատված ե այնպիսի ծովերով, վորոնք համարյա ամբողջ տարին անմատչելի յեն նավագնացության համար, և այդպիսով նրանց նշանակությունն այդ տեսակետից չնշին ե. այսպես, որինակ՝ Հյուսիսային Բերվեռալին ծովի ափերը, Յենիսեյ գետից գեպի արևելք, համարյա ամբողջ տարին ծածկված են սառաւցներով:

Բալտիկ և Աև ծովերը Միության համար կարևոր նշանակություն ունեն, բայց այն նեղուցները, վորոնցով այդ ծովերը կապվում են ովկիանոսի հետ, մեր ձեռքին չեն գտնվում:

ԽՍՀՄ բռնում ե 21,352,000 քառակուսի կիլոմետր տարածություն, վորը կազմում ե յերկրագնդի ամբողջ ցամաքի $\frac{1}{7}$ մասից մի քիչ ավել ԽՍՀՄ Յեվրոպայից մեծ և 2 անգամ և աշխարհիս ամենախոշոր պետությունների շարքում յերկրորդ տեղն ե բռնում. նա փոքր ե միայն Անգլիայից, վորն իր բոլոր գաղութներով ամբողջ ցամաքի մոտ $\frac{1}{4}$ մասն ե բռնում: Բայց Անգլիայի գաղութները ցրված են աշխարհի բոլոր մասերում, բաժանված են ովկիանոսների ջրերով և, բացի դըրանից, Անգլիայի գաղութների ժողովրդներն իրենց ճնշված են զգում ալդ պետության տիրապետության տակ ու շարունակ պայքարում են լիակատար ազատություն ձեռք բերելու համար: Վորպես որինակ կարելի յե բերել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք մի ժամանակ անգլիական գաղութներ են, բայց յերկար ու ծանր կորիֆներից հետո ազատվեցին Անգլիայից և անկախություն ձեռք բերին:

Բոլորովին ուրիշ բան ենք տեսնում ԽՍՀՄ-ում ապրող ժողովը ըստ մեջ. սրանք, ընդհակառակը, աշխատում են իրենց միությունն ավելի ևս ամրացնել: Դրան ավելացնենք և այն, վոր ԽՍՀՄ-ին հարեվան արևելքի ճնշված ժողովրդներն ավելի և ավելի լին ճգտում սերտ կապ ու միություն ստեղծել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հետ:

Մասշաբի ոգնությամբ ցույց տվեք, թե ԽՍՀՄ արևելքից—արևմուտք և հյուսիսից հարավ քանի կիլոմետր ե ձգվում:

Յերկաթուղով քանի՞ կիլոմետր ե՝ 1) Լենինգրադից մինչև Մոսկվա, 2) Յերեանից մինչև Երևանսկելսկ, 3) Տաշկենտից մինչև Մոսկվա:

ԽՍՀՄ վար պետություններից ե բաժանվում գետերով և լեռներով: ԽՍՀՄ և վար պետության միջև ե ձգվում ամենայերկար և ամենակարև սահմանը:

ԵՅԻՄԸՐՀԱԾՄԱՆԻ ՅԵՎ ԳԼԽԸՆՈՒՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԸԿԸՐԴԱԿԻ ՄԵԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՎԱԼ

Մակարդակը (հազար
քառ. կիլոմետրերով)

Բնակիչների թիվը
հազարներով

Ամբողջ ցամաքը (հաշված և Անտար- կտիկան)	149.000	1.912.000
Յեվրոպան	10.000	367.500
(առանց ԽՍՀՄ-ի)		
Ասիան	44.000	1.005.000
(առանց ԽՍՀՄ-ի)		
Աֆրիկան	30.000	146.500
Հյուս. Ամերիկան	24.000	159.300
Հարավ. Ամերիկան	18.000	76.500
Ավստրալիան Ովկիանիայով	9.000	9.300
Անգլիան գաղութներով	36.012	412.300
» առանց գաղութների	244	45.535
ԽՍՀՄ-ն	21.352	153.000
Ֆրանսիան գաղութներով	12.098	102.500
» առանց գաղութների	551	41.250
Հյուս. Ամեր. Միաց. Նահանգները գա- ղութներով	9.851	132.000
Հյուս. Ամեր. Միաց. Նահանգներն ա- ռանց գաղութների և Ալյասկա- յի	7.997	109.000
Զինաստան (հաշված և Տիբետը)	9.650	431.500
Իսալիան գաղութներով	2.380	42.350
» առանց գաղութների	310	40.550
Յապոնիան գաղութներով	684	86.760
» առ անց գաղութների	385	61.900
Գերմանիան	472	64.500


Վորոշեցեք ազգաբնակության միջին խառնթյունը ԽՍՀՄ-ում և մյուս
յերկրներում (գաղութներով և առանց գաղութների):
Կազմեցեք զինավոր յերկրների մոլարդակի մեծության համեմատական
դիագրամը:

ԽՈՀՄԻ ԱՓԵՐԸ ՎՈՂՈՂՈՂ ԺՈՎԵՐԸ

Հյուսիսային Ռեվեռա- Հյուսիսային Բեկոռալին ծովը վողողում և
յին ծով ԽՍՀՄ-ի հյուսիսային ափերը: Նա նոր Յերկիր կըդ-
գով բաժանվում և յերկու մասի՝ արևելյան և

արևմտյան: Բեկոռային ծովի արևմտյան մասում գտնվում են Բարենցի յեղ Սպիտակ ծովերը, իսկ արևելյան մասում՝ Կարայի յեղ Սիբիրական ծովերը: Բացի նոր Յերկրից այստեղ գտնվում են Վայզաչ, Կոլյույել, նոր Սիբիրյան կղզիները և Կոլա, Կանին, Յամալ յեղ Տայմր թերակղզիները:

Հյուսիսային Բեկոռային ծովը նավագնացության համար անհարմար է, վորովհետև նրա մեջ մեծ քանակությամբ սառուցներ են լողում: Արևմտյան մասը համեմատաբար մտաշելի է, վորովհետև նոր Յերկրի կղզին հյուսիս-արևելյան քամիների ընթաց-



Նկ. 1. Հյուսիս, Բեկոռային ծով.

քով դեպի Սիբիրի ափերն լեկող սառուցների առաջն առնում ե. բացի դրանից այս ծովի արևմտյան մասն և մտնում Գոլֆշտրոմ տաք հոսանքի մի ճյուղը (Նորդկապի հոսանքը): Արևելյան մասը քիչ և մատչելի նավագնացության համար: Բայց և այնպես հայտնի և խիզախ ծովագնացները (Նորդենշելդ, Ամունդսեն, Վիլկիցկի)

անցել են Յեվրասիայի հյուսիսային ափերի լերկարությամբ և արդպիսով Հյուսիսային Մեծ ճանապարհի սկիզբն են դրել։ Ասիայի հյուսիսային ափերով գեպի Խաղաղ ովկիանոս տանող ճանապարհի հետազոտությամբ առաջին անգամ զրադվեցին հոլլանդացիք։ Հոլլանդացի ծովագնաց Բարենցը XVII դարու վերջը պտտեց Նոր Յերկիր կղզու հյուսիսային ափերով և ալսպիսով առաջին անգամ մտավ Կարամի ծովը։ Նորդինշելդն առաջինն անցավ Ասիայի հյուսիսային ափերով և դուրս լեկավ Խաղաղ ովկիանոսը 1878—1879 թ. «Վեգա» նավով։ Հակառակ ուղղությամբ, ալսինքն Խա-



Նկ. 2. Ֆրիայոֆ Նանսեն Հայտնի յերեսային յերկրներում կատարած հետազոտություններով. 1919—21 թ. սովոր ժամանակ մեծ ողնություն հասցըց ԽՍՀՄ-ի աղջարնակությանը.

ղաղ ովկիանոսի կողմից, Ասիայի հյուսիսային ափերով միայն մի անգամ անցան 1913—1915 թ. «Վայգաչ» և «Ճալմիր» սառ-

ցահատ նավերով Վելկիցկու ղեկավարությամբ։ Այս եքսպեդիցիան Զելյուսկին ճրվանդանից հյուսիսի գտավ մի մեծ կղզի, վոր ներկայում կոչվում է Հյուսիսալին Յերկիր։ Նորդենշելդի անցած ճանապարհով յերկրորդ անգամ անցավ Ամունդսենը։ Այժմ պարզվել ե, վոր այս ճանապարհի ամենամեծ դժվարությունը Տայմիր թերակղզու շուրջը պտտվելն է, վորովհետև պատահում են այնպիսի տարիներ, յերբ այս թերակղզին սառցով միացած է լինում Հյուսիսալին Յերկիր կղզու հետ։

Հյուսիսալին Բնեռուային ծովի ուսումնասիրելու համար մեծ ջանք է թափել մանավանդ Թրիայով Նանսինը։ Այս խիզախ ծովագնացը կարողացավ ապրանքի բեռներով մտնել Յենիսեյի գետաբերանը, «Ապագայի Յերկիրը», ինչպես վոր նա անվանեց Սիբիրը, և այդպիսով ապացուցեց, վոր Կարասի ծովով կարելի է առետրական հարաբերություն ստեղծել Սիբիրի հետ։

Ներկայումս Հյուսիսային Մեծ Ճանապարհը Սիբիրի հեռավոր շրջանների հետ հարաբերություն ունինալու համար մեծ նշշանակություն ունի։ Այժմ ամեն տարի նոր ու նոր արշավախմբեր են կազմվում այդ կարենոր ճանապարհն ուսումնասիրելու և Որի և Յենիսեյի գետաբերաններից հում նյութեր արտահանելու համար։

Այս անմարդաբնակ, բայց կարենոր վալրերի հետ մշտապես կապ պահպանելու համար Վալգաչի վրա, Որի գետաբերանի մոտ և մի քանի ուրիշ տեղերում հիմնված են բաղիո-կալաններ։

Բարենցի ծովի գտել ե հոլլանդացի ծովաբարենցի ծովաբարենցի ծովի գնաց Բարենցը։ Այս ծովի սահմանները կազմում են մի կողմից Կոլա և Կանին թերակղզիները, իսկ մյուս կողմից՝ Շպիցբերգեն, Ֆրանց Հովհանսեփի Յերկիր և նոր Յերկիր Կղզիները։ մտնելով ցամաքի մեջ նա կազմում է Սպիտակ ծովը և Զեչալի ծովախորշը։

Ատլանտյան ովկիանոսից յեկող տաք հոսանքի շնորհիվ Բարենցի ծովը, մտած սառուցները հալվում են և այդ պատճառով նավագնացությունն այստեղ հնարավոր ե ամբողջ տարին։ Կոլա թերակղզուն Մուրմանի չսառչող ափին հիմնվեց Մուրմանսկ նավահանգիստը, վորը յերկաթուղով միացած է Լենինգրադի հետ և մեծ ապագա ունի։

Ցույց տվեք Մուրմանսկից Ամերիկա և Լենինգրադից Ամերիկա տանող ծովային ճանապարհները։

Սպիտակ ծովի նավագնացության համար անհարմար ե, վորովհետև տարվա մեծ մասը ծածկված է լինում սառուցներով։ Նավագնացությունը կարելի յե կա-

տարել միայն ամառվա 4—5 ամիսներին Ալս ծովու այնքան ել խորը չէ և քիչ աղի իւս Սպիտակ ծովի ափին, (Հյուս. Դվինալի գետաբերանում) գտնվում ե Արխանգելսկ նավահանգիստը, վորի առետրակտն նշանակությունը մեծացավ մտնավանդ այն ժամանակ, ի երբ նա լեռ-կաթուղով միացավ Մոսկվայի հետ:



Նկ. 3. Հյուս. Բևեռային ծովի կենդանիները.

Հյուսիսային Բևեռային ծովում վորսում են ջրալին կաթնասուններ՝ փոկեր, հյուսիսային գեղիներ, վորոնք ճարպ ու կաջի յեն տալիս, իսկ նոր Յերկրի մոտ վորսում են սպիտակ արջեր և ծովացուկերտ Մուրմանի ափերի լերկարությամբ վորսում են մեծ քանակությամբ փրփրուկ ու պալտուս, Սպիտակ ծովում՝ հարինգ և նավազա, իսկ Սպիտակ ծովի նեղուցում՝ փոկեր։

ՅԵՂԵՆՅԵՐՆ ՈՂԿԻՇԽԱՎԻ ԹՈՎԵՐԸ

Ատլանտյան ովկիանոսը Բալտիկ և Սև ծովերով մտնում ե ԽՍՀՄ-ի Յեղոպական մասի մեջ։ Սակայն Բալտիկ ծովի Ֆիննական ծոցի մի փոքրիկ մասն ե միայն պատկանում ե ԽՍՀՄ-ին։ այստեղ և գտնվու ԽՍՀՄ-ի գլխավոր նավահանգստներից մեկը՝ Լենինգրադ։ Լենինգրա-

գի վրայով առևտուը ենք անում այն լերկրների հետ, վորոնք առևտրական պայմանագիր են կնքել մեզ հետ: Ֆիննական ծոցի այն ժամաը, վոր մեզ ե պատկանում, տարվա մեջ համարյա 5 ամիս սառած է մինում:



Նկ. 4. Լենինգրադը տեսքը ծովի կողմից.

Լենինգրադը պաշտպանված ե Կրոնցադ ծովային ուժեղ ամրութով, վորտեղ կոնդնած ե ԽՍՀՄ-ի նավատորմիղը:

Սել ծովը ԽՍՀՄ-ի համար շատ կարևոր նը-
շանակություն ունի, վորովհետև նրա վրայով
ծովային ճանապարհն անցնում ե դեպի Միջերկրական ծովը: Սև ծովը
բավական խոր ե. միջին
մասում նրա խորությունը



Նկ. 5. Նավերը շարժվում են սառցահատի յետեից. տարին առևտուը ե անուած Արևմտյան Յելլոպայի և Ամերիկայի հետ: Միայն մի քանի շաբաթով

նրա հլուսիս-արևմտայան ափերը ծածկվում են սառույցներով, բայց սառույցն աչքան բարակ է լինում, վոր մինչև անգամ ամենախիստ ձմեռը սաղցահատ նավերի ոգնութիւնամբ նավագնացությունը չի զադարում:

Զինորսության արդյունքի տեսակետից Սև ծովը կասպից ծովից յետ ե մնում. ալտաղ վորսում են թառափներ (Կասպից ծովի կենդանական աշխարհից), կեֆալ և սկումբրա (Միջերկրական ծովի կենդանական աշխարհից), Սև ծովի ջուրը, սկսած 200 մետր խորությունից դեպի ցած, պարունակում ե ծմբաջրածին, վոր գոյանում ե ծովի հատակին որգանական նյութերի նեխուսից. վորովհետև այդ գաղը թունավոր ե, ուստի 200 մետրից խոր Սև ծովում վոչ բումաեր և վոչ ել կենդանիներ կան. այդ խորությունից սկսվում ե Սև ծովի մեռած զոնան:

Ապրանքներ արտահանելու տեսակետից Սև ծովը առաջին տեղն ե բռնում ամբողջ ԽՍՀՄ-ում. այս ծովի նավահանգիստներով մենք արտահանում ենք մեծ քանակությամբ նավթ, հաց և ալլ ապրանքներ:

Սև ծովը ե մտնում Ղրիմի թերակղզին:

Սև ծովի գլխավոր նավահանգիստներն են՝ Ռիեսան, Նիկոլայեվր և Երտոնը, Ֆեոդոսիան, Կերչը, Նովորոսիյսկը, Փոքրին, Բարումը և այլ ավանքներ:

Ռազմական նավատորմիդը կանգնած է Սևաստոպոլում, վորի ծովախորշը յերկրագնդի ամենալավ ծովախորշերից մեկն ե համարվում:

Սև ծովը ցամաքի մեջ ե մտնում մի ծոցով, վոր կոչվում է Առզովի ծով. Ազովի ծովը միանում է Սև ծովի հետ Կերչի նեղուցով. Ազովի ծովը յորը չե, այդ պատճառով ել խոշոր շոգենավերը չեն կարողանում ափին մոտենալ և ստիպված են հեռու ծովի մեջ կանգնել, վորտեղից ապրանքները մանր նավերով տեղափոխում են հետեւար նավահանգիստները ծագանրոգ, Մարիուպոլ, Բերդյանսկ և Եյսկ յետասով դ. վ.:

ԽԱՂԱՂ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԾՈՎԵՐԸ

Մեծ կամ Խաղաղ ովկիանոսը վողողում ե Ասիայի արեելլան ափերը. նա Սիրիի ափերին կազմում է հետեյալ ծովերը՝ Բերինգյան, Ոխոյյան և Յապոնական. Բերինգյան և Ոխոյյան ծովերը վողողում են Կամչատկա թերակղզին. Ոխոյյան ծովում ե գտնվում Սախալին կըզդին, վորի կեսը պատկանում է մեզ, իսկ կեսը Յապոնիային:

Բերինգյան ծովը Հյուսիսալիին բնեռային և ՍՀՄ-ն բաժանում է Ամերիկայի Միացլաւ նահանգներից.

Բերինգյան ծովի հյուսիսային մասը ձմեռը սառչում և իսկ հաքավային մասը մինչև անդամ ձմեռն ել ազատ և լինում սառուցներից, վորովհետեւ այս մասում զգալի յե Կուրր-Սիվո տաք հոսանքի աղդեցությունը: Ամառը ծովն ազատ և սառուցներից, բայց հաճախակի մառախուղները դժվարացնում են նավագնացությունը:

Ծովափնյա բնակիչները պարապում են ձկնորսությամբ և ծովալին կաթնասունների վորսով. վորսում են փոկեր, ծովացուկեր, ծովարջեր, վորոնց մորթին թանգ և գնահատվում:

Ոխոտյան ծովը գտնվում է Ասիալի մայր

Ոխոտյան ծով ցամաքի, կոմչատկա թերակղզու և Յապոնիացին պատկանող Կուրիլլան կղզ-շղթալի միջև: Ոխոտյան ծովը նույնպես ցուրտ ծով ե, նրա ջրերում նույնպես սառուցներ են լողում, վորոնք հաճախ ամառվա ընթացքում չեն հալվում: Ոխոտյան ծովն ամառվա ընթացքում ծածկվում ե թանձր մառախուղներով, վորոնք դժվարացնում են նավագնացությունը: Այս ծովը շատ հարուստ և ձկներով:

Յապոնական ծովը գտնվում է Ոխոտյան

Յապոնական ծով ծովից հարավ, Սիցիլիա կղզու լայնության վրա: Նա տաք ծով ե, սառչում և միայն նրա հյուսիսային մասը: Աշնանը Յապոնական ծովի վրա փչում են տայֆուն կոչված ուժեղ քամիները, վորոնց պատճառով ծովի վրա սաստիկ փոթորիկներ են լինում: Այս ծովը հարուստ և ձկներով: Գլխավոր նավահանգիստը Վլախիլոսոկին ե:

ՆԵՐՔԻՆ ԾՈՎԵՐ

Ներքին ծովեր են Կասպից և Արալյան ծովերը, վորոնք ովկիանոսի հետ կապ չունեն: Խակապես սրանք հսկայական լճեր են և վոչ թե ծովեր:

Կասպից ծովի արևելլան ափերին գտնվում

Կասպից ծով են Կարաբուգազ, կոմսոմոլեց և Կրասնովոդսկի ծոցերը, իսկ արևմտյան ափերին Ապերոնյան թերակղզին և Կորլ-Աղաջի ծոցը, վորի մեջ թափվում ե Արաքս գետը: Կասպից ծովի մակերեսութը Սև ծովի մակերեսութից 26 մետրով ցածր ե:

Հետազոտությունները ցույց են տվել վոր Կասպից ծովի հատակի ու սելեֆը կարելի լե յերեք մասի բաժանել—հյուսիսային, միջին և հարավային:

Հյուսիսային մասն ամենածանծաղն ե և նրա միջին խորությունը հավասար է մոտ 20 մետրի: Այս մասը շարունակ ծանծաղանում է, վորովհետեւ նրա մեջ թափվող գետերը (Վլոգան, Ռւրալը և ուրիշները) ահագին քանակությամբ տիղմ և ավագ են բերում:

Կասպից ծովի մասը ստորջրյա շղթայով բաժանվում է չերկու մասի—հյուսիսային (ամենամեծ խորությունը $1\frac{1}{2}$ կլմ.) և հարավային (ամենամեծ խորությունը մոտ 1 կլմ.): Այդ ստորջրյա շրջան կազմում է կովկասյան լեռնաշղթայի շարունակությունը և ձեռվում է Ապշերոնյան թերակղղուց մինչև Կրասնովդուկի ծոցը:

Կասպից ծովի ջուրն ամեն տեղ նույն աղիությունը չունի. հարավում ծովի ջուրը պարունակում մոտ $1\frac{1}{2} \%$ աղ, իսկ հյուսիսում հազիկ $1\frac{1}{2}$ տոկոս, վորովհետեւ այս մասի մեջ թափվում է ջրառատ Վոլգա գետը: Կասպից ծովի ծոցերում ուժեղ գոլորշիացման շնորհիվ ջուրը շատ աղի է: Մանավանդ շատ աղ պարունակում է Կարաբուգազը, վորի միջին խորությունը 9 մետր է: Ուժեղ գոլորշիացման պատճառով Կարաբուգազի ջուրը հասպից ծովի ջրից քիչ ցածր է. այդ պատճառով Կասպից ծովի ջուրը մի նեղ նեղուցով շարունակ հոսում է գետի Կարաբուգազ, վորտեղ այդ ջուրը փովում է և արագ գոլորշիանում, իսկ Կարաբուգազի հատակին նստում է մեծ քանակությամբ աղ, այսահետև ընկնող կենդանիները մեռնում են: Ալպիսով Կարաբուգազը քաշելով Կասպից ծովի աղերը, կարծիս նրան քաղցրացնում է:

Կենդանիներ գոլություն ունեն Կասպից ծովի միայն վերին շերտում, վորի հաստությունը մոտ 350 մետր է, վորովհետեւ դրանից ցածր ծովի մեջ թթվածին չկա, իսկ ավելի խոր տեղերում յերեսում է թունավոր ծծմբաշածին գաղը:

Կասպից ծովի հարավային մասը չի սառչում, իսկ հյուսիսային մասը հինգ ամիս ծածկվում է սառուցով. բացի դրանից հյուսիսային մասը ծանծաղ է և նավագնացության համար անհարմար, ուստի ծովային նավերը կանգնում են այն նավակալանում, վոր գտնվում է Վոլգայի գելտայից 70 կիլոմ. հեռու, ծովի միջին մասը հարմար և նավագնացության համար, վորովհետեւ ավելի խոր է:

Կասպից ծովի նավահանգիստաներից աչքի լին ընկնում՝ Բագուն, և Մախսաշ-Կալան (արևմտյան ափին), Կրասնովդուկը (արևելյան ափին), Աստրախանը (Վոլգայի գելտայիում):

Սև ու բալտիկ ծովերի հետ համեմատած Կասպից ծովի առետրական նշանակությունը մեծ չե, վորովհետեւ նա ովկիանոսի հետ կապ չունի:

Կասպից ծովը շատ հարուստ է ձկներով, վորովհետեւ գետերն իրենց հետ բերում են մեծ քանակությամբ սնունդ ձկների համար և մյուս կողմից ծովի մեջ գտնվում են բազմաթիվ անվողնաշար կենդանիներ. շատ ձկներ կան մանավանդ Վոլգայի, Ուրալի, Կուրի և Տերեկի գետաբերաններում, վորտեղ վորսում են թառափ, դութիսի, հա-

բինդ և վորլա, իսկ Կասպից ծովի մասը կղզիներում վորսում են փոկեր:

Արալյան ծով Արալյան ծովը ձմեռը սառչում է, նրա ափերը ցածր են և նավահանգիստներից զուրկ Այս ծովը ել, Կասպից ծովի նման, հարուստ և ձկներով:

ԽՍՀՄ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Մեր լերկրի բնակչության ցեղալին կազմը շատ խայտաբղետ է: Հյուսիսային քենուային ծովից մինչև Զինաստանն ու Սև ծովը, արևմտյան սահմանից մինչև Խտղաղ ովկիանոսն ապրում են սլավոնական, Փիննական, Թյուրքական, մոնղոլական և այլ ժողովուրդներ, վորոնց թիվը 100-ից անց է: ԽՍՀՄ-ի ազգաբնակությունը խայտաբղետ և վոչ միայն լեզվով և ֆիզիկական տիպով, այլև կենցաղով, պարագանունքով: Յերկրագործությամբ և արդյունագործությամբ պարագող ազգաբնակության կողքին այստեղ հանդիպում են քոչվոր ու թափառական ժողովուրդներ: Միության զանազան տեղերում կարելի լի տեսնել մարդկային բնակարանի բոլոր տեսակները—սկսած քոչվորի և թափառականի խղճուկ վրանից և վերջացրած խոշոր քաղաքի բազմահարկ աներով:

Թվով առաջին տեղը սլավոնական խումբն է բռնում: Նա բաղկացած է գլխավորապես ռուսներից, ուկրայինցիներից, բելոռուսներից:

Ռուսներն ապրում են վերին և միջին վոլգալիք, Ուկայի և Դոնի ավազաններում, ինչպես և ԽՍՀՄ-ի զանազան մասերում: Ռուսական լեզուն Միության մեջ ամենատարածվածն է: Ռուսները կազմում են Ռուսաստանի Սոց. Ֆեդ. Խորհրդ. Հանրապետության (Ռ. Ֆ. Խ. Հ. Հ.) կորիգը:

Ուկրայինցիներն ապրում են Դնեպրի միջին և ստորին ավազաններում (Ուկրայնալի հանրապետության մեջ), իսկ բելոռուսները՝ Դնեպրի վերին հոսանքի շրջանում: Բացի սլավոններից սպիտակ ցեղին պատկանում են նաև նաբերականները (Կովկասում), սեմիտները, իրանցիները և այլն:

Դեղին ցեղի ժողովուրդներից ԽՍՀՄ-ում տարածված են Ֆիննական, բարարական և մօնղովական ժողովուրդները:

ՄԽՀՄ-Ի ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՅԻՆ ԿԱԶՄԸ

I. Արդարացնելու կամ չ նիվա-ռարացնելու

Ս ավանեներ	<i>Ռուսաներ</i>
	<i>Ռւկրալինցիներ</i>
	<i>Բելոռուսներ</i>
	<i>Լեհեր</i>
	<i>Չեխեր</i>
Իրանցիներ	<i>Բուլղարներ</i>
	<i>Տաջիկներ</i>
	<i>Ոսեր</i>
	<i>Թաթեր</i>
	<i>Թալիչներ</i>
	<i>Քյուրդեր</i>
Այլ ցեղեր	<i>Պարսիկներ</i>
	<i>Գերմանացիներ</i>
	<i>Հուգներ</i>
	<i>Բուշաներ</i>
	<i>Մոլդավացիներ</i>



II. Անմիտներ—Հրեաներ

III. Հաբերականեներ—Հարեթական-հնդկալեվրոպացիներ՝ հայեր, Կովկասյան հարեթականներ՝ քարթվելներ, մեգրելներ, աբխազներ, կաբարդիններ, ադիգե (չերքեզներ), չեչեններ, լեզգիններ, դարգինցիններ:

IV. Ֆիննա-ուգրեր—Արեվմտյան յեկ նյաւսիսային Ֆիններ՝ կարելներ լոպարներ:

Վոլգյան Ֆիններ՝ մորդվա, մարի (չերեմիսներ), Հլուսիս-արևելյան գիններ՝ կոմի (զիրյացիներ), վրտյակներ, պերմյակներ: Ուգրեր—ոստիակներ, վոգուլներ:

V. Սամանդներ:

VI. Թյուրքեր—Հյուսիս-արեվմտյան չուվաշներ, ալտայցիներ, կարաչալցիներ, բալկարներ, նողայցիներ, բաշկիրներ թաթարներ, կազակներ, կարաւակալակներ, ղըրղըզներ, (կիրդիզներ):

A IV/533

Հարավ. արեվմտյան՝ ադրբեջանցիներ, թուրք-
մեններ:

Հարավ արեվելյան՝ ուղբեկներ:

Հյուսիս-արեվելյան՝ յակուտներ:

VII. Մոնղոլներ — Բուրյատներ, զալմուխներ:

VIII. Ցունգուս-մանջուրներ — Ցունգուտներ, գոլգեր:

IX. Հին Ասիացիներ — չուկչ կորյակներ, կամչադալներ, գիլյակներ, ալեռուտներ:

X. Հեռավոր արեվելյի կույսուրական ժողովուրդներ — չինացիներ, յապոնացիներ, կորեյացիներ*):

ԽՍՀՄ-ի բնակչության թիվը 1926 թ. մարզահամարի տվյալների համա-
ձայն ԽՍՀՄ-ի բնակչության թիվն է մոտ 147
միլիոն, վորը կազմում է ամբողջ աշխարհի
քնակչության (1922 միլիոն) $\frac{1}{13}$ մասը կամ 8% -ը: Բնակչության
քանակով մեր յերկիրը յետ է մնում միայն Անգլիայից (հաշված և գա-
ղությունը) և Չինաստանից:

**ԽՍՀՄ-ում ամեն մի քառակուսի կիլոմետր
խտության տարածության վրա միջին հաշվով 7 մարդ և
ապրում: Այս խտությունը մոտ յերկու անգամ
պակաս է ամբողջ յերկրագնդի բնակչության միջին խտությունից: Բնակչության այսքան աննշան խտության պատճառն այն է, վոր մեր յերկրում բնակչության համար անհարմար տեղեր շատ կան, որինակ, տունդրաները, վորտեղ կարելի յետ անցնել հարյուրավոր կիլոմետր և մարդու չհանդիպել. Միքրի խուլ տայգաները, Միջին Ասիայի անապատները և այլն: ԽՍՀՄ-ի բնակչության նոսրության յերկրորդ պատճառն արդյունագործության հետամնացությունն է և զրա հետ կապված քաղաքաների և քաղաքային բնակչության թույլ զարգացումը: Միության Յեվրոպական մասի ամենախիտ բնակված վայրերն են՝ Ռուսական պետություններից. այսպես, որինակ, Յելզիայի բնակչության խտությունն է՝ 260 մարդ 1 քառ. կիլոմ վրա, Անգլիայի՝ 186 իտալիայի՝ 130, Գերմանիայի՝ 136, Ֆրանսիայի՝ 74:**

ԽՍՀՄ-ի Ասիական մասում, ուր արդյունագործությունը զարգացած չե և քաղաքային կյանքն ել հետամնաց և, բնակչության խտու-

*): Բնակչության բազմազանությամբ ԽՍՀՄ-ին գերակառում է միայն Անգլիան ու Բներով:

Քյունն ավելի ևս աննշան ե. որինակ, Կազակստանում (Կասպից ծովից դեպի արևելք) 1 քառ. կիլոմետր տարածության վրա 2 մարդ և ապրում, իսկ յակուտական հանրապետության մեջ (Արևելյան Սիբիրում) 14 քառ. կիլոմետր տարածության վրա 1 մարդ և ապրում: Եսուր բնակչություն ունեն նաև Թուրքմենստանի չոր տափաստանները: Անդրկովկասի բնակչության միջին խտությունը կազմում է մոտ 30 մարդ ամեն մի քառ. կիլոմետր տարածության վրա:

ԽՍՀՄ բնակչություն բնական շարժումը—Վորևել լերկրի բնակչության մասին գաղափար կազմելու համար բավական չեն իմանալ թե այսինչ թվականին բնակչության մեծությունը վորքան եր. անհրաժեշտ և իմանալ նաև թե այդ բնակչությունն ինչ արագությամբ և աճում: Դրա համար պետք ե ծանոթանալ բնակչության բնական շարժման, այսինքն՝ տարեկան ծնվածների, մեռածների և դրանց տարբերության (աճման) հետ:

Պատերազմից առաջ ծնվածների և մեռածների թիվը ամեն 1.000 բնակչի դիմաց կազմում եր.

	Ծնված	Մեռած	Աճում
Թուրաստանում	44,1	27,2	16,9
Դերմանիալում	34,8	19,9	14,9
Անգիայում	28,1	16,0	12,1
Մ. Նահանգներում	23,7	13,1	10,6
Ֆրանսիալում	21,3	19,5	1,8

Այս աղյուսակից լերնում ե, վոր ԽՍՀՄ-ի բնակչությունը բավական արագ և աճում: 1925 թ. տվյալների համաձայն 1.000 մարդուն ընկնում է 46,97 ծնված և 25,86 մեռած: աճումը 21,11:

Ընդունելով, վոր ամեն 1.000 մարդուն տարեկան ավելանում և մոտ 20 մարդ. հաշվեցնեք թե ԽՍՀՄ-ի բնակչությունը վերքան կլինի 10 տարի հետո:

ԽՍՀՄ-ի հաղաբային յեկ զյուղական ազգաբնակուրյունը.—Մեր լերկրը գյուղատնտեսական լերկրի ե, ալիքնքն՝ բնակչությունը գյուղատնտեսությունից ափելի մեծ արդյունք և ստանում, քան արդյունագործությունից: 1925/26 թ. Միության ընդհանուր պրոդուկցիայի $\frac{1}{3}$ -ը ստացվել ե գյուղատնտեսությունից: Այդ պատճառով ԽՍՀՄ-ի բնակչության մեծ մասն ապրում ե գյուղերում, իսկ փոքր մասը՝ քաղաքներում: 147 միլիոն մարդուց 121 միլիոնը կամ $820/0$ -ը կազմում է գյուղական բնակչությունը, իսկ 26 միլիոնը կամ $180/0$ -ը՝ քաղաքային:

Անգլիայում և Գերմանիայում հակառակ պատկերն եւ քաղաքների բնակչությունը գլուղականից մեծ եւ:

ԽՍՀՄ-ի ամեն մի քաղաքացի վորոշ հասանարմիր բանակը կում պարտավոր եւ ծառայել Կարմիր բանակում 2 տարի, իսկ ողալին և ծովային նավատորմիդում, 3—4 տարի:

1925 թվին Կարմիր բանակը կրճատվեց և կարմիր բանակայինների թիվը հասավ 562 հազարի: Այսպիսով 240 բնակչին ընկնում եւ մի կարմիր բանակային, այնինչ մեր հարեան լերկրներում Արևմտաքում 70—80 բնակչին ընկնում եւ մի զինվոր: Մեր ցամաքալին սահմաններում ամեն մի կիլոմետր տարածության վրա ծառայում են 30 զինվորական, իսկ հարեան պետություններում՝ Ռումինիայում 100 մարդ, Լեհաստանում՝ 87 մարդ: Զորքի համար յեղած ծախսը պետության ամենախոշոր ծախսերից մեջն եւ և պետական բլուզելի համար մի ծանր բեռ եւ հանդիսանում է: Ներկայումս ԽՍՀՄ-ում զորքի պահպանության համար ծախսվում եւ պետական բլուզելի $16,9\%/_0$ -ը այնինչ Լեհաստանում այդ ծախսը կազմում եւ պետական բլուզելի $39\%/_0$ -ը Ռումինիայում՝ $30\%/_0$ -ը, փոքրիկ Եստոնիայում՝ $25\%/_0$ -ը:

ԽՍՀՄ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏ

1. **ԽՍՀՄ-ի քաղաքական քարտեզի վրա ցույց տվեք Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը (ԽՍՖՀ):** Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերը. Խորհրդ. Հանրապետությունը (ԽՍՖՀ), Բելոռուսիայի ՍԽՀ (ԲՍԽՀ), Ուկրաինայի ՍԽՀ (ՈՒԽՀ), Ուգրեկստանի ՍԽՀ և Թուրքմենստանի ՍԽՀ:

2. Գտեք այդ հանրապետություններից յուրաքանչյուրի սահմանները և գլուխոր քաղաքը:

3. Ցույց տվեք, Կարելիայի Խնքնավար ՍԽՀ-ն, Բաշկրիայի ԽՍԽ-ն, Կազակաստանի ԽՍԽ-ն, Բուրյաս-Մոնղոլական ՍԽՀ-ն, Յակուտական ԽՍԽ-ն.

Ցարական Ռուսաստանում իշխողը վելիկոուսներն եյին, մասցած ազգությունները տարրական իրավունքներից զուրկ եյին: Հոկտեմբերյան հեղափոխությունը հայտարարեց, վոր բոլոր ազգությունները հավասար են և ինքնորություն իրավունք ունեն: Այդ ազգությունները կազմեցին ալյանս կոչված Միուրենական հանրապետուրյուններ (որինակ, ուկրայինացիները, բելոռուսները և ալլն), ինենավար հանրապետուրյուններ (որինակ, կարելները կազակները (կիրգիզները), յակուտները, Ղրիմի թուրքերը և ալլն) և ինենավար տղաներ (որինակ, ինգուշները, զիրլացիները, ոսերը, դալմուխները և ալլն):

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հեռացալ յոթ հանրապետությունների միությունն ե.

1. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ՌՍՖՌՀ).

2. Ուկրաինական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՈՒԽԽՀ).

3. Ասդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ).

4. Բևեռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ԲՍՖԽՀ).

5. Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (Ուզբեկստան).

6. Թուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (Թուրքմենստան).

7. Տաջիկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (Տաջիկստան)*.


ԽՍՀՄ-ի հիմնական սահմանադրությունը (կոնստիտուցիան) ընդունվեց Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեի յերկրորդ նստաշրջանում 1923 թ. հուլիսի 6-ին և հաստավեց ԽՍՀՄ-ի խորհուրդների II համագումարում 1924 թ. հունվարի 31-ին:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միացումը կամավոր ե. ամեն մի հանրապետություն իրավունք ունի Միությունից դուրս գալու, յեթե ցանկանա, վորովհետեւ, ինչպես ասացինք, Հոկտեմբերյան հեղափոխությունը ազգերի ինքնորոշման իրավունքը ճանաչեց. բայց այդ հանրապետություններից յուրաքանչյուրը փոխանակ Միությունից դուրս գալու, անջատ, անկախ պետություն կազմելու ձըգառում և ավելի ևս ամրացնելու իրենց միությունը. Ամեն մի նոր սոցիալիստական հանրապետություն, վորը կարող է ապագայում առաջնայի, նույնպիս կընդունվի Միության մեջ:

ԽՍՀՄ-ն աշխատավորների պետություն ե. կտավիտալիստների, կալվածատերների և թագավորների իշխանության փոխարեն այստեղ հաստատվել ե բանվորների և գյուղացիների իշխանությունը, խորհրդային իշխանությունը:

ԽՍՀՄ-ի իշխանության բարձրագույն որդանը Խորհուրդների Համամիուրենական Համագումարն ե, վորը գումարվում է տարեկան մեկ անգամ: Խորհուրդների Համագումարը քննում է զեկուցումներ կառավարության գործունելության մասին, հաստատում է բյուջեն և ընտրում ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (ԽՍՀՄ-ի 8ինը), վորը

բաղկացած և Միութենական Խորհրդից և Ազգույրյունների Խորհրդից
Միութենական Խորհուրդն ընտրվում է ԽՍՀՄ-ի Խորհուրդների
Համագումարում:



Նկ. 6. Մ. Ի. Կալիխին, Կենտգործկոմի
առաջին նախագահը

գումարը, վորը գումարվում ե տարեկան մեկ անգամ և լսում ե զե-
կուցում իր կառավարության մասին,
հասաւատում ե իր բյուջեն և ընտրում
ե իր կենտրոնական գործադիր կոմի-
տեն: Կենտրոնական գործադիր կոմի-
տեն ընտրում ե կատարողական իշխա-
նության բարձրագույն որգանը—ժո-
ղովրդական կոմիսարների խորհուրդը:
ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը Մոսկ-
վան ե.

ԽՍՀՄ-ի պետական դրուսակը կար-
միր կամ ալ գույն ունի և վրան նկար-
ված ե պետական զրոշմը:

ԽՍՀՄ-ի պետական դրուսակը մուրճ ու մանգաղն ե. յերկրագնդի-

Ազգությունների Խորհուրդը
կազմված ե միութենական և
ինքնավար հանրապետություն-
ների և ԽՍՀՄ-ի ինքնավար շրր-
ջանների ներկայացուցիչներից և
հաստատվում ե ԽՍՀՄ-ի Խոր-
հուրդների Համագումարում:
ԽՍՀՄ-ի կենտրոնական Գոր-
ծադիր Կոմիտեն (Կենտգործկոմը)
հրատարակում ե զեկրետներ և
վորոշմներ, նշանակում ե ժո-
ղովրդական կոմիսարներ, վորոնք
կազմում են Ժողովրդական Կոմի-
տենների Խորհուրդ (Ժողովրդխորհ):

Ժողովրդական Կոմիսարների
Խորհուրդը ԽՍՀՄ-ի գերազույն
կատարողական որգանն ե:

Ցուրաքանչյուր միութենա-
կան կամ ինքնավար հանրապե-
տություն ունի իր գերազույն
որգանը—խորհուրդների համա-



Նկ. 7. Պետական զրոշմ:

վրա դըռշմված, շրջապատված հասկերով և մակագրված «Պրոլետար-ներ բոլոր լերկրների, միացնեց» արտահայտությունը, հետեւալ վեց լեզուներով՝ ռուսերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, թուրքերեն, հայերեն և վրացերեն:

ԽՍՀՄ-ի ԲՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

ԽՍՀՄ-ի Քիզլերական բարտեղի վրա ցույց տվեց ուրալյան լեռնաշղթան և Ուրալ զեաը (վերջինս թափվում է Կասպից ծովը):

Գտեք ԽՍՀՄ-ի այն մասը, վորը տարածվում է Կասպից ծովից դեպի արևելք. այստեղ հոսում են Ամու-զարիխ և Սիբ-զարիխ գետերը:

Ցույց տվեր կումա գետը, Մանիչ լիճը (վերջինս գտնվում է Կումայի գետաբերանից դեպի արևմուտք, փոքրիկ յերկարավուն լիճ ե):

Խնչանս տեսանք ԽՍՀՄ-ի մի մասը գտնվում է Յեվրոպայում, իսկ մյուսը՝ Ասիայում:

ԽՍՀՄ-ի այն մասը, վոր գտնվում է Յեվրոպայում, կոչվում ե ԽՍՀՄ-ի Յեվրոպական մաս, իսկ այն մասը, վոր գտնվում է Ասիայում՝ Ասիական մաս:

Յեվրոպական մասը Ասիականից բաժանվում է Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով յեվ Կումա-Մանիշյան ցածրությամբ:

Կումա-Մանիշյան ցածրությունը սկսում է Կումայի գետաբերանից և Մանիչի վրայով հասնում է մինչև Աղովի ծովը. Այս ցածրության տեղը մի ժամանակ նեղուց է յեղել, վորով Սև և Աղովի ծովերը միանում ելին Կասպից ծովի հետ:

ԽՍՀՄ-ի Ասիական մասն իր հերթին բաժանվում է յերեք մաս-սի—Սիբիր, Կովկաս և Թուրքիստան կամ Միջին-Ասիա:

Սիբիրը բռնում է Ասիայի հյուսիսային մասը: Նա տարածվում է Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոսը և Հյուս. Բնեուային ծովերը մինչև Չինաստան և Մոնղոլիան:

Թուրքիստանը գտնվում է Կասպից ծովի արևելյան կողմը, Արալյան և Բալխաշ լճից հարավ մինչև Աֆղանստանի և Պարսկաստանի սահմանը:

Կովկասի սահմաններն են՝ հյուսիսից Կումա-Մանիչի ցածրությունը, արևելքից՝ Կասպից ծովը, արևմուտքից՝ Սև ծովը, իսկ հարավից—Թյուրքիան և Պարսկաստանը: Կովկասյան լեռնաշղթայով ամբողջ Կովկասը բաժանվում է յերկու մասի—Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս:

ՄԵՆՔ ապրում ենք ԽՍՀՄ-ի ասիական մասում:

Սօխառանել. — ԽՍՀՄ-ի համը քարտեզի վրա կարմիր գծով անցկացրեք ԽՍՀՄ-ի բնական մասի սահմանները: Անդրկովկասի տեղը վորեն դույնով ներկեցեք ապա նշանակեցեք Յերևան, Թիֆլիս, Բագու և Բաթում քաղաքի անունները:

II. ԿՈՎԿԱՍ

Կովկասը մի լայն պարանոց է, վոր ընկած և Սև և Կասպից ծովերի միջև:

Նրա հյուսիսային սահմանը, ինչպես տեսանք, կազմում Կումա-Մանիշյան ցածրությունը, իսկ հարավային սահմանը՝ Պարսկաստանը և Թիուրքիան: Այս սահմաններում Կովկասը բռնում է մոտ 400 հազար քառակուսի կիլոմետր տարածություն:

Կովկասիտն լեռներով ամբողջ Կովկասը բաժանվում է յերկու մասի՝ Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս:

Ա. ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

ԱՇԽԱՏԱՆՔ ՔԱՐՏԵԶԻ ՀԵՏ

1. Անդրկովկասի քարտեզի վրա գտեք ձեր բնակավայրը յեթե նա նշանակված չէ, այն գեպքում գտեք ձեր մոտակա քաղաքը:

2. Ցույց տվեք Կովկասյան լեռները, Սև և Կասպից ծովերը, Թիուրքիան և Պարսկաստանը:

3. Գտեք Յերևանը, Բագուն, Թիֆլիսը Մասշտաբով իմացեք թե Բաթումից մինչև Բագու քանի կիլոմետր են:

4. Համաշխարհային քաղաքական քարտեզի վրա գտեք Անդրկովկասի տեղը (Աշխարհագրական ատլաս):

Անդրկովկասը տարածվում է Կովկասյան լեռնաշխալից մինչև Պարսկաստանի և Թիուրքիայի սահմանները և Սև ծովից մինչև Կասպից ծովը:

Հյուսիսային սահմանն սկսվում է Գագրայի մոտից (Սև ծովի ափին), ապա Կովկասյան լեռնաշղթայով անցնում է դեպի հարավ-արևելք, բայց Բագու չհասած ծովում է գեպի հյուսիս-արևելք և Սամուր գետի վրայով հասնում մինչև Կասպից ծովը:

Հարավային սահմանն սկսվում է Սեվ ծովից, Բաթումից փոքր ինչ հարավ (Մարպ գյուղի մոտ) և կտրելով ծորոխ գետը, հասնում է

մինչև Ախուրյանը, այնուհետև Ախուրյանի և Արաբսի վրայով ուղղվում է դեպի արևելք և Կասպից ծովը Հասանծ ծովում և դեպի հարավ ու Թալիսի լեռների վրայով հասնում և մինչև Կասպից ծովը (Աստարացի մոտ, Լենքորանից փոքր ինչ հարավ):

Արևելյան սահմանն կազմում է Սև ծովը, իսկ արևմտյանը՝ Կասպից ծովը:

Աօխատանիք.—Անդրկովկասի համբ քարտեզի վրա Անդրկովկասի հյուսային և հարավային սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք:

Այդ քարտեզի վրա համապատասխան տեղերում զեցեք Խովկասայան լոռեացլրա, Սևկ ծով, Կասպից ծով, Սամուր, Աստարա, Արաբս, Ախուրյան, Բարում, Թյուրքիա յիև Պարսկասան անունները:

Անդրկովկասը բաղկացած է հետեւյալ հանգամանքություններից.
Անդրկովկասի վարչական բաղետություններից.

1. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետուրյուն (Խորհրդայնացավ 1920 թ. նոյեմբ. 29-ին):

2. Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետուրյուն (Խորհրդայնացավ 1921 փետրվ. 25-ին):

3. Ադրբեյջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետուրյուն (Խորհրդայնացավ 1920 թ. ապրիլի 28-ին):

Այս լերեք հանրապետությունները միանալով իրար հետ կազմել են Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետուրյունը, զորն իր հերթին մտնում ԽՍՀ Միության մեջ:

Վրաստանի Սոց. Խորհրդային Հանրապետության մեջ, բացի բուն Վրաստանից, մտնում են նաև Աբխազիայի, Աջարստանի հանրապետությունները և Հարավային Ռուբրիայի ինքնավար տրանսպորտային մեջ՝ Դարձաբարդի ինքնավար տրանսպորտային մեջ՝ Սև Հանրապետուրյան մեջ՝ Դարձաբարդի ինքնավար տրանսպորտային մեջ՝ Սև Հանրապետուրյունը:

Ամբողջ Անդրկովկասի Սֆեն Հանրապետության մայրաքաղաքը Թիֆլիսն է, վորը միևնույն ժամանակ Խորհրդային Վրաստանի կենտրոնն է:

Անդրկովկասի Սֆես Հանրապետուրյան մեջ մտնող հանրապետու-
թյունների մակերեվույրի մեծուրյունը յեզ բնակիչների թիվը

	<i>Մակարդակի մեծությունը քառ. կիլոմետր</i>	<i>Բնակչությունը թիվը</i>	<i>Վարչական կենտ- րոնը (մայրա- քաղաքը)</i>
I. Վարասանի Սիսէ .	69.525	2.666.000	Թէֆլիս
Դրա մեջ			.
ա) Արևագիայի Սիսէ .	8.254	199.000	Սուխում
բ) Աջարստանի ինքն. Սիսէ	2.912	129.000	Բաთում
գ) Հարավ. Ռուբէտյի ինքն. շրջան . . .	3.911	87.000	Ցինվալ
II. Հայաստանի Սիսէ .	29.964	881.000	Յերևան
III. Աղրքիջանի Սիսէ .	85.968	2.315.000	Բագու
Դրա մեջ			
ա) Խոբն. Ղարաբաղ .	4.161	130.000	Ստեփանակերտ
բ) Նախիջևանի Սիսէ .	5.988	104.000	Նախիջևան
Ընդամենը՝	185.457	5.862.000	

Աւօխատանք. — Անդրկովկասի համը քարտեղի վրա հանրապետություն-ները ներկեցներ տարբեր գույներով: Նշանակեցներ գլխավոր կենտրոնները:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԾԼԱԾԱ. Ա. Ք. ՔԱՐԵՑՅԱՋ. Վ. ՐԱ.

1. Գաշտավայրը գունատիպ քարտեղի վրա լինչ գույնով են նշանակում: Անդրկովկասի քարտեղի վրա ցույց տվեք Անդրկովկասի դաշտավայրերը (աշխարհագրական ստուան):

2. Գտեք Սևանա լիճը և Արտածածը: Սևանա լճի շուրջն ինչ լեռներ կան:

Անդրկովկասի մակերեւություն շատ քազմազան ե. այստեղ կարելի յետեսնել և բարձր ձյունապատ լեռներ, և խոր հովիտներ ու ձորեր, և ընդարձակ դաշտավայրեր, և բարձրավանդակներ:


Անդրկովկասի հյուսիսալին մասով Սև ծովից մինչև Կասպից ծովը անցնում ե Կովկասյան լեռնաշղթան, վորի հարավային լանջերը գտնվում են Անդրկովկասում: Նա սկսվում ե Տամանի թերակղզուց

աննշան բարձրություններով, հետզհետե բարձրանում ե և իր միջին մասում հասնում ե ալնպիսի բարձրության, վոր բազմաթիվ գագաթներ ծածկված են հավերժական ձյունով։ Ալղափիսի ձյունապատ գագաթներից նշանավոր են Ելբրուսը (5,629 մետր բարձրությամբ), Դիխսառուն (5,198 մ.), Կոչսան-տառուն (5,145 մետր), Կաղըրիկը (5,043 մետր) և այլն։ Կաղըրեկից դեպի արևելք շղթան կրկին ցածրանում ե և Բագվի մոտ հավասարվում դաշտավայրի հետ։ Այն հսկայական քանակությամբ ձյունը, վոր կուտակվում ե սարերի վրա, ցերեկները արևի ճառագայթներից հալվում ե, իսկ գիշերները սառչում և ընգարծակ տարածություններ սառցադաշտերով ծածկում։ Ալղ սառցադաշտերը տեղ-տեղ ցած են իջնում և հալվելով գետեր առաջացնում։ Ունենալով հսկայական բարձրություն, Կովկասյան լեռնաշղթան բավական դժվարանցանելի լի, միջին բարձր մասում զոյություն ունեն, միայն յերեք հարմար լեռնանցք, վարոնցով Անդրկովկասից կարելի լի չլուս։ Կովկասանցները Այդ լեռնանցքներից ամենակարենը Կրեսովի լեռնանցքն է, վոր գտնվում ե, 2,379 մետր բարձրության վրա։ Նրա վրայով անցնում ե գեղեցիկ ռազմավիրական խնուղին, վորով Թիֆլիսը միանում ե Վլադիկավկաղի հետ։ Յերկրորդ տեղը բըռնում և Մամիսոնի լեռնանցքը (2,825 մետր), վորով անցնում ե Ռազմասական ճանապարհը (Քու-




Նկ. 8. Կովկասյան լեռնաշղթայի մասնակի հանգիստ հանգիստ

թայիս - Վլադիկավկազ), Կուտխորի լեռնանցքով կարելի յեւ Սուխումից անցնել Բատալպաշինսկ:



Նկ. 9. Հավերժական ձյունից գոյացել են սառցազաշանը, վորոնք սարի լանջերով յած են իջնում.



Նկ. 10. Ռազմավերական ճանապարհը կազբեկի մոտ.
Կովկասյան լեռնաշղթալից գեղի հարավ գտնվում են յերկու

մեծ հարթություններ, վորոնցից մեկը կուր գետի միջին և ոտորին հոսանքով տարածվում ե մինչև կասպից ծովը և կոչվում ե Մերձկասպյան դաշտավայր, իսկ մյուսը Միոնի լերկարությամբ ձգվում ե մինչև Աև ծովը և կոչվում ե Սևվծովյան դաշտավայր:

Մերձկասպյան և Սևծովյան դաշտավայրերից դեպի հարավ յերկիր կրկին բարձրանում ե և կազմում մի չափազանց լեռնուտ աշխարհ վորը հայտնի յե Փաքր Կովկաս անունով, Նա բաղկացած ե բազմաթիվ շղթաներից, լեռնահովիաներից ու կիրճերից, առանձին-առանձին բարձրավանդակներից, վորոնցից շատերը շրջապատված են լեռներով։ Այսաեղ-այստեղ բարձրանում են հանգած հրաբուխներ, վորոնք միաժամանակ իրենց դագաթից վիժել են հրահեղուկ լավա ու մոխիր և ծածկելով հովիտները՝ բարձրավանդակներ առաջացրել. արդակն են առաջացրել, որինակ՝ Սևանա, Լոռու, Ղարաբաղի, Շիրակի բարձրավանդակները, վորոնք այժմ ծածկված են սառած լավայի քարալին հաստ շերտով։

Այժմ ծանոթանանք Փոքր Կովկասի գլխավոր շղթաներին։ Փոքր Կովկասը Սուրամի լեռներով միանում ե գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի հետ։ Այդ լեռներով ամբողջ Անդրկովկասը սովորաբար բաժանում էն յերկու մասի Արեվմտյան Անդրկովկաս և Արեվելյան Անդրկովկաս։ Սուրամի լեռների հարավային ծալքից, վորտեղ գտնվում ե Բորժոմի գեղեցիկ կերճը, սկսվում ե յերկու լեռնաշղթա. մեկը գնում ե դեպի Թիֆլիս և կոչվում ե Թրիալերի լեռներ, իսկ մյուսը՝ ուղղվում ե դեպի Աև ծովը և կոչվում ե Աջարա-Ախալցիխայի լեռներ։ Այդ շղթաների լանջերը ծածկված են փշտերեւ և սաղարթավոր խիտ անտառներով, վորտեղից կուր գետի վրայով ամեն տարի ահազին քանակությամբ գերաններ են փոխադրում դեպի Թիֆլիս։

Թրիալեթի լեռներից հարավ միջորեսական ուղղությամբ ձգվում են խոնավ լեռները, վորոնց լանջերը ծածկված են հարուստ արոտատեղերով։


Խոնավ լեռնաշղթալի միջին մասից սկսվում են Վրահալոց լեռները, վորոնց ամենաբարձր գագաթը՝ Լալվարն ունի մոտ 2,500 մետր բարձրություն։

Խոնավ լեռների հարավային ծալքից՝ Ղարախաչի լեռնանցքից սկսվում Թզովդալի շղթան, վորը տարածվելով հարավ-արևելյան ուղղությամբ վերջանում ե Դալի-դաղ գագաթով (Աղստեվ գետից արեվելք)։ Փամբակ գետը, հոսելով այդ շղթային ուղղահայաց, կարում ե նրան և առաջացնում մի խոր կիրճ, վորի միջով անցնում ե յերկաթուղին։

Զաջուռի լեռնանցքից, Բզովդալի գուգահեռ, տարածվում են Փամբակի լեռները, վորոնց ամենամեծ գագաթներից մեկը Մայմեխը, մոտ 3.000 մետր բարձրություն ունի. Սևանա լճի հյուսիսային անկյունում Փամբակի լեռները վերջանում են Սեմեոնովկալի լինանցքով և սկսվում ե Նամդաղ լեռնաշղթան, վորը շրջապատում է Սևանա լիճը արևելյան կողմից: Նույն լճի արևմտյան ափերով ձգվում է Ահմանգանի կամ Գեղամա լեռները: Սևանից հարավ համարյա իրար զուգահեռ մինչև Արաքս ձգվում են Դարբարդի (կամ Արցախի) և Զանգեզուրի (կամ Սյունիաց) լեռները: Սյունիաց լեռներից դեպի արևմուտք ուղղվում են Դարալազյաղի (կամ Դարվո) լեռները:

Հիշյալ բոլոր լեռները հարուստ են ալպյան արոտատեղերով, վորոնք կարեոր նշանակություն ունեն մեր յերկրի անասնապահության համար: Բայց ավելի կարեոր ե այն դաշտերն ու հովիտները, վորոնք տարածվում են լեռների արանքում և ծածկված են վարելահողերով ու ալգիներով:

Անդրկովկասի սարանարերը: Ամբողջ Փոքր Կովկասը ներկալացնում ե մի ընդարձակ բարձրավանդակ, վորը՝ այս ու այն կողմը գնացող շղթաներով՝ բաժանվում ե առանձին սարահարթերի և հովիտների:



Նկ. 11. Արագած.

Թրիակեթի լեռներից դեպի արևմուտք գտնվում ե Ախալքալակի սարահարթը, վորի միջին բարձրությունն է 1,800 մետր: Խոնավ լեռ-

ների արևելյան կողմն ընկած և Նալիտն, վորը վոռոգվում և Խրամի վերին հոսանքով:

Վրահայոց և Բղովդալ լեռների միջև տարածվում է Լոռին, վորի միջով հոսում ե Զորագետը, Բղովդալից հարավ գտնվում է Փալբակի նովիտը, վորտեղ գտնվում են Ղարաքիլիսան, Համամլուն և այլն: Փամբակի հովտից Զաշուռի լեռնանցքով կարելի է դուրս գալ Շիրակ, վորը Ախուրյանի և Արագածի արանքով տարածվում է դեպի հարավ:

Ախուրյանից մինչև Գեղամո լեռների ստորոտները և Արագածից մինչև Արաքսը տարածվում է Արարատյան դաշտը, վորը ծածկված է խաղողի ալղիներով, բամբակի և բրնձի ցանքսերով և կազմում է Խորճային Հայաստանի սիրտը: Այս դաշտում ե գտնվում Հայաստանի մալրաքաղաք՝ Յերևանը:

Սևանա լճի ափին տարածվում է Սևլանա բարձրավանդակը, վորը շրջապատված է Հարավային Սևանի, Ահմանդանի և Շահ-դադ լեռներով:

Սարահարթեր կան և Հարաբաղում ու Զանգեզուրում, բայց գրանք կտրտված են խոր ձորերով կամ հովիտներով, իսկ այստեղ-այնտեղ բարձրանում են բազմաթիվ հանգած հրաբուխներ:


ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԼԻՄԱՆ

Անդրկովկասի կլիման շատ բազմազան է: Այստեղ պատահում են մշտադալար անտառներով ծածկված վայրեր, ընդարձակ չոր տափաստաններ, հավերժական ձյունով ծածկված գագաթներ և այլն:

Կլիմայի ալղ բազմազանությունը բացատրվում է նրանով, վոր Անդրկովկասի հարավային և արևելյան կողմը գտնվում են ընդարձակ չոր լեռներով, վորտեղից նա խոնավություն չի ստանում: Արեմայտն կողմը փռվում է Սկ ծովը, վորը միացած է Ատլանտյան Ովկիանոսի հետ: Արևմուտքից փչում են խոնավ քամիներ, վորոնք վոռոգում են գլխավորապես Անդրկովկասի արևմտյան մասը:

Անդրկովկասի կլիմայի բազմազանության վրա մեծ ազդեցություն ունի մանավանդ տեղի բարձրությունը ծովի մակերեսութից: Ծովի մակերեսութից ունեցած բարձրության համեմատ ամբողջ Անդրկովկասը բաժանվում է մի քանի զոնաների՝ ստորին զոնա (մինչև 600 մետր բարձրության) կազմում ե ամբողջ Անդրկովկասի մակարդակի 43, 10/0, միջին զոնա (600—1,800 մ.)—55, 80/0, վերին զոնա (1800 մետր. 21, 10/0: Ցածը տեղերից բարձրանալով բարձր սարերի գագաթները բարձր)՝ մենք հանդիպում ենք տարբեր կլիմաների:

Սև ծովլյան դաշտավայրն ունի խոնավ և տաք կլիմա։ Ալստեղ մթնոլորդային տեղումները հասնում են մինչև 2.500 միլիմետրի (կամ $2\frac{1}{2}$ մետրի)։ Դա ցուց է տալիս, վոր է թիւ անձրևներից առաջացած ջրերը վոչ ծծվեն և վոչ ել գոլորշիանան, այն դեպքում գետինը՝ մեկ



ար. 12. Հովհաննես միջնորդական տեղումները.

տարգա մեջ կծածկվի $2\frac{1}{2}$ մետր խորություն ունեցող շերտով։ Սև ծովի ափից գեպի Սուրամի լեռները մթնոլորդային տեղումները հետզհետեւ պակասում են, այսպես՝ Փոթի քաղաքում նրանք կազմում են 1.626 միլիմետր, Ախալի-Սենակում՝ 1.511, Քութալիսում՝ 1.374, Ճիաթուրալում՝ 1.002 և Սուրամում 621 միլիմետր։

Սե-ծովլան դաշտավալրի կլիման աչքի լե ընկնում նաև իր տառությամբ: Հունվարի միջին բարեխառնությունը կազմում է + 30-ից մինչև + 40, իսկ հուլիսինը՝ 230-ից մինչև 250:

Մերձկասպիան դաշտավալրը չոր կլիմա ունի, վորովհետեւ Սուրամի Ախալցխալի լեռների պատճառով արևմտյան խոնավ քամիները չեն կարողանում խոնավություն հասցնել նրան, իսկ Կասպից ծովի ազգացությունն ել մեծ չե (բացառություն կազմում է Լենքորանի շրջանը): Յեթե Սուրամի լեռներից շարժվենք գետի Կասպից ծովը, կտեսնենք, վոր մթնոլորտային տեղումները հետզհետեւ պակասում են, ինչպես այդ յերեսում են հետեւյալ ազդուսակից:

Սուրամ	621	միլիմետր.
Թիֆլիս	496	»
Դարալաղ	431	»
Գանձակ	255	»
Բաղուտ	228	»

Այստեղից յերեսում են, վոր Արևելյան Անդրկովկասն ընդհանրապես չոր կլիմա ունի: Մերձկասպիան դաշտավալրի մթնոլորտային տեղումների միջին քանակը կարելի լե ընդունել 200—300 միլիմետր, իսկ դաշտավայրը շրջապատղ այն բարձրավանդակներում, վորոնք փոփում են Կովկասիան լեռնաշղթալիք Փոքր Կովկասի ստորոտներում այդ տեղումները հասնում են 400—500 միլիմետրի:

Մերձկասպիան դաշտավալրում ամառը խիստ շոգեր են լինում: Հուլիսի միջին բարեխառնությունը 250-ից ել անցնում ե, բայց ձմեռը համեմատաբար մեղմ ե (հունվարի միջին բարեխառնությունը լինում է 00—20, յերեխն ել պակաս): Ձևուն քիչ ե գալիս և խոր շերտով չե նստում, այդ պատճառով ընակիչներն ամբողջ ձմեռն իրենց անսառուն-ներն արածեցնում են այդ ընդարձակ տափաստաններում: Գարնան սկզբներին տափաստանները կանաչում են, բազմաթիվ թուչուններ ի-ըենց յերգով կենդանություն են տալիս նրանց ևանասունների բազմաթիվ հոտեր առատ սնունդ են ճարում: Բայց ահա գալիս ե ամառը, դաշտերի խոտը խանձվում ե և քրչվորն իր անսառունների հետ շտապում ե հով սարերը բարձրանալ: Պարզ ե, վոր ալսպիսի չոր յերկրու. մ յերկրագործությունն առանց արհեստական վոռոգման արդյունք չի տա: Ալդ ե պատճառը, վոր բնակիչները բնակություն են հաստատում գլխավորապես գետափերին և արհեստական ջրանցքների միջոցով վոռոգում են իրենց ալգիներն ու դաշտերը:

Փոքը կովկասի կլիման ցամաքային ե. Ամառը համեմատարար տաք ե (հուլիսի միջին բարեխառնությունը $+16^{\circ}$ -ից մինչև 19° ե), իսկ ձմեռը խիստ և գետինը ծածկվում ե ձյունի հաստ շերտով: Մթնոլորտային տեղումները կազմում են 300—700 միլիմետր: Փոքը կովկասի ամենաչոր մասը Արարատյան դաշն է: Զմեռվա ընթացքում շրջապատող բարձր սարահարթներից ցուրտ ողն իջնում և զեպի Արարատյան դաշտը և իջեցնում նրա բարեխառնությունը. հունվարի միջին բարեխառնությունը մոտ -6° ե: Ամառն, ընդհակառակը, շատ շոգ ե լինում, հուլիսի բարեխառնությունը 25° -ից անցնում ե Յերևանում պատահել ե հուլիսին $36,7^{\circ}$, իսկ հունվարին՝ $-26,7^{\circ}$: Բարեխառնության այսպիսի մեծ տատանումների պատճառը ողի չորությունն ե: Շրջապատված լինելով բարձր լեռներով և սարահարթերով, Արարատյան դաշտը չի կարողանում քիչ թե շատ խոնավություն ստանալ վոչ Սև և վոչ ել կասպից ծովից: Այդ պատճառով մթնոլորտային տեղումներն այստեղ շատ քիչ են (150 — 300 միլիմետր տարվա ընթացքում):

Ողի չորությունը, իրկարատես յերաշտները, խիստ ձմեռները, բարեխառնության որական մեծ տատանումները և աղուտ հողերը բուսականության աճման համար շատ աննպաստ են, և լիթե չլինելին գետերն ու բազմաթիվ արհեստական առուները, Արարատյան դաշտը կատարյալ անսպաս կլիներ: Դաշտում ցրված բազմաթիվ գույղերը շրջապատված են ազդիներով, վարելահողերով և բանջարանոցներով, վորոնց ջլելու համար Արաքսից ենրա վտակներից բազմաթիվ ջրանցքներ են անցնում: Մեծ հաջողությամբ մշակում են ցորեն, խաղող, բամբակ, բրինձ, ծխախոտ և այլն:

Արհեստական վոռոզումը Արարատյան դաշտին կլանք ե տալիս. այդ պատճառով և. իշխանությունը աշխատում է հին ջրանցքները նորոգել, կարգի զցել և բացի արդ՝ վարելահողերը շատացնելու համար նա անց և կացնում նորերը:

Ա. Եղրկովկասի գետերը լեռ լեռը

Անդրկովկասի բարտեղի վրա ցույց ավեր ամբողջ Արաքսը, սկսած ակունքից մինչև զեամբեանց և վրատեղից և սկսվում է ուր և թափվում:

Գետի վոր ափն և համարվում աջ և վորը՝ ձախու Ախուրյանը և Զանդին Արաքսի վոր վտակներն են—աշխաղմայան, թե ձախուկողմայան:

Գետեց միանը և կուբը: Ցույց ավեր նրանց ակունքն ու գետաբերանը:

Ձեր շրջանում գետ կա: Անոնն ինչ եւ նա վճրեղից և սկսվում է ուր և լոտիվում:

Անդրկովկասի գետերի մի մասը թափվում է Սև ծովը, իսկ մյուսը՝ կասպից ծովը: Սև-ծովից գետերն ընդհանրապես կար են և

մեծ մասամբ սկսվում են Կովկասլան լեռնաշղթայի հավերժական ձլունից ու սառցադաշտերից: Ահազին բարձրությունից գահավիժվելով դեպի ցած, նրանք մեծ ուժով քանդում են իրենց հունը և գոյացնում բազմաթիվ ջրվեժներ: Իրենց վերին և միջին հոսանքներում նրանք հոսում են անտառապատ, նեղ կիրճերի միջով, ստորին հոսանքում դանդաղում են և բերած ավազն ու խճաքարը նստում ե հատակին ու ծանծաղուտներ գոյացնում: Գարնանը, իերք սարերի ձյունն սկսում ե արագորեն հալվել, այդ գետերը վարարում են և կատաղորեն ցած հոսելով, գլորում են հսկալական քարեր, ծառեր արմատախիլ անում և շատ անգամ ավերում ճանապարհներն ու կամուրջները:

Սև-ծովլյան գետերը առանձին նշանակութիւն չունեն, քանի վոր նրանք (բացի Ռիոնի սառըին հոսանքից) մեծ մասամբ լեռնային են և հոսում են այնպիսի լերկրում, վոր վոռոզման կարիք չունի: Նըանցից միքանիսի վրայով փոխադրվում են գերաններ, իսկ Ռիոնի սառըին հոսանքը նավագնաց ե:

Դեպի Սև ծովլյան հոսում են Բզիքը, Կոդորը, Խեգուրը, Շիոնի, և Ճորխիլ:

Դրանցից ամենամեծը Ռիոնն է (297 կիլոմետր), վորը սկսվում է Կովկասյան լեռների Փասիս-մրաց գագաթի սառցադաշտերից: Իր վերին հոսանքում նա արագընթաց ե, կատաղորեն ճեղքում և կիրճեր ու հովիտներ, իսկ Քութայիսից հետո նա մտնում է Սև-ծովլյան դաշտավալը և սկսում ե դանդաղորեն, առանց շտապելու հոսել դեպի Սև ծովլը: Մաշելով իր հունը, Ռիոնը տանում է գեպի ծով մեծ քանակությամբ տիղմ, վորը նստում ե գետարեցանում և գոլացնում ցամաք: Ռիոնի դելտան ամեն տարի ծովի մեջ առաջ ե գնում 6—10 մետր: Այժմ Ռիոնի վրա կառուցվում ե խոշոր ելեքտրակայարան:

Ռիոնի վտակներից նշանավոր են աջ կողմից Ցիսենիս-ծղալին, իսկ ձախ կողմից՝ Կվիթիլը:

Առօսին սկսվում է Թիուրքիայում և Բաթումի սոս թափվում է Սև ծովը: Բայց նրա ամբողջ ընթացքի մի փոքր մասն է պատկանում Անդրկովկասին: Նրա վտակներից նշանավոր ե Աջարիս-ծղալին, վորը իր ամբողջ ընթացքով գտնվում է Անդրկովկասում: Աջարիս-ծղալիի վրա կառուցվում ե ելեքտրակայարան, վորը ծառայելու յի Աջարիսի պետքերի համար:

Կասպից ծովը թափվող գետերից նշանավոր են Կուր և Արաքսը: Յերկուսն ել հոսում են բարձրավանդակների և դաշտավալերի վրայով և այնպես արագահոս չեն, ինչպես լեռնալին գետերը: Սկսվելով քարձ սարահարթերում՝ նրանք մի սարահարթից իջնում են մյուսը և վերջապես՝ ազատվելով զանազան կիրճերից ու քարքարոտ հունից

մտնում են հարթավայրը, վորտեղ նրանց արագությունը նվազում և բերած ավազն ու տիղմը նստում են գետի հատակին:

Կուրը և Արաքսը կարեոր նշանակություն ունեն աղջարնակության համար Նրանց վրա կառուցված են խոշոր ելեկտրական կայրաններ (Զագեսը—Թիֆլիսում, Յերևանի կայրարանը՝ Զանգվիլի վրա), վորոնք վոչ միայն լույս են տալիս, այլ և աշխատեցնում են դորձարանների մեքենաներ, շարժում են ելեկտր. վագոններ և այլն Նրանցից բնակիչներն անց են կացը բազմաթիվ ջրանցքներ, վորոնցով ջրում են իրենց այգիներն ու վարելահողերը: Մասնավորապես Կուր գետի վրայով Ախալցխայից և Բորժոմից փոխադրում են Թիֆլիս մեծքանակությամբ գերաններ:

Կուրն Անդրկովկասի ամենամեծ գետն է, Նրա յերկարությունը հավասար է մոտ 1113 կիլոմետրի: Նա սկսվում է Զարիշատի լեռների ստորոտներին (Թյուրքիայում, Էսրսի մոտ) և բարձրավանդակների վրայով հոսում է դեպի հոլուսիս: Ախալցխայից հետո նա ծովում և դեպի հյուսիս արևելք և մտնում Բորժոմի կիրճը, վորի մի կողմը բարձրանում էն Թրիալեթի, իսկ մյուս կողմը՝ Ախալցխայի լեռները:

Բորժոմի կիրճից հետո նա թեքվում է դեպի հարավ-արևելք և անցնելով Գորու և Մուլիսանի հարթությունները, Թիֆլիսի մոտամանում է հարթությունների շրջանը: Թիֆլիսից մինչև Կասպից ծովը նա հոսում է դաշտավայրերի միջով, այդ պատճառով նրա հոսանքն այստեղ դանդաղում է: Զհասած ծովին, Կուրը բաժանվում է յերկու ճյուղի, վորոնցից մեկը կոչվում է Ակուռա, իսկ մյուսը՝ Գլխավոր-Ակուշան թափվում է Ղզըլ-Աղաջի ծովը: Կուրի դելտանը ծածկված է ընդարձակ ճահիճներով և ամեն տարի յերկարում է 60 մետր:

Աջ ու ձախ կողմից Կուրն ընդունում է բազմաթիվ վտակներ, վորոնք սկսվում են Կովկասյան լեռներից կամ Փոքր Կովկասից: Զախակողմյան վտակներից նշանավոր են՝ Լյախվան (Վոռովում և Գորու հարթությունը), Քսանը, (Վոռովում և Մուլիսանի հարթությունը), Ալազանը Յորա վտակը (Կախեթիայում): Աջակողմյան վտակներից աշքի յեն ընկնում Ալգերը, Խրամը, (Բորչալու կամ Դերեղ վտակով), Ալուսելը, Ջերամը, Շամիսորը, Թարթառը, Խաչենը և այլն:

Խրամն սկսվում է Թրիալեթի լեռներուա, Ցիրա-Ծղարը լեռնանցքի մոտ Մալկալի հարթությունն անցնելուց հետո նա մտնում է մի յերկար կիրճ, վորը հասնում և մինչև Առըխլու գյուղը: Առըխլու մոտ նա ազատվում է կիրճից և հոսում է Բորչալու հարթության վրայով ապա աջ կողմից ընդունելով Բորչալու գետը, թափվում է Կուրի մեջ: Բորչալուն իր ամբողջ յերկարությամբ մի քանի անուն ունի: Զաջուրի

շեռնանցքից մինչև Ղարտքիլիսա կոչվում է Փամբակի գետ, Ղարաքիլիսից մինչև Բորչալիի հարթությունը՝ Դեբեդի իսկ Բորչալիի հարթության մեջ նա ստանում է Բորչալու անունը Զորագետի վրա կառուցվում է խոշոր ելեկտրական կայարան, վորը Խոր. Հայաստանի համար կարևոր նշանակություն ե ունենալու նա կլուսավորի Զորագետի շրջանը, եներգիա կտա Ալլահվերդու պղնձահանքերին ու գործարաններին, յերկաթուղուն Նրա ոգնությամբ կպատրաստվին պարագանյութեր վարելանողերի համար և այլն:


Անդրկովկասի յերկրորդ մեծ գետը Արաքսն է. նա ոկովում է Թուրքիայում, Բյուրակնան լեռներից Կաղզվանի կիրճով անցնելուց հետո նա ձախ կողմից ընդունում է Ախուրյանը և մանում է Արարատյան դաշտը. Այստեղ նրա մեջ թափվում են Քասախը և Զանգին, վորոնց ջրերը վոստում են բազմաթիվ ալգիներ ու վարելահողեր: Զանգի վրա կառուցված ե Եթերեանի ելեկտրակայանը: Զանգից հետո մինչև Նախիջևանը Արաքսը հոսում է լան հովտով և ձախ կողմից ընդունում է Գառնի, Վեդի և Արեվիլյան Արփաչայ վտակները, վորոնցից անց են կացրված բազմաթիվ ջրանցքներ:

Ջուլֆայից հետո Արաքսի հովիտը բավական նեղանում է: Այստեղ նրա մեջ թափվում են Զալինդուր, Բարգուչատի վերին հոսանքը կոչվում է Բազմարչայ կամ Վորոտն: Թիչ հետո Արաքսը մանում է Մերձկասպիան դաշտավայրը և հոսելով Մուղանի դաշտով թափվում է Կասպից ծովը: Մինչև 1894 թվականը Արաքսը թափվում եր Կուրի մեջ, բայց այդ ժվականին, զարնան հեղեղութեարի ժամանակ, նա քանից իր աջ ափը և ջրերի մի մասը ուղղեց նոր հունով գետի հարավ Ղզըլ-Աղաջի ծոցը: Արաքսի յերկարությունը մոտ 914 կիլոմետր է, վորի մեծ մասը գտնվում է Անդրկովկասի սահմաններում:

Անդրկովկասի լճերից ամենամեծը և տմենագեղեցիկը Սևանա լիճն է, վորը ծովի մակերեսությունը 1925 մետր բարձր է: Նրա ամենամեծ խորությունը 95 մետր է: Լճի ամբողջ մակարդակը հաշվում են 1370 քառ. կիլոմետր:

Սևանա լիճը Խոր. Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի, նա հարուստ է զանազան ձկներով, վորոնց մեջ իշխանն ու գեղարքունինին իրենց համով հոչակված են ամբողջ Անդրկովկասում: Ֆլում այդ ձկների թվին ավելացավ և սիզը, վորը բերված է Լադուա և Չուրդ լճերից: 1924 թ. գարնանը Սևանա լիճն է ածված մեկ միլիոն հարյուր հազար հատ սիդ, 1925 թ.-5 միլիոն: Միգը Սևանա լճի մեջ բավական հաջող կերպով բազմանում է:

Սևանա լճի ջուրը անուշ ե, վորովհետեւ նրանից սկիզբն ե առնում Զանգին։ Վորքան աղ զետակները թափում են Սևանի մեջ՝ այնքան ել Զանգին հեռացնում եւ։



Նկ. 13. Անդրականական բայն անուշ

Անդրկովկասի բու-
սականությունը կամացաների բազմագանու-
թյունը բազմագան եւ Բուսականությունն
ալսուել փոփոխվում եւ վոչ միայն արևմուտքից (Սև ծովի ափից) դե-
պի արեկելք. այլև ծովի մակերևույթից դեպի լեռների գագաթները:

Բուսականության փոփոխվելը բարձրության համեմատ կարելի է անսնել Անդրկովկասի տարբեր կետերում, բայց դա ավելի շեշտը-
ված եւ Արևմտյան Անդրկովկասում, վորտեղ բուսականությունը կա-
րելի է բաժանել հետեւալ բուսական հինգ ուղղաձիգ գոտիների.

1. Լիանոսային անտառների զոտի (զոնա).—Ծովի մակերևույթից հանում եւ մինչև 900—1050 մետր բարձրությունը. ունի փարթամ բուսականություն, խիտ եւ կ փաթթված պատառուկներով: Այդ ան-
տառներում աճում են մշտադաշտը ծառեր:

2. Սաղարավիր անտառների զոնա.—Սկսվում է լիանոսային ան-
տառների վերին սահմանից և հասնում եւ մինչև 1500—1650 մետր բարձրությանը. լիանոսներ չկան. պատառնում են գլխավորապես սա-
ղաթավոր ծառեր, վորոնց մեջ աչքի լի ընկնում հաճարին:

3. Փետքեվ անտառների զոնա.—Սաղարթավոր անտառներից հետո գալիս են փշտակերև անտառներ, վորոնք տարածվում են մինչև 2.100 մետր բարձրությունը: Այդ անտառների մեջ ամենատարածված ծառը յեղենին եւ:

4. Վերին անտառային սահմանի զոնա.—Սա մի նեղ շերտ ե, վոր ընկած ե անտառների և ալպյան մարգագետինների միջև (2.100 մետր բարձրությունից մինչև 2.250 մ. բարձրություն): բաղկացած է գլխա-
վոր կեչի և կաղամախի ծառերից:

5. Ալպյան բուսականուրյան զոնա.—Տարածվում է 2.250 մետր բարձրությունից մինչև հավերժական ձյան սահմանը. բաղկացած է ալպյան մարգագետիններից, վորտեղ ամառները վոչխարների և խո-
շոր յեղջյուրավոր անտառների հսկայական հոտեր են արածում:

Այսպիսով Անդրկովկասի բուսականության տարածումը կախված է տեղի բարձրությունից: Բացի այդ, բուսականությունը փոխվում են արևմուտքից (Սև ծովի ափից) դեպի արեկելք:

Արևմտյան Անդրկովկասը ճոխ բուսականություն ունի: Ընդար-
ձակ տարածություններ ծածկված են փարթամ անտառներով, վորոնց
մեջ պատառնում են թե սաղաթավոր և թե մշտադաշտը ծառեր: Մշտա-
դաշտը բուսերից հալանի լին սամեթը (կովկասյան արմավենին),
մրտենին, դափնին և ազլն, իսկ սաղաթավոր բուսերից—կաղնին,
հաճարին, հացին, լորենին, շագանակենին և ալլն: Առանձնապես աչ-

քի յեն ընկնում իրենց ճոխությամբ Սև ծովի լեզերային անտառները: Տաք և խոնավ կլիմայի պատճառով ծառերն ալստեղ հսկայական մեծության են հասնում: Հաղարավոր պատառուկներ փաթթաթվում են ծառերին և անցնելով մի ծառից մլուսը, դարձնում են ալդ անտառները գժվար անցանելի: Դրանց ավելանում ե և խաղողի վորթը, վորի բարձրությունը յերբեմն հասնում է 10—12 մետրի: Սրա ճյուղերը խճճվում են բարձր ծառերի ճյուղերի հետ և կազմում խիտ ցանց, Բազմազան են և ալգիների ծառերը: Բացի խնձորենուց, տանձնենուց, ծիրանից, սերկակիլց, նշենուց և խաղողից, ալստեղ աճում են նաև գեղձ և ձիթենի: Բավական հաջող աճում են և ոտար յերկրներից բերած հետևյալ բույսերը՝ բելը, նարինզը, կիտրոնը, ծխախոտը, բանանը, բամբուկը, մազենիխան և ալլն:

Ծովափից փոքր ինչ բարձր՝ անտառներն աղքատանում են տեսակներով. այլև չեն պատահում պատառուկներ և խաղողի վորթ: Բայց հաճարին, վորը սիրում է խոնավ և բարձր տեղեր, հսկայական չափերի յե հասնում և համարյա դուրս ե մզում ծառերի մյուս տեսակները. Ընդարձակ տարածություններ ծածկված են հաճարի անտառներով: Ավելի բարձր կորչում են սաղարթավոր ծառերը և սկսվում են տարածվել փշատերև անտառներ, վորոնց վերին յեզերքներին պատահում են ցածլիկ կեչիներ, կաղամախի, հաճարի և ալլն:

Արեվիլան Անդրկովկասը բուսականությամբ աղքատ է: Կլիմայի չորության պատճառով անտառներն ալստեղ ընդարձակ տարածություններ չեն բռնում. լեզածներն ել կենտրոնացած են գլխավորապես կովկասյան լեռնաշղթայի և Փոքր կովկասի այն լանջերում, վորոնք դարձած են զնիվի կուր և Արաքս գետերի դաշտավայրը: Ալսպիսով այդ անտառները կիսառղակի պես յերեք կողմից շրջապատում են Արևելան Անդրկովկասի տափաստանները:

Անտառային գոտուց ցած, Թիֆլիսից մինչև Կասպից ծովը, կուր գետի յերկարությամբ փովում են ընդարձակ տափաստաններ, վորոնց մեծ մասը անջուր ե և անմարդաբնակ: Միայն կուրի և Արաքսի ու Նրանց միջանի վտակների յերկարությամբ ձգվում են մի շարք գյուղեր, վորոնք շրջապատված են թթենու և խաղողի ալգիներով, ցորենի և բամբակի ցանքսերով և այլն: Գետերի յերկարությամբ ձգվում են յեղեգնուտներ և անտառի նեղ շերտեր, վորոնք բազկացած են թեղի, ուռենի, թթենի և բարդի ծառերից: Գետերից հեռու բուսականությունն աղքատանում ե, տեղ-տեղ պատահում են ուղղուի խոտ, իշավարունգ, փշեր և այլ չորասեր բույսեր: Ամառային յերաշտներից կյանքը մեռնում է տափաստաններում, խոտը խանձվում ե քոչվորն

իր անասուններով բարձրանում և դով սարերը՝ Գարնան և աշնան արձեներից տափաստանը ծածկվում և թարմ կանաչով, վորը այնքան ավելի փարթամ ել լինում, վորքան ավելի մոտ ել լինեներին, Աշնանը քոչվորներն իջնում են սարերից և ամբողջ ձմեռն անցկացնում այդ տափաստաններում։ Աւսպիսով Արևելյան Անդրկովկասի չոր տափաստանները բավական հարմար ձմեռանցներ են անասունների համար։

Փոքր Կովկասի բարձրավանդակներն անտառազուրկ են. այստեղ ընդարձակ տարածություն բռնում են տափաստանները, վորոնցից ամենաչորն Արարատյան դաշտն եւ Սա իր բուսականությամբ հիշեցնում և իրանի և Անդրկասպյան լեռների չոր տափաստանները։ Այստեղ աճում են ուղտի խոտ, խրփուկ, լովչան և այլ չորասեր բուսեր։ Ամառը գետերից ու վոռոգվող տեղերից հեռու դաշտի խոտը խանձվում է, բայց աշնան անձրեներից կրկին կանաչում եւ ձմեռելու համար մեծ քանակությամբ անասուններ գրավում։

Անդրկովկասում մեծ տեղ են բռնում նաև ալպյան մարգագետիններ, վորոնք տարածվում են մոտավորապես Հ.000 մետրից մինչև 2.700 մետր բարձրությունը (հաշված ծովի մակերեսույթից)։ Դաշտային քնակիչների մի մասն իր անասուններին ամբողջ ամառվա ընթացքում արածացնում և այդ մարգագետիններում և միայն աշնանը, լեռը սարերում սկսում ել ձուն գալ և ձմեռանցների խոտն ել կանաչում եւ, սարվորներն իջնում են ցած։


Արևելյան Անդրկովկասը և Արարատյան դաշտը հարուստ են զանական մշակովի բույսերով, հախեթի, Գանձակի և Յերեանի խաղողը, Դորու և Ախալցխայի խնձորն ու տանձը, Յերեանի դեղձն ու դուդման հոչտակված են ամբողջ Անդրկովկասում։ Տեխնիկական բուսերից կարեոր նշանակություն ունեն բամբակը, ծխախոտը, կենածը և այլն։ Տարածված հացահատիկներն են ցորենը, գարին և լեռիպտացորենը։

Անդրկովկասի բնական հարստությունների մեջ առաջին տեղը բռնում են նալիքը, վորը գտնվում ե Ապշերոնյան թերակղզում։ Այդ նալիքի պաշարը հաշվում են մոտ 1.475 միլիոն տոնն, վորը կազմում ե Միության ամբողջ նավթային պաշարի 51% -ը և համաշխարհային պաշարի 20% -ը։ 1925—26 թ. Միության մեջ ստացված ամբողջ նավթի 67% -ը ավել ե Ապշերոնյան թերակղզին։

Նավթ գտնված ե նաև Կախեթիայում (Արևել. Վրաստանում) և Գուրիայում (Արևմտ. Վրաստանում)։

Քարածուխը գտնվում ե Արևմտյան Անդրկովկասում (Վրաստանում)։ Հայտնի յեն Տղվարչելի և Տղիբուլի հանքատեղերը։

Տղիբուլու քարածուխը վաղուց ե մշակվում, բայց բարձր վորակ չունի և կոքս չի տալիս։



Նկ. 14. Բագվի նավթահանքերը.

Տղվարչելու քարածուխն ընդհակառակը բարձր վորակ ունի, քիչ ծծումք ե պարունակում և կոքսանում ե։ Նրա պաշարը հաշվում են մոտ 115 միլիոն տոնն, վորից 70 միլիոնը կարելի է արդյունաբերել։ Այդ հանքերը շահագործելու համար ներկայում կառուցվում ե մի հատուկ լերկաթուղի, վորով Տղվարչելին միանալու յե Ոչեմչիրեյի հետ (Սկ ծովի ափին)։

Դաշքեսանում (Աղբեղջան) գտնվում ե ընտիր տեսակի յերկարահանելու, վորոնց պաշարը հաշվում են մոտ 175 միլիոն տոնն։ Այդ հանքերի մեջ պարունակվում ե 55—69% լերկաթ։ Դաշքեսանից գեպի Գանձակ անցնելու յե մի լերկաթուղի, վորով այդ լերկաթահանքը կտեղափոխվի Գանձակի մետալլուրգիական գործարանը։


Մանգանը գտնվում ե Ճիաթուրայում (Վրաստանում)։ Նա համաշխարհային նշանակություն ունի։ Պատերազմից առաջ Ռուսաստանում ստացվող ամբողջ մանգանի 75% -ը ճիաթուրան եր տալիս։ 1912 թ. Ռուսաստանը մանգանի արտադրությամբ առաջին տեղն եր բոնում ամբողջ աշխարհում։

Մանդանը մետաղ և գործ և ածվում պողպատի պինդ տեսակ-ներ պատրաստելու համար:

Պղնձահանելով հարուստ են Հայաստանը (Ղաթարը և Ալլահվեր-դին) և Աղբբեջանը (Գեղարեկ), Հայատանի պղնձահանքերը համա-միութենական նշանակություն ունեն: Պատերազմից առաջ Ռուսաս-տանում ստացված ամբողջ պղնձի մոտ $20\%_0$ -ը տալիս էր Հայաստանը:

Բացի վերը հիշած մետաղներից Անդրկովկասի զանազան տեղե-րում գտնվում են արծաթ, ցինկ, կլայնեկ, ալյումին և այլն:


Աղաքարով հարուստ ե Նախիջևանի հանրապետությունը, Անդր-կովկասում գործածվող աղի մոտ $70\%_0$ -ը Նախիջևանն է տալիս:



Նկ. 15. Ղաթարի պղնձահանքերը.

Կարևոր ե հիշել և այն շինարարական քարերը, վորոնց պաշարն Անդրկովկասում անսպառ ե: Այդպիսի քարերով հարուստ ե մանա-վանդ Հայաստանը: Արտիկում (Լենինականից մոտ 25 կիլոմետր հե-ռավորության վրա) գտնվում ե մեծ քանակությամբ տուֆ, վորը ներ-կայումն մշակվում ե:

Արտիկի տուֆն աչքի լե ընկնում իր թեթևությամբ և դժվար ե-հալվում: Նրան կարելի լե սղոցով կտրել, մեջը մեխ խփել և այլն: Իր



Լի. 16. Արակսի գետահովանքի առափնյա առավազանությունը

այս հատկությունների շնորհիվ նա գործ և ածվում վորպես շինարարական նկութ աղլուսի փոխարեն։ Արտիկի տուֆն արտահանելու համար խորհրդ իշխանությունը կառուցեց մի հատուկ լերկաթուղի, վորով տուփը հասցնվում ե մինչև լենինական, այնտեղից ել Միության զանազան անկյունները։ Բացի տուփից պետք ե հիշել պեմզան, գրանիտը, մարմարը, գաղը, հրակալուն կավը և ալին։

Մեր լերկրի բնական հարստությունները դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված։ Այս հանգամանքի վրա առանձին ուշադրություն ե զարձնում Անդրկովկասի տնտեսական հնգամլա պլանը։ Հանքերի հետազոտությունների համար հատկացրված են դրամական խոշոր միջոցներ, վորոնք հնարավորություն կտան պարզելու այդ հանքերի պաշարի մեծությունը և նրանց արդյունաբերական նշանակությունը։

Անդրկովկասի բնակչուրյունը։ — Անդրկովկասի բնակչությունը շատ բազմազան է։ Այստեղ ապրում են մոտ 20 ազգություն, վորոնք խոսում են տարբեր լեզուներով։ Դրանց մեջ իրենց թվով առաջին տեղը բռնում են վրացիները (քարթվելիները), թուրքերը և հայերը։ Հենց այդ լերեք ազգություններն ել կազմել են անկախ հանրապետություններ։ Մնացած ազգություններից աչքի լեն ընկնում ռուսները, ոսկերը, պարսիկները, արխազները, քուրդերը, թաթերը և ալին։

1926 թ. մարդահամարի տվյալների համաձայն ամբողջ Անդրկովկասի բնակչությունը կազմում է մոտ 5.862.000 հոգի, վորից

Վրացիներ 1.798.535

Թուրքեր 1.685.080


Հայեր 1.339.497

Այսպիսով այդ լերեք ազգությունները միասին կազմում են 4.823.112 հոգի կամ ամբողջ Անդրկովկասի բնակչության $82,28\%$ ։ Մնացած $17,72\%$ -ը կազմում են մնացած բոլոր ազգությունները։

Բնական պայմանների քաղմազանության պատճառով բնակչությունն ամեն տեղ նույն խտությունը չունի։ Սե-ծովյան դաշտավայրներ խոնավ և արգավանդ հողի պատճառով ավելի խիտ ե բնակվածքան թե Մերձկասպյան ջոր տափաստանները։

Անդրկովկասի բնակչության միջին խտությունը կազմում է 31,3 մարդ 1 քառ. կիլոմետրի վրա։

Բնակչության խտությամբ առաջին տեղը բռնում ե Վրաստանը (1 քառ. կիլոմետրի վրա 37,9 մարդ), յերկրորդ տեղը՝ Հայաստանը (1 քառ. կմ.-ի վրա 29,1 մարդ), վերջին տեղը բռնում ե Աղբքեջանը (1 քառ. կմ.-ի վրա 26,8 մարդ)։



Նկ. 17. Անդամանի անտառներ ցեղազգական քաղաքացիությունը.

Քաղաքացին և դպրողական բնակչությունը հետևյալ պատկերներում
տալիս: Ամբողջ Անդրկովկասում գյուղական բնակչությունը կազմում

և 76,5%₀, իսկ քաղաքայինը, 23,5%₀, Առանձին հանրապետությունների մեջ բնակչությունը բաշխված ե այսպես.

	Գյուղական	Քաղաքային
Վերաստան	78,4% ₀	21,6% ₀
Աղբբեջան	72,3% ₀	27,7% ₀
Հայաստան	81,7% ₀	18,3% ₀

Այստեղից լերեռում ե, վոր այդ հանրապետություններից քաղաքային բնակչության ամենամեծ տոկոս ունի Աղբբեջանը, իսկ գյուղական ամենամեծ տոկոսը՝ Հայաստանը:

Քաղաքային բնակչության համարյա կեսը ապրում ե 3 մայրաքաղաքներում—Բագվում (446,830 մարդ), Թիֆլիսում (282,900) և Յերևանում (62,180):

Գյուղական բնակչության մեծ տոկոսն իմիջի ալլոց ցույց ե տալիս, վոր Անդրկովկասը զեռևս գյուղատնտեսական լերկիր եւ:

Անդրկովկասի բնակչությանը գյուղատնտեսությունն եւ Բայց աշխարհուրյան զբաղմութեանը հազրական, հողալիին և կլիմայական պայմանների բազմազանության պատճառով գյուղատնտեսությունը նույնիսկ իրար շատ մոտ աեղերում նույն բնուկթը չունի: Անդրկովկասի համեմատաբար փոքր մակարդակի վրա աճում են բամբակ, ծխախոտ, խաղող, թեյ, մանղարին, կիտրոն, ցորեն, յեզիպտացորեն, բրինձ, կենափ, շաքարի ճակնդեղ և ալլն: Բնակիչները պահում են խոշոր յեղջուրավոր անասուններ և փոխարժներ. զբաղվում են շերամապահությամբ, մեղվարուծությամբ և ալլն:

Ծովի մակերևույթից ունեցած բարձրության համեմատ Անդրկովկասը բաժանվում է յերեք զոնայի—ցածրադիր զոնա, նախալեռնալիին զոնա և լեռնալիին զոնա: Ցածրադիր զոնան տարածվում է մինչև 1.200 մետր բարձրությունը, ալստեղ կարելի լի մշակել բամբակ, ծխախոտ, թեյ և զբաղվել այդեղործությամբ. ավելի բարձր զոնայում (մինչև 2.000 մետր բարձրությունը) տարածված ե գլխավորապես հացահատիկների մշակությունը և վերջապես 2.000 մետրից բարձր, վորտեղ լեռնալիին արոտատեղիներն ընդարձակ տարածություն են բռնում շատ հարմար և անասնապահության և մանավանդ կտթնատնտեսության համար:

Յերկրի լեռնալիին բնուկթի և մլուս կողմից կլիմայական վորոշաննապատ պայմանների պատճառով վարելահողերն ընդամենը կազմում են ամբողջ Անդրկովկասի 19%₀-ը, մինչդեռ 18,3%₀-ը բռնված

և անպետք հողերով, 18,6%₀-ը՝ ամառային և ձմեռալին արտատեղերով, 23%₀-ը՝ անտառներով:

Ընդհանուր առմամբ Անդրկովկասը կարելի յե համարել քանօքարժեցի կուլտուրաների տրջան: Այդ կուլտուրանը ըստ ունեն համամիութենական նշանակություն, որինակ, բամբակի մշակության ընդարձակումը կարող է մեծ քանակությամբ բամբակ տալ ԽՍՀՄ-ի տեղատարաններին: Արեւելան Անդրկովկասի և Արարատյան գաշախ չոր տափաստանների վոռոգումը մեծ զարկ է տալու այդ կուլտուրաների տարածմանը:

Բացի գլուղատնտեսությունից Անդրկովկասի բնակիչների համար կարևոր նշանակություն ունի նաև արդյունաբերությունը: Նավթը, քարածուխը, մսնագանը և պղինձը մշակվում են վաղուց. գյուղատնտեսական հումուկթը տեղում վերամշակության լենթարկելով ստանում են զանազան ապրանքներ, որինակ՝ խաղողից պատրաստում են սպիրտ, բամբակից՝ գործվածքներ և այլն: Ընդհանուր առմամբ Անդրկովկասը մինչև խորհրդայնացումը մի հետամնաց լերկիր եր. ցարկան կառավարությունը Ռուսաստանի ծալքամասերը, գրանց թըվում և Անդրկովկասը պահում եր գորպես գաղութ, վորը պետք է Ռուսաստանի կենտրոնի արդյունաբերական քաղաքներին գյուղատնտեսական հումուկթ մատակարեր: Այդ է պատճառը, վոր Անդրկովկասը, չնայելով իր բոլոր նպաստավոր պայմաններին, մինչև խորհրդադարայնացումը չկարողացավ զարգացնել իր արտադրողական ուժերը:

Ներկայումս կերպարանափոխվում է իերկրի տնտեսական կյանքը. նպ արագ թափով ինդուստրացման և լենթարկվում. հիմնվում են զանազան գործարաններ, վորտեղ վերամշակվելու լեն տեղական բնական հարստությունները, որինակ՝ Դարաքիլիսայում կառուցվում ե ցիանամիտի գործարան, Ալլահվերդում՝ ծծմբաթթվի գործարան, Գանձակում՝ մետալլուրգիական գործարան և այլն:

Հացահատիկների մշակուրյունը.—Հացահատիկներից մեր լերկում տարածված են ցորենը, գարին յել յեղիպտ ացորենը: Թե վորքան մեծ նշանակություն ունին հացահատիկները մեր լերկրի տնտեսության մեջ, այդ լերկում ե նրանից, վոր Անդրկովկասի բոլոր ցունքսերի մոտ 80%₀-ը բռնված է հացահատիկներով: Ցեղիպտացորենը մշակվում և գլխավորապես Վրաստանում, իսկ ցորենը և զարին Աղբքեցանում և Հայաստանում:

Աշնանացանը գերազանցում է Աղբքեցանում, իսկ գարնանացանը՝ Հայաստանում: Հացահատիկների բերքատվությունը ցածր է. միջին

հաշվով մեկ հեկտարից աշնանացան ցորենը տալիս է 7,9 ցենտներ, դարնանացանը՝ 6,4 ցենտներ, աշնանացան գարին՝ 8,5 ցենտներ, յեղիպտացորենը՝ 8,9 ցենտներ:

Հետաքրքիր և այն, վոր կուտնտեսություններում բերքատվությունն ավելի բարձր է, քան անհատական մանր տնտեսությունների մեջ: Այս յերկութիւնը ընդհանուր է ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Այսպես, կուտնտեսություններից մեկում մի հեկտարից ստացվում 9,1 ցենտներ ցորեն, մինչդեռ նույն շրջանի գյուղացիական անհատ տնտեսության մեջ ստացվում է 6,6 ցենտներ: Այդպիսի տարբերության պատճառն այն է, վոր կուտնտեսությունները հացահատիկների մշակությունը մեքենայացրել են, սերմացուն զտում և ախտահանում են, վարելահողերը պարարտացնում են և այլն: Այստեղից յերկում է, թե ինչքան կարենոր նշանակություն ունի կուտնտեսությունների ցանցի ընդարձակումը մեր յերկրի տնտեսության բարձրացման համար:

Սեփական հացը Անդրկովկասի բնակչությանը չի բավարարում. պակասորդը (մոտ 2,5—2 միլիոն ցենտներ) ներմուծվում է Հյուսիսային կովկասից:

Ճիշտ է, հնդամյա պլանով հացահատիկների ցանքսերն ընդարձակելելու լին և բերքատվությունն ել բարձրանալու լի, բայց և այնպես Անդրկովկասը գեռ յերկար ժամանակ ստիպված կլինի Հյուսիս. Կովկասից հաց ներմուծելու վորոշված է բոլոր ջրովի տեղերը գլխավորապես հատկացնել վոչ թե հացահատիկների, այլ տեխնիկական բուկսերի մշակության, վորովհետև այդ տեխնիկական բուկսերը հումնություն տալու թե տեղական և թե ԽՍՀՄ-ի յեկուպական մասի գործարաններին:

Բամբակի մօսկովյանը.—Բամբակը կարենոր տեխնիկական բուկս է: Ամբողջ յերկրագնդի վրա գործվածքների մեծ մասը պատրաստում են բամբակից: Բայց բամբակը պահանջկոտ բուկս է: Նա սիրում է ջրովի և տաք տեղեր: Այս տեսակետից Անդրկովկասի ցածրադիր զուան բավական հարմար է բամբակի մշակության համար:

1928 թ. բամբակի ցանքսն ամբողջ Անդրկովկասում կազմում է 131.400 հեկտար, վորից

Ագրբեջանում	109.800	հեկտար
Հայաստանում	14.300	»
Վրաստանում	7.300	»

Նույն թվականին ստացվել է 69.000 տոնն հումն բամբի հումն բամբակը, կամ ինչպես ասում են, հնդավոր բա-

զափոխվում են բամբակագոտիչ գործարան և այնտեղ բամբակը բաժանելով կորիզից ստանում են քտած բամբակ, վորից թելեր են մանում և գործվածքներ գործում:

Կորիզից ստացվում ե ձեթ, վորից սապոն են պատրաստում: Կորիզի պինդ մնացորդներով (քուսպով) կերակրում են անսպուններին: Այսպիսով բամբակը բավական ոգուտներ ե տալիս:

Հնգամյա պլանի, — Բամբակի նշանակությունը ԽՀՀՄ-ի ժողովը բարեկան տնտեսության համար շատ մեծ է: Մեր իերկրի արագ թափով աճող տեքստիլ արդյունաբերությունը նոր պահանջներ ե դնում բամբակագործության առաջ: Զնայելով վոր ԽՀՀՄ-ում բամբակի ցանքաբերը տարեց-տարի ընդարձակվում են, այնուամենայնիվ միութենական տեքստիլ արդյունաբերության պահանջները բավարարելու համար մենք արտասահմանից բամբակ ենք գնում:

Հնդամլա պլանն առանձնապես ուշադրություն ե դարձնում ցանքսերի ընդարձակման և բերքատվության բարձրացման վրա: Հնդամլակի վերջում բամբակի մակարդակը լինելու լեռ մոտ 300.000 հեկտար (1927—28 թ. 124.500 հեկտար): Հում բամբակի բերքը կլինի 763.000 տոնն: Այդ քանակից ապրանքային մասը կլինի 247,2 հազար տոնն, վորից 68,9 հազարը կծախսվի Անդրկովկասի տեքստիլ արդյունաբերության կարիքների համար, իսկ 178,3 հազար տոննը կհատկացվի միութենական տեքստիլ արդյունաբերության: Մասնավորապես Հայաստանում հնդամլակի վերջում բամբակի ցանքաբերը պետք ե հասնեն առնվազը 34.000 հեկտարի, վորից ստացվելու լեռ մոտ 15.000 տոնն գտած բամբակ:

Բամբակը Անդրկովկասի վոր մասներում են մշակում:

Նա միության համար ի՞նչ նշանակություն ունի:

Կարելի՞ յե Անդրկովկասում ավելի շատ բամբակ ստանալ և ի՞նչպես:

Հնդամլակի վերջում վնաբան բամբակ ենք ստանալու:

Մխաթյոսի մօտկուբյօւնը

Անդրկովկասի քարտեզի վրա ցույց տվեք՝ 1. Արխադիան, Աջարիան, Ողուրդեթ և Զուգիդի քաղաքները, Կախեթիան՝ Վրաստանում:

2. Զաքարթալա քաղաքն իր շրջակայքով՝ Աղրբեջանում:

3. Արարատյան դաշտը՝ Հայաստանում:

Մխախոսի մշակությունը մեր իերկրում տարածել են գլխավորապես այն հայերն ու հուկաները, վորոնք մեզնից 50 տարի առաջ ուռւստակներական պատերազմի ժամանակ թողին իրենց հայրենիքը և ընակություն հաստատեցին Սև ծովի իեզերքներին (Աբխազիայում): Լի-

Նելով հմուտ ծխախոտագործներ, նրանք իրենց հետ բերին տաճկաղան «Սամսոն» և «Տրապիզոն» կոչված ընտիր ծխախոտի սերմեր և կարճ ժամանակում այդ բույսի մշակութիւնը հսկայական չափերի հասցըին: Այժմ Անդրկովկասի ծխախոտագործության գլխավոր շրջանը կազմում և Արխագիան, վորի ծխախոտը հոչակված և ամբողջ մորհրդ: Միության մեջ:

Թե Անդրկովկասում ծխախոտի պլանտացիաները վորքան տարածություն ենին բռնում, այդ յերեսում և հետեւալ աղյուսակից.

Ծխախոտի պլանտացիաների մակարդակը 1928 թ.

Վրաստան	13035	հեկտար, վորից 10843-ը Արխագիայում:
Ազրբեջան	650	»
Հայաստան	541	»
Ամբողջ Անդրկովկասում	14226	հեկտար

Արխագիայի բնակիչների ապրուստի ամենակարենը աղբյուրը ծխախոտագործությունն է: Ցեղիպտացրենի մշակույթը, մրգատուայցիները, զինեղործությունը, ընդարձակ անտառները և մերձարեւաղարձային կլիմային հատուկ բույսերը միասին վերցրած այնքան արդյունքն չեն տալիս, ինչ վոր ծխախոտը:

Ծխախոտի մշակութիւնը Հայաստանի ազգաբնակության համար գեներակարեն գեր չե կատարում: Բայց նկատի ունենալով ծխախոտի պլանտացիաների արագորեն ընդարձակվելը, կարելի յե հաստատապես ասել, վոր այդ թանգարժեք կուլտուրան խորոր նշանակություն և ունենալու մեր ժողովրդի տնտեսության համար: Հայաստանում հողագին և կլիմայական պայմանների բազմազանության շնորհիվ կարող են աճել ծխախոտի համարլա բոլոր տեսակները: Կան վալրեր, վորոնք հարմար են «Սամսոն» կամ «Դյուքսեկ» տեսակի համար և այլն:

1928 թ. ամբողջ Անդրկովկասը տվել և մոտ 10777 տոնն ծխախոտ, վորից.

Վրաստանում ստացվել և	9733	տոնն (Արխագիան՝ 7950)
Ազրբեջանում	»	715
Հայաստանում	»	329

Հնդամակի վերջում ծխախոտի պլանտացիաների ընդհանուր ժակարդակը պետք է հասցնվի 21,9 հազար հեկտարի, իսկ բերքը՝ 21,3 հազար տոննի, վորից 5,3 հազարը գործ կածվի Անդրկովկասում, 3,4-ը՝ միութենական կարիքների համար, իսկ մնացածը կարտահանվի:

Թեյն աճում և խոնավ և տաք տեղերում: Թեյն մօակուրյունը.

Այդ պատճառով ամբողջ ԽՍՀՄ-ի մեջ թեյն մշակության համար ամենահարմար տեղը Սև ծովի յեղերքն է,

սկսած թյուրքական սահմանից մինչև Կողոր գետը: 1928 թ. թելի տնկարանները կազմում ելին մոտ 3995 հեկտար, վորի խոշոր հասաքանությունը կազմում է Աջարիայում և Ողուրդիթի շրջանում: Նշանավոր Զակլան, վորը հայտնի լեռ թելի արտադրությամբ, գտնվում է Աջարիայում, Բաթումից փոքր ինչ հյուսիս:

Հետազոտությունները ցույց են տալիս, վոր Սև ծովի յեզերքին թելի մշակության համար պիտանի հուզերը կազմում են մոտ 120,000 հեկտար: Թելի ընդունելու լինենք, վոր մեկ հեկտար թելի տնկարանից ստացվում է 290 կիլոգրամ թել, այն դեպքում 120,000 հեկտարը կտա մոտ 35 միլիոն կիլոգրամ, վորը հավասար է միության գործածվող թելի կեսին: Այստեղից պարզ է, վոր թելի մշակության տարածումը չափազանց կարելոր նշանակություն ունի վոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Այդ և պատճառը, վոր խորհրդիշանությունն առանձնապես ուշադրություն է դարձնում այդ բույսի մշակության վրա, Այս գարնանը 65000 հեկտար նոր տնկարաններ են ավելանալու: Ծրագրված է թելի տնկարանների մակարդակը հասցնել 75,000 հեկտարի:

Թելի բերքը Վրաստանում

1913 թ.	554,889	կիլոգրամ
1925 թ.	մոտ	800,000
1926 թ.	848,000	
1928 թ.	1060,000	

Այստեղուժաւրյուն յև
բանակարգութեա-
րյան.

Անդրկովկասի բնակիչները շատ հին ժա-
մանակից սկսած պարապում են ալգեգործու-
թյամբ և բանջարաբուծությամբ: Բազմազան
բնական պայմանների շնորհիվ այստեղ հնա-
րավոր ե մշակել թե շուտ և թե ուշ հասնող մրգեր ու բանջարեղեն-
ներ, վորոնցից շատերն իրենց համով հոչակվում են վոչ միայն Ան-
դրկովկասում, այլև ամբողջ ԽՍՀՄ-ում: Բայց և այնպես այգեգոր-
ծությունն ու բանջարաբուծությունը (բացի խաղողի մշակությունից) մեր յերկրի բնակիչների համար այնքան ել մեծ նշանակություն չու-
նին: Դրա պատճառներից ամենազլիսավորն այն է, վոր այգիներն ու
բանջարանոցները ջրելու համար չկան բավարար չափով արհեստական
ջրանցքներ: Յերկրորդ՝ այգեգործական շատ շրջաններ գտնվում են
գլխավորապես շուկաներից և լեռկաթուղու գծից հեռու:

Պաղարուծությունը տարածված է Արարատյան դաշտում: Ցե-
րեանի գավառը հայտնի լեռ իրեն դեղձով ու ծիրանով, վորոնցից

պատրաստում են պահածոներ (կոնսերվեր): Այդ պահածոները մեծ ընդունելություն են գտնել ԽՍՀՄ-ի շուկայում:

Յերեանի գավառում տարածվում են նաև ձմերուկի. սեխի, վարունդի, սոխի, պամիղորի և այլ բուլսերի մշակությունը, լոռում և փամբակում մեծ չափով մշակում են կաղամբ, կարտոֆիլ և այլն:

Պտղաբուծությամբ ու բանջարաբուծությամբ պարապում են Արաւանի համարյա բոլոր շրջաններում:

Հայտնի յեն Բորչչալվի (Խրամի հովտի) սոխն ու ձմերուկը, կախիթի (Ալաղանի հովտի) ձմերուկը, Գորու տանձն ու խնձորը, Քութայիսի շուտ հասնող բանջարեղենը, Աջարիալի կիտրոն և մանդարինը, Ախալցխայի խնձորը, կարտոֆիլը և այլն: Գորում պատրաստում են մեծ քանակությամբ մրգի և բանջարեղենի պահածոներ:

Ագրբեջանի բանջարանոցներն ու ալդիները տարածված են Կուրավի, Բագվի, Գանձակի, Շիրվանի գավառներում, ինչպես և Ղարաբաղում, Նախիջևանի հանրապետության մեջ: Մշակում են տանձ, խնձոր, ընկույզ, թուզ, նուռ, թութ, ձմերուկ, սեխ, պամիղոր, վարունդ, և այլն:

ԽՍԱՊՈՂԻ ԱՅՋԻՑԵՐԸ ՅԵՎ ԳԻՒԽԵԳՈՒԹՅՈՒՐՅՈՒՅՑ

Տեր շրջանում խաղողի այգիներ կան: Խաղողից գինի պատրաստում են: Դինը, իրմանը են գործածում, թե վաճառում են: Կան այնպիսի ընտանիքները, որոնց գլխավոր պարապմունքը խաղողի մշակությունն ու գինեգործությունն են: Այգիները բավական չափով վառողված են:

Խաղողի մշակությունը և գինեգործությունը մեր լեռների վորոշ շրջանների համար չափազանց կարեոր նշանակություն ունեն:

Խաղողի այգիները ընդհանուր մակարդակով և արտադրած գինով Անդրկովկասը բանում և առաջին տեղն ամբողջ Միության մեջ: Պատերազմից առաջ խաղողի այգիները բանում ելին մոտ 85 հազար, հեկտար, իսկ առաջված գինին կազմում եր մոտ $12\frac{1}{2}$ մելիոն վեղրո կամ 1.502.000 հեկտոլիտր:

Ներկայումս խաղողի այգիների ընդհանուր մակարդակը և խաղողի բերքը հետեւյալ պատկերն ունի:

Խաղողի այգիների մակարդակը յեվ բերքը 1928 թ.

Այգու մակարդակը Խաղողի բերքը:

Վրաստան	35,300	հեկտար	165.000	տոնն
Աղբեջան	32,600	>	97.200	>
Հայաստան	8.900	>	49.000	>
	76.800		311.200	

Թե ալգիների մակարդակով և թե արտազրած գինու քանակությամբ առաջին տեղն ամբողջ Անդրկովկասում ըրնում և Վրաստանը վրաստանի ալգիները գտնվում են գլխավորապես Կախեթիայում, Քութայիսի և Շորապանի շրջաններում և այլն Կախեթի գինին հոչակված և Խորհրդակին Միության մեջ:

Հայաստանի խաղողի այգիները կենտրոնացած են գլխավորապես Յերևանի գավառում, որը հարուստ և խաղողի զանազան տեսակներով: Ստացված խաղողի $33^0/0$ -ը ժամանակում և սպիրտ և ողի պատրաստելու համար, $28^0/0$ -ը՝ գինու համար, $14^0/0$ ն ուտվում ե, իսկ մնացած $15^0/0$ -ից պատրաստում են դոչար և չամփչ: Յերևանի խաղողը, գինին և կոնյակը հայտնի յեն ամբողջ Անդրկովկասում:

Ադրբեյջանում խաղողի այգիներով և գինեգործությամբ առաջին տեղ բռնում են Գանձակի և Շամխորի շրջանները: Հանրապետության մեջ ստացվող գինու $2/3$ -ն ստացվում է այս շրջաններից: Գանձակի խաղողը հոչակված է ամբողջ միության մեջ:

Փ. Եասնապահություն

Զեր շրջանում ի՞նչ անասուններ կան. թվեցեք դրանց տեսակները:

Այդ անասուններն ինչպես են խնամվում ամառը և ձմեռը:

Անասնապահությունից ի՞նչ արդյունք և ստացվում:

Տեղական անասուններն ազնվացնելու փորձեր կատարվում են:

Աղնվացեց անասուններ տեսել եք: Նրանք ինչո՞ւ են տարբերվում ձեր տեղական անասուններից:

Անասնապահությունն Անդրկովկասի դյուդատնտեսական կարևով ճյուղերից մեկն եւ Բնական պայմանները, այսինքն կլիման ու արոտատեղերը բավական նպաստավոր են այդ ճյուղի զարգացման համար: Դեռ այսոր ել Անդրկովկասում գտնվում են այնպիսի ժողովուրդներ, փորոնց համար անասնապահությունն ապրուստի միակ աղբյուրն եւ: Զմեռը նրանք իրենց անասունները պահում են ձմեռացին արոտատեղերում, իսկ ամառը քոչում են սարերը և մինչև աշնան ցրտերի գալը անասուններն արածացնում ալպյան հարուստ մարդագետիններում:

Զմեռային արոտատեղերը գտնվում են համարյա բացառապես Արևելյան Անդրկովկասում: Արևմտյան Անդրկովկասում նրանք բոլորվին չկան (ինչո՞ւ): Զմեռային արոտատեղերը գտնվում են ցածրագիր զոնայում: Այս արոտատեղերը ձմեռը լիրկարատե ձուլնով չեն ծածկվում, և անասնապահները կտրողանում են իրենց անասուններին ամբողջ ձմեռվա ընթացքում արածացնել առանց խոտի պաշար ունենալու:

Ամառային արոտատեղմբը գտնվում էն կովկասան լեռնաշղթալի հարավային լանջերին և Հարավ. Անդրկովկասում: Նրանք սկսվում են մոտ 2.000 մետր բարձրությունից (հաշված ծովի մակերևություց) և հասնում են մինչև 3.000—3.700 մետր բարձրության: Այս բարձրությունից վեր տարածվում են մերկ ժայռեր, հավերժական ծյուն և սաղաղաշտեր:

Անասնապահությունը Հայաստանում: Անասնապահությունը Հայաստանի հանրապետության համար մեծ նշանակություն ունի. նա կարելոր և մանավանդ լեռնալին գոտու ընակիչների համար, վորոնց տընտեսության մեջ ալֆմ կաթնատնտեսությունը խոշոր դեր և կատարում: Այդ բանին մեծապես նպաստում են Հայաստանի ալպյան մարգագետինները, վորոնք հնարավորություն են տալիս ստանալ բարձր վո-



Նկ. 18 Ամառը սարում.

բակի մթերքներ: Կաթնատնտեսությունն առանձնապես զարգանում է Էռուի. Փամբակի, Սկանի, Լենինականի գավառներում: Դեռևս պատերազմից շատ առաջ Շվեյցարիայից գաղթած կաթնատնտեսները բնակություն են հաստատում Լոռում և սկսում պատրաստել շվեյցարական պանիր, ճնշած կարագ և ալին: Մյուս կողմից նրանք, բերելով իրենց հետ ընտիր ցեղի կովեր, աշխատում են ազնվացնել տեղական կաթնատու կովերի ցեղը: Վերջին միքանի տարվա ընթացքում կառավարության ջանքերի շնորհիվ կաթնատնտեսությունն ստանում և ար-

գյունաբերական բնույթի հիմնվում են պահապատճառաններ, կազմակերպում են կաթնատնտեսական արտելներ, գյուղական ընկերություններ և այլն։ Հատուկ անասնաբուծարաններում աշխատում են աղնվացնել տեղական կարմիր տեսակի տավարը, վորովինետև պարզվում ե, վոր Յիշրոպալից բերած կովերը մեր կլիմական պայմաններում չեն բազմանում։

Հայաստանի կաթնատնտեսական արտելները պատրաստում են գլխավորապես ովեցարական պանիր, ննօած կարագ և բուժի պանիր, վորոնք մեծ ընդունելություն են գտնում վոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ ԽՍՀՄ-ի շուկաներում։

Տեղական կովերի և յեղների մեջ աչքի յեն ընկնում Շամշադնի և Աղբարայի ցեղերը Զիաբուծությունը մեծ չափերի չի հասնում, վորովինետև բնակիչները, վորպես լծկաններ, աշխատեցնում են յեղնու գոմեշը։ Զին գործ ե ածվում հեծնելու և բարձելու համար։ Վոչխարներից տարածված են մտղըխ, բուլախ և դոնմա ցեղերը։

Վ.Րաստան։ Անասնապահությունը Վրաստանի լեռնային ազգաբնակության կարեոր պարապմունքներից մեկն ե. վորոշ տեղերում նույնիսկ ժողովրդի ապրուստի միակ աղբյուրն ե. Բայց յեղած ձմեռային և ամառային արոտատեղերն անասնապահության կարիքներին չեն բավարարում։

Տեղական անսասունների ցեղերից աչքի յեն ընկնում խելսուրփշավական և ոսական կովեր, վորոնք հայտնի յեն իրենց կաթնատվությամբ. այդ պատճառով ալդ ցեղի կովերը պահվում են Թիֆլիսում։ Վոչ տեղական անասուններից նշանավոր են «գուխարորական» և «մալականի» կովերը, վորոնք տարածված են Ախալքալաքի և Թիֆլիսի գավառներում։

Վոչխարներից հայտնի յեն բուժի վոչխարները, վորոնց բուրդն ու միսը հոչակված են ամբողջ Անդրկովկասում։

Զիերի թիվը մեծ չե. այստեղ պատճառը նույնն է, ինչ վոր Հայաստանում։ Կաթնատնտեսությունն Ախալքալաքի գավառում, Ծալկայում, ինչպես և Բաշկիչետի շրջանում արդյունաբերական ընույթունի։ Պատրաստվում ե շվեցարական պանիր, ճնշած կարագ. Կովկասյան լեռների հարավային լանջերում վոչխարապահները գլխավորապես պանիր են պատրաստում. հայտնի յե բուժի պանիրը։

Աղբբեջան։ Անասնապահությունն Աղբբեջանի քոչվոր և կիսաքոչվոր ժողովուրդների համար չափաղանց կարեոր նշանակություն ունի։ Այդ քոչվորների, ինչպես և նստակյացների, անասունները աշնանն ու ձմեռը արածում են հարթավայրերում, իսկ ամառը՝ սարե-

բում: Բայց Ազրբեջանի ամառային արոտավայրերը բավարար չեն: Այդ պատճառով Ազրբեջանի անասնապահների մի մասն իր անասուններն ամառվա ընթացքում քշում և Հայաստանի լեռները:

Հայանի յին Դաղախի կովերը և Դարարաղի ցեղի վոչխարները:

Ազրբեջանում տարածված են նաև գոմեշներ, ուղտեր և եշեր, վորոնք կարեսով գեր են կատարում գյուղատնտեսության մեջ:

Կաթնատնտեսությունը ցածր մակարդակի վրա յե գտնվում և արդյունաբերական նշանակություն չունի: Ներկայումս շվեյցարական պանիր ստանալու փորձեր են կատարվում:

Մեղվաբուծություն

Ջեր շրջանում մեղվաբուծությանը պարագնում են: Կան այնպիսի ընտանիքներ, վորոնք բացառապես մեղվաբուծությումը զբաղվելիս լինեն: Ցեղեր կան, այդ գեպրում ստացված մեղրը վերտեղ են վաճառում:

Փեթակներն ինչ կազմություն ունեն. շրջանակավոր փեթակները շատ են: Մեղուները յերբ են բերք հավաքում:

Մեղվաբուծությունն Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ ոժանդակ գեր և կատարում: Նա տարածված է համարյա ամենուրեք, բացի չոր տափաստաններից ու լեռնային բարձր շրջաններից: Կան վայրեր, վորտեղ մեղվաբուծությունը նույնիսկ արդյունաբերական նշանակություն ունի:

Լեռնային և նախալեռնային շրջանները հարուստ են զանազան մեղրատու ծաղիկներով, վորոնք առատ բերք են տալիս մեղուներին: Մեղրւները բերք վերցնում են նաև ծառերից: լորենու մեղրը հոչակած է ամբողջ Անդրկովկասում:

Կովկասյան մեղուն համարվում ե լավագույնը. նա ունի յերկար կնճիթ, վորի շնորհիվ կարողանում է կարմիր առվուլտից բերք վերցնել: Այդ պատճառով Ամերիկայում, Անգլիայում և Ֆրանսիայում կովկասան մեղրի մայրերը բարձր են գնահատվում:

Ալպիսով մեղվաբուծության զարգացման համար բոլոր տըվյալները կան. բայց դժբախտաբար ազգաբնակությունը գեռևս ծանոթ չե մեղվաբուծության գիտական ձեռքին և համապատասխան ինամբ չի թափում: Մեծ մասամբ մեղուն պահվում է կողովներում, կեղեններում կամ ծառի կողճերի մեջ: Միայն վերջին տարիների ընթացքում շրջանակավոր փեթակները լայն ընդունելություն են գտնում գյուղերում:

Ամբողջ Անդրկովկասի ամենակարենոր մեղվաբուծական շրջանները գտնվում են Հայաստանում, վորտեղ մեղվաբուծությունն արդյունաբերական նշանակություն ունի: Նշանավոր են Դարաքիլիսայի, Լուսու և Դարալագվաղի շրջանները:

Հոռու և Ղարաքիլիսայի մեղրը հալտնի յե իր համով։ Նրա մեծ մասը վաճառվում է Թիֆլիսում։

Մեղվարուծությամբ պարապվում են նաև Վրաստանում, Աղրբեցանում։

Ենթամապահություն. Շերամապահությամբ Անդրկովկասում պարապում են շատ վաղուց, Շերամը մի թիթեռն, վորի վորդը մետաքս և պատրաստում։ Այդ վորդը կերակրվում է թթենու տերեներով։ Այդ պատճառով շերամապահությունը զարգանում է Անդրկովկասի տաք մասերում, վորտեղ աճում են թթենի ծառիր։

Վրաստանի շերամապահության գլխավոր շրջանները գտնվում են Սևծովյան դաշտավայրում, Հայաստանում աչքի յեն ընկնում Մեղրու և Ղափանի շրջանները, Ադրբեջանում՝ Նախիջևանի հանրապետությունը, Նուխու, Զագաթալայի շրջանները և այլն։

1927 թ. ամբողջ Անդրկովկասում ստացվել ե մոտ 4200 տոնն հում բոժոժ։ Բոժոժի բերքով առաջին տեղը բռնում է Վրաստանը։

Բոժոժներից ստանում են մետաքսի թեւ, վորի մի մասն ուղարկում են Մոսկվա, իսկ մի մասից ել տեղում պատրաստում են մետաքսե շալեր, թաշկինակները և այլն։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆՈՒՄ

Ինչպես տեսանք Անդրկովկասը գյուղատնտեսական լերկիր եւ Նրա ընակչության մոտ 76% համար ապրուստի գլխավոր միջոցը գյուղատնտեսությունն եւ Բայց դժբախտաբար գյուղատնտեսությունը մեզանում գեր շատ հետամնաց եւ նա չի տալիս այն արդյունքը, վորկարելի յեր սպասել։

Անդրկովկասի կլիման և հողը հնարավորություն և տալիս լայն չափով մշակել այնպիսի թանգարժեք բույսեր, ինչպիսին են՝ բամբակը, կենաֆը, խաղողը, ծխախոտը և այլն, վորոնք անհրաժեշտ են վոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Միության արդյունաբերության համար։ Մյուս կողմից ընական պայմանները նպաստավոր են և անառապահության համար, վորը կարող ե շուկա հանել մեծ քանակությամբ անասնապահական մթերքներ, յեթե անասուններն ապահովվեն կերով (ցանովի խոտով, ճակնդեղով, կարտոֆիլով և այլն)։

Այսպիսով գյուղատնտեսությունը պետք է այնպես վերակառուցել, վոր նրա ապրանքայինությունը բարձրանալ, Դրա համար Անդրկովկասի անտեսության հնգամյա պլանն առաջարկում է մի շարք մի-

ջոցներ—կողանտեսությունների ցանցի ընդարձակում, բերքատվության բարձրացում, գյուղատեսության ինդուստրացում և այլն:

Կոլտնեսուրյունների դերը գյուղատեսուրյան զարգացման մեջ.—Հետամնաց, մանր ու ցիրուցան, անկուլտուրական անհատ տնտեսությունները չեն կարող զարգանալ մի այնպիսի տեմպով, վոր համապատասխան լինի լերկրի սոցիալիստական վերակառուցման տեմպին։ Անհատ տնտեսությունները չեն կարող ձեռք բերել նորագույն, կատարելագործված գյուղատնտեսական գործիքներ և բարձրացնել հողի բերքատվությունը։ Դա հնարավոր է միայն տնտեսությունների խոշորացնելու, կոլեկտիվացման լենթարկեթու ճանապարհով։ Դրանով երացարգում այն հանգամանքը, վոր միլիոնավոր չքավոր տնտեսություններ ներկայումս միանալով իրար հետ կազմում են խոշոր կոլտնտեսություններ։

Կոլտնտեսության առավելությունն անհատական տնտեսության հանդեպ կարելի լեցուց տալ հետեւալ փաստերով։

1. Բերքատվությունը կոլտնտեսություններում ավելի բարձր եքան թե անհատական տնտեսություններում, որինակ, հետազոտությունը ցույց տվեց, վոր Հյուս։ Կովկասի կոլտնտեսություններում մեկ հետարից ստացվել է 30 ցենտներ բերք, այն ինչ նույն շրջանի անհատական տնտեսություններում՝ 11,8 ցենտներ։ Դա բացարձիւմ է նրանով, վոր կոլտնտեսությունները հողը մշակում են կատարելագործված մեքենաներով և պարարտացնում են զանազան պարարտանյութերով։

2. Ապրանքայնությունը կոլտնտեսություններում ավելի բարձր է, քան թե անհատական տնտեսություններում։ Ապրանքային մասը վորոշ շրջանի կոլտնտեսություններում կազմում է 40%, իսկ անհատական տնտեսություններում՝ 20%։

3. Կոլտնտեսություններում կովերի կարնաթվուրյունը բավական բարձր է, վորոշի հետև կոլտնտեսությաններում հնարավոր է կովերի կերակրելը, խնամքը, պահպանումը, ընարությունը և այլ նման աշխատանքներ ավելի լավ կազմակերպելու։

Կովի տարեկան միջին կաթնաթվությունը հետեւալ պատկերն ետալիս (Մոսկվայի շրջանի համար)։

կոլտնտեսություն	3.250	կիլոգրամ
անհատական տնտեսություն	806	»

Ահա այս առավելությունները նկատի ունենալով հնագամիա պլանով նախագծված ե առ 1-ը հունվարի 1930 թ. Անդրկովկասում կոլ-

Հեկտիվացման յենթարկել 100 հազար գլուղացիական տնտեսություն, վորոնց ցանքսերը կկազմեն Անդրկովկասի ամբողջ ցանքսի $170/0$ -ը:

1930-31 թ. կոլեկտիվացման կենթարկվեն բոլոր գլուղացիական տնտեսությունների $530/0$ -ը

Կոլտնտեսությունների արտադրանքի ապրանքայնությունը բարձրացնելու հայար առանձնապես ուշադրություն և դարձնվում նրանց մասնագիտացման վրա: Կոլտնտեսությունների մի մասը զրադվելու յետատկապես բարրակադրծությամբ, մի մասը՝ անասնապահությամբ, մի ուրիշ մասը՝ ծխախոտամշակությամբ և այլն:

Աղբբեջանում պետք ե լինեն՝

669	բամբակագործական	կոլտնտեսություն
134	կենափի	»
31	անասնապահական	»
10	ծխախոտի	»
260	այլ	»

Վրաստանում մեծ տեղ են բռնելու թեյի, ծխախոտի կոլտնտեսությունները: Հայաստանում (*Դարալազյաղում, Լենինականի և Սեմանի գավառներում* հիմնվում են զանազան անասնապահական կոլտնտեսություններ:

Կոլտնտեսությունների մասնագիտացումը կրարձրացնի մեր գլուղատանտեսության արտադրանքի ապրանքայնությունը: Նա հնարավորություն կտա բնական պայմաններն ավելի նպատակահարմար ձևով ոգտագործելու, ավելի լավ բերք ստանալու:

Խորհինեսուրյաններ.—Խորհինանտեսությունները (սովխոզները) ներկայումս մեծ դեր են կատարում մեր տնտեսության մեջ: Նրանք տակալիս են գործարանային հումուլիթ և սննդամթերք քաղաքի բնակչության համար: Այդ պատճառով հնգամյա պլանում առանձին ուշադրություն և դարձնվում խորհինանտեսությունների բազմացման և մասնագիտացման վրա:

1929 թ. Անդրկովկասում կար 85 խորհինանտեսություն, 7.300 հեկտար հողով: 1930-31 թ. հիմնվելու յեն 45 նոր խորհինանտեսություն, վորոնց շինարարության համար հատկացվում է 122 միլիոն սուրլի:

Խորհինանտեսությունների մի մասը հիմնվելու յեն խոշոր արդյունարերական քաղաքների շուրջը: Նրանց տնտեսությունը կլինի այգեսդրության, բանջարաբուծական, կաթնատնտեսական, թուչնաբուծական և այլն: Այդպիսով քաղաքի բանջարությունը հնարավորությունը կունենա ձեռք բերել թարմ սննդամթերք:

Մելիորացիա յել վոռողումը:—Անդրկովկասի ժողովրդական արն-

տեսության կարևոր խնդիրներից մեկը մելիորացիան և վոռոգումն եւ Վոռոգումը հնարավորություն կտա ընդարձակել ցանքսերը՝ կազմակերպել ինտենսիվ կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, բարձրացնել արդյունաբերական հումուրթի քանակը և այլն:

Վոռոգման գործն առաջ ե զնում շատ խոշոր թափով: Այդ յերեսում և հետեւալ տվյալներից պատերազմից առաջ Անդրկովկասում կար 744 հազար հեկտար ջրովի հող. 1925-26 թ. արդեն վոռոգվում եր 746 հազար հեկտար, 1926-27 թ.-763, 1927-28 թ.-784, 1928-29 թ. -826, իսկ հնգամյակի վերջում, այսինքն 1932-33 թ. մոտ 430.000 հեկտար: Այս հսկալական ջրովի տարածությունը տեխնիկական բույսերի մշակույթներով ծածկելու դեպքում զգալի չափով կբարձրացնի մեր տնտեսությունը:

Հայաստանում ավարտվելու լե վոռոգման գործը Փոքր Սարդարաբազում, (կտա նոր 42.000 հեկտար), Ալղըր-լճի շրջակայքում (4.000 հեկտար), վոռոգվելու յեն դաերը (50.000 հեկտար), Արագդալանը 10.000 հեկտար), չորացնվելու յեն Զանգիբասարը:

Վրաստանում վոռոգման միծ աշխատանքներ տանում են՝ Ալագանի հովտում, Ղարայազում, Եղբարի և Շիրակի տափաստաններում և այլն: Արևմտյան Վրաստանում չորացնվելու են ճահիճները:

Վոռոգման գործն առանձնատպես մեծ չափերի լին հասնում Աղբքիշանում, վորտեղ չոր տափաստաններն ավելի մեծ տեղ են բռնում: Նոր ջրանցքներ են կառուցվում Մուղանում, Միլի տափաստանում, Սալյանի տափաստանում և այլ տեղերում:

Այս հնգամյակում վոռոգման և մելիորացիայի գործի համար կառավարությունը հատկացրել է մոտ 160 միլիոն ռուբլի:

Վոռոգումը Անդրկովկասի համար կունենա և մի այլ նշանակություն: Ինչպես հայտնի լի, Անդրկովկասը ադրաբային-գերբնակվածյերկիր և Վոռոգմամբ ստացված նոր վարելահողերը հնարավորություն կտան խիտ բնակված տեղերից վոռոգվող տեղերը փոխադրել բազմաթիվ անտեսություններ: Ցենթրագրվում ե տեղափոխել 48.720 տնտեսություն, վորոնց կհատկացվի 242.990 հեկտար հող:

Մեքենայացում. — Ցանքսատարածության ընդարձակման հետ միասին հրահանգվում ե մեքենայացման յենթարկել զյուղատնտեսությունը, վորով կբարձրանա գյուղատնտեսության արտադրողականությունը:

Հնգամյա պլանով առաջին լեռեք տարվա ընթացքում կուլտուրական գութանը պետք ե դուրս մղի արորն ու չութը, իսկ հնգամյակի վերջում պետք ե այնքան նոր գութաններ ունենանք, վոր ամբողջ ցանքսերը հնարավոր լինի դրանով մշակելու: պետք ե ձեռք բեր-

վեն շարքացաններ, սերմագտիչ մեքենաներ, հնձող և կալսող մեքենաներ և այլն։ Գոմեշների և յեզների փոխարեն լերկրագործական մեքենաներն աշխատեցնելու յեն արակտորները։

Մասնավորապես այս տարի Հայաստան և ներմուծվելու 115 նոր տրակտոր, 6.850 դութան, 500 նոր բամբակացան մեջենա։ Շարքացան մեքենաների թիվը հասցնվելու յե 669-ի, իսկ տրակտորների թիվը՝ 586-ի

Առանձին ուշադրություն ե դարձնվում մեքենա-տրակտորային կայանների վրա։ Ներկայում Անդրկովկասում գոյություն ունեն 6 մեքենա-տրակտորային կայան, ծրագրվում ե առաջիկա՝ 1930-31 թ. հիմնել 20 նոր մեքենա-տրակտորային կայան։

Դյուլասեսեսուրյան ինդուստրացումը։ — Հնդամլա պլանը ուշադրություն ե դարձնում վոչ միայն գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնության մեծացման վրա, այլև այդ ապրանքի վորակը բարձրացնելու վրա։ Այդ նպատակով ծրագրված ե վերամշակության յենթարկել գյուղատնտեսության արտադրանքը։

Կարնահենեսուրյան զարգացման հետ միասին, հիմնվելու յե պանրի և յուղի գործարանները՝ 1932 թ. վերջը Հայաստանում ստացվելու յե 1.150 տոնն շվեյցարական պանիր, 250 տոնն կարագ, 165 տոնն սիջուկի կարագ, 5.000 տոնն ապրանքալին կաթ։

Հիմնվելու յեն նոր մառաններ գինու համար, պահեստաբաններ ծխախոտի համար, նոր գործարաններ այգեգործության արտադրանքը վերամշակելու համար (միրգ չորացնելու և կոնսերվի գործարաններ), բոժոքի չորանոցներ, շաքարի գործարաններ (լենինականում և Գորում) ճակնդեղը վերամշակելու համար և այլն։

Բերեատլուրյան բարձրացումը։ — Անդրկովկասի գյուղատնտեսության կարևոր խնդիրներից մեկն ել բերեատլոյան բարձրացումն եւ Բացի մեքենայացումից հնդամլա պլանը ուշադրություն ե դարձնում նաև հողերի պարարտացման վրա։ Հնդամյակի ընթացքում պիտք ե պարարտացնելին պարարտացման կարիք ունեցող բամբակի ցանքսի 77°/₀-ը, հացահատիկների ցանքսի 15°/₀-ը։

Գյուղատնտեսությանը պարարտանյութ մատակարարելու համար կառուցվում են հատուկ գործարաններ, որինակ՝ Ղարաքիլսալում կառուցվում ե ցիանամիջի, իսկ Ալահվերդում՝ սուպերֆուսիոն գործարաններ։ Ցիանամիջը և սուպերֆուսիոն պարարտանլութեր են։ Հայաստանում բերքատվությունը հետեւյալ պատկերը կտա հնդամյակի վերջում։

	1927 թ. մեկ	1932 թ. մեկ
Հացահատիկ	8,2 ցենտներ	11 ցենտներ
Բամբակ	7,9 »	12 »
Ծխախոտ	7,1 »	10,3 »

Անասնապահություն. — Անդրկովկասի գյուղատնտեսության համապահության պատճառներից մեկն ել պետք ե համարել բոչվորային և կիսաբոշվորային անասնապահությունը։ Հնդամբակի ընթացքում պարքար պետք ե մզվի այդ ձեւի անասնապահության դեմ և դրա փոխարեն դաշտային շրջաններում պետք ե զարգանա կուլտուրական լերկրագործությունը, իսկ լեռնային շրջաններում՝ ալպյան տնտեսությունը։

Ինական պայմաններն առանձնապես նպաստավոր են միերանու անասնապահության, ինչպես և անասնապահության մանր ճյուղերի համար (կաթնատնտեսություն, մսատու և բրդատու վոչխարաբուծություն, խոզաբուծություն, շերամապահություն և թոչնապահություն)։

Անասուններին կերպվ ապահովելու համար ընդարձակվում ե խոռոշի և արմատապատռղների ցանքսերը։

Վերը հիշած միջոցների հետևանքով ցանքսերը հնդամբակին կընդարձակվեն $26,50\%$ -ով (1927 թվականի համեմատությամբ), Հացահատիկների ցանքսերը կնդարձակվեն մոտ 130% -ով տեխնիկական բուլսերինը՝ 1080% -ով, ցանովի խոտերինը՝ 8640% -ով (1927 թ. համեմատությամբ)։

Ցերկրագործության մեջ կրաքրանա տեխնիկական բուլսերի և ցանովի խոտերի նշանակությունը։

Միաժամանակ կրաքրանա բերքատվությունը — հացահատիկներինը սրբին հաշվով 200% -ով, բամբակինը՝ 700% -ով (կոլտնտեսություններում նույնիսկ 1150% -ով)։

Կմեծանա անասունների թիվը, կրաքրանա կաթնատվությունը։

Հնդամբակի ընթացքում առանձնապես միծանում ե բամբակի դերը. հնդամբակի վերջում Անդրկովկասում բամբակի ցանքսերը կհասնեն մոտ 240.000 հեկտարի (1914 թ. 140 հազար եր)։

Կմեծանա վոչ միայն բամբակի, այլև գյուղատնտեսական այլ հումուզների ապրանքային մասը (կարտոֆիլ, ճակնդեղ, կաշի, բուրդ, բոժոժ և այլն)։

Ինչնել գյուղատնտեսությունն Անդրկովկասում բավական շատ ճյուղեր ունի։

Վա՞՞ հացահատիկներն են տարածված Անդրկովկասում և նրանց բերքը բավականական է։

Ի՞նչ տեխնիկական բուլսեր են մշակվում և Անդրկովկասի վեր մասերում։

Ի՞նչ միջոցներ պետք ե գործ դնել, վորպեսզի գյուղատնտեսությունն ավելի մեծ արդյունք տալ։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսանք, վոր Անդրկովկասը հարուստ և զանագան հանքերով, ունի «սպիտակ ածուխի» մեծ պաշար և դյուղատնտեսական հումույթ: Բայց հեղափոխությունից առաջ վերամշակության լենթարկվում եյին գլխավորապես նավթը և մանգանը, այն ել բացառապես արտահանության համար:

Բացի արէ՝ քիչ թե շատ զարգացել ելին պղնձի արդյունաբերությունը և բամբակազտումը:

Միայն հեղափոխությունից հետո արդյունաբերությունը հնարավորություն և ստանում զարգանալու, կառավարությունը դրամական միջոցներ և հատկացնում ուսումնասիրելու լիրկրի բնական հարստությունները, հիմնվում են զանազան գործարաններ այդ հարստությունները վերամշակության յենթարկելու, անցկացնում նոր լերկաթուղիներ և խճուղիներ, հիմնվում են խոշոր ելեկտրակայաններ և այլն:

Նավթի արդյունաբերություն.—Բազմի նավթի արդյունաբերությունը Անդրկովկասի արդյունաբերության միակ խոշոր ճյուղն ե, վորը ունի վոչ միայն համամիութենական, այլև համաշխարհային նշանակություն:

Գետնի խորքից (400, 600 մետր և ավելի խորքությունից) զանազան մեքենաներով հում նավթը հանում են և ապա փոխադրում գործարան, վորտեղ թորման միջոցով նրանից ստանում են լուսավորության նավթ (կերասին), զանազան յուղեր (մեքենաներ յուղելու համար), մազուր և այլն: Բազմի նավթի մի մասը կասպից ծովով փոխադրում են Աստրախան, այստեղից Վոլգայով գետի ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասը և Սիբիր. մյուս մասը նավթատար խողովակով մղում են Բաթում, վորտեղից նավերով արտահանվում և թյուրքիա և Արևմտյան Ցեմքրոպա:

ԽՍՀՄ-ում ստացվող ամբողջ նավթի կեսից ավելին տալիս են Բագուն:

1927-28 թ. Բազմում ստացվել և մոտ 7.734.000 տոնն հում նավթ, վորից՝

Լուսավորության նավթ	1.317.000	տոնն
Ցուկեր մեքենաների համար	283.000	»
Բենզին	265.000	»
Նավթային մասը (մազութ)	3.199.000	»
Այլ նյութեր	81.000	»

Այս հնդամլակում հատկացված ե մոտ 880 միլիոն ռուբլի, վորէ մի մասը ծախսվելու յև նավթահանքի պաշարի քանակը վերջնականագելեն պարզելու համար, իսկ մյուս մասը՝ նավթի արդյունաբերությունը լայնացնելու համար:

Մանգանի արդյունաբերությունը.—Հանքալին արդյունաբերության յերկրորդ խոշոր ճյուղը, վոր նույնպիս համաշխարհալին նշանակություն ունի, դա մանգանի արդյունաբերությունն եւ:

Այս հնդամյակի ընթացքում պետք ե մեքենայացման լենթարկվեն մանգանի արտադրությունը, փոխադրությունը, հանքի լը-վալը և բարձելը: Միաժամանակ հետազոտվում են մանգանի նոր հանքատեղերը:

Հնդամյա պլանը նախագծում է նաև խոշոր ֆերրո մանգանի գործարանի կառուցումը, վորը տալու յե 100—150 հազար տոնն մետաղ (ֆերրո-մանգան): Մանգանը և նավթը Անդրկովկասից արտահանվող ալլրանքների մեջ առաջին տեղն են բռնում:

Մանգանն արտահանվում ե Փոքի նավահանգստով:



Նկ. 19. Դամարի պղնձի հալոցները.

Պղնձի արդյունաբերություն.—Պղնձի արդյունաբերությունը կհնարոնդաց է Հայաստանում (Ալահվերդի, Զանգեզուր), Մլահվերդու և

Զանգեղուրի կոմբինատներում պատերազմից առաջ ստացվում եր մոտ 4.600 տոնն պղինձն Պատերազմի ընթացքում պղնձի արդյունաբերությունը համարյա կանդ առավ, բայց կառավարության ձեռք առած միջոցների շնորհիվ նա կրկին վերականգնվեց, այնպես վոր 1927-28 թ. ստացված կարմիր պղնձի քանակը մինչև 2.153 տոննի:

Հնդամյակի ընթացքում պղնձի արդյունաբերությունը պեսաք երաբձրանա այնպիսի թափով, վոր 1930/31 թ. պղնձի քանակը հավասարվի մինչպատերազմյան քանակին, այսինքն ստացվելու յի 4.675 տոնն պղինձն, իսկ 1932/33 թ. արդեն 8.120 տոնն, այսինքն ավելի քան պատերազմից առաջ:

Հայաստանի պղնձի արդյունաբերությունը բարձրացնելու համար կառուցվում ե մի յերկաթուղի, վորը Ղաթարի պղնձահանքերը միացնելու յի Զուլֆա-Բագու գծի հիա: Բացի ալդ՝ հատկացված են գրամական մեծ միջոցներ ինչպես լրացուցիչ վերանորոգությունների, այնպես ել հանքատեղերի հետազոտության համար.

Քարածխային արդյունաբերությունն. — Ներկայումս քարածուխը ստացվում ե միայն Տղիբուլիում (Վրաստանում) 1927-28 թ. այստեղ ստացվելի 84.789 տոնն քարածուխ: Շնորհիվ գործ դրած միջոցների քարածուխի արտադրությունը հնդամյակի վերջում կհասնի 300.000 տոննի: Տղիբուլու քարածուխը գործ ե ածվում գլխավորապես յերկաթուղային տրանսպորտի մեջ, բայց այժմ կառուցվում ե բրիկետի գործարան, վորը հնարավորություն կտա քարածուխը վորպես վատելիք գործածել նաև խոշոր քաղաքներում: Ավելի կարեռ նշանակություն կունենա Տղվարչելու քարածուխը (Արխագիայում), վորովհետև նրանից կարելի յի ստանալ Կոքս սև մետալլուրգիայի համար: Այդ քարածուխի հանքերը մշակելու համար ներկայումս կատարվում են նախապատրաստական աշխատանքներ:

Վորոշված ե Ոչեմչիրելում (Սև ծովի ափին) կառուցել կոքսի գործարան, վորտեղ Տղվարչելու քարածուխից կստացվի կոքս: Տղվարչելու ածխահանքերը յերկաթուղով միացնել Ոչեմչիրելի հետ կոքսը Ոչեմչիրելից կփոխադրվի Դանձակ մետալլուրգիական գործարանի համար:

Սել մետալլուրգիա. — Դանձակում կառուցվում ե մետալլուրգիական գործարան, վորտեղ վերամշակվելու յի Դաշքեսանի յերկաթահանքը: Այդ գործարանի արտադրած յերկաթի քանակը հասնելու յի մոտ 500.000 տոննի: Դաշքեսանի հանքերից մինչև Դանձակ անցնելու յի հատուկ յերկաթուղի:

Միտադագործական արդյունաբերությունն.—Մետաղագործական հիմնարկությունները զանվում են Աղբբեջանում: Յերևանում ավարտվում են խոշոր մեքենայական գործարանի աշխատանքները: Մրագրված ե Թիֆլիսում կառուցել մի նոր մետաղագործական գործարան ևս, վորից հեխսրից մեկում պատրաստվելու ինն գյուղատնտեսական գործիքներ:

Եթեարարական նյութերի արդյունաբերությունը.—Այն հակայական շինարարական աշխատանքները, վոր սկսված են Անդրկովկասում, պահանջում են մեծ քանակությամբ շինանյութ, որինակ, ցեմենտ, աղյուս, դաճ և ալյու:

Շինանյութերի մեջ խոշոր նշանակություն են ստանում տուֆը և պեմզան (Հայաստանում), վորոնց արտադրությունը հետզհետեք բարձրանում է: Փոքր քանակությամբ ցեմենտ ստացվում է Աղբբեջանում, բայց նա բոլորովին չի կարող բավարարել Անդրկովկասի կարիքներին, այդ պատճառով վորոշված է հիմնել ցեմենտի նոր գործարաններ թե Հայաստանում և թե Վրաստանում: Դրանց հետմիասին կառուցվում են նաև գաճի և կրի նոր գործարաններ:

Քիմիական արդյունաբերությունն.—Ելիքտրական եժան հներդիան և հանքային հարսառությունները հնավորություն են տալիս քիմիական արդյունաբերությունը լայն չափերի հասցնելու:

Ցեթե հաշվելու չլինենք Բագվի ծծմբաթթվի գործարանը, Անդրկովկասում մինչև խորհրդայնացումը քիմիական արդյունաբերությունը սաղմային վիճակում եր գտնվում:

Հնդամյա պլանով ծրագրված է կառուցել ծծմբաթթվի, պղինձարջասպի, ցիանամիդի, սոդալի, շրի և այլ գործարաններ:

Ցերեանում 1927 թվին կառուցվեց կարբիդի գործարան, վորի արտադրանքը տարածվում և ամբողջ Անդրկովկասում:

Բերքատվությունը բարձրացնելու համար սկետք է կառուցվեն միքանի գործարաններ, վորտեղ կպատրաստվեն քիմիական պարարտանյութեր: Մի այդպիսի գործարան (ցիանամիդի) կառուցվում է Ղարաբիլիսայում:

Ալլահվերդում կառուցվում է ծծմբաթթվի և պղնձի-արջասպի գործարաններ, Ալլահվերդու մոտերքը՝ սուակերֆուֆատի գործարան և ալյու:

Տեխսիլ արդյունագործարքյունն.—Անդրկովկասը տեքստիլ արդյունագործության զարգացման համար նպաստավոր պայմաններ ունի. այստեղ ստացվում է և բամբակ, և բուրդ, և մետաքս: Բայց ցարական կառավարությունը հնարավորություն չեր տալիս, վոր արդյունագործության այդ ճյուղը մեզնում լայն չափերի հասնի: Խորհրդայնացու-

մից հետո սկսվում ե յեռանդուն աշխատանք առանձնապես բամբակի վերամշակության ասպարիզում։ Վերակառուցվում ե Բագվի Լենինի անվան Փարբիկան, կառուցվում են յերկու խոշոր Փարբիկա (Լենինականում և Գանձակում), վորոնք մասամբ արդեն աշխատում են։ Հնգամյակի վերջում իլիկների թիվը պետք է հասցնվի 281 հազարի, իսկ դազգահների թիվը՝ մոտ 8 հազարի։

Բըդի արդյունագործությանը նույնպես պետք է ընդարձակվի։ Բըդի գործվածքներ արդեն ստացվում են Քութալիսի և Գանձակի գործարաններում։ Կառուցվում ե բրդի նոր գործարան Թիֆլիսում, Թթենիների տնկարանների ընդարձակումը, շերամի վորդի կանոնավոր խնամքը և մուս կողմից մետաքսի խոշոր հիմնարկությունների կառուցումը մետքսագործությունը կդարձնի Անդրկովկասի արդյունագործության գլխավոր ճյուղերից մեկը։

1927-28 թ. ամբողջ Անդրկովկասում ստացվել ե.

Բամբակի թել	2.742	տոնն
Բյազ	15.746.000	մետր
Բըդի թել	343	տոնն
Բըդի գործվածք	292.000	մետր
Մետաքսի թել	50.589	կգր.

Գինի-սպիրտ-կոնյակի արդյունաբերությանը։ — Մինչև խորհրդայնացումը Անդրկովկասում շնորհիվ մեծ քանակությամբ ստացվող խաղողի գոյություն ուներ զինու, սպիրտի և կոնյակի արդյունաբերություն։

Հնգամյակի ընթացքում արդ արդյունաբերությունը պետք է վերակառուցվի և լայնացվի։ Շինվելու լին նոր մասնաներ և պահեստարաններ, պետք ե պայքար մղվի Փիլոքսերայի դեմ, վորը վոչնչացնում ե խաղողի այգիները և ընդհանրապես զինու և կոնյակի վորակը բարձրացնելու համար հնգամյակի ընթացքում պետք ե դիմվի միշտաք միջոցների։ Արդյունաբերության մնացած ճյուղերից հիշենք պահածոների արտադրությունը, շաքարի արտադրությունը (Լենինական, Գորի) կաշեգործությունը, սալոնի արտադրությունը, ձկնորսությունը և ալյն, վորոնց զարգացման համար Անդրկովկասը բավական նպաստավոր պայմաններ ունի։

Պահածոներից աչքի յեն ընկնում Յերևանի դեղձի և ծիրանի կոնսերվարը, ձկնորսությամբ՝ կուրի սառուին հոսանքը (Սալյանի ձլկոնորսարանները) և Սևանը։ Ջուկը և կոնսերվարը արտահանվում են։

ԵԼԵԿՏՐԻՑԻԿԱՑԻԱ

Դործարանների մեքենաները աշխատացնելու քիմիական պարաբռանյութեր պատրաստելու կամ մետաղներ հալելու համար անհրաժեշտ և վորոշ եներգիա: Այդ նպատակով մենք կարող ենք գործածել նավթը և քարածուխը, վորով մեր լերկիրը շատ հարուստ են: Բայց ավելի նպատակահարմար և այդ նյութերը գործածել ուրիշ պետքերի համար, իսկ արդյունաբերության և տրանսպորտի կարիքների համար զործածել ըսպիտակ ածուխը կամ հոսող ջրի եներգիան:

Ջրի ուժով կարելի է պտտել դինամո-մեքենայի խարիսխը և ստանալ ելեկտրական հոսանք: Այն կայարանները, վորտեղ ջրի ուժով ելեկտրական հոսանք և ստացվում, կոչվում են ջրելեկտրակայառաններ: Այդպիսի կոյարաններ են Յերևանի, Լենինականի, Թիֆլիսի (Զագես) ելեկտրակայարանները: Թե վորքան մեծ նշանակություն ունի ելեկտրական հոսանքը, այդ լերեւում և հետևյալ որինակից: Յերևանի ելեկտրակայանը լուսավորում և քաղաքը, եներգիա և տալիս կարբողի գործարաններ, աշխատեցնում և Այդր-լճի ջրհան մեքենաները, վորոնք այդ լճից ջուրը հանում են և մղում վարելահողերը և ալին: Ժողովրդական տնտեսության զարգացման հետ միասին մեծանում և ելեկտրական եներգիայի գործածությունը, ինչպես ալդ ցույց են տալիս թվերը.

Ելեկտր. եներգիայի գործածությունը
(միլիոն կիլովատտ-ժամերով)

1926—27 թ.

313

1927—28 թ.

350

1928—29 թ.

438,5

Հնդկամյակի ընթացքում ելեկտրական եներգիայի գործածությունը պետք է 350 միլիոն կիլովատտ-ժամից (1927—28 թ.) բարձրանա մինչև 1,035 կիլովատտ-ժամ (1932—33 թ.):


Այդ նպատակով հնդկամյա պլանը ծրագրում և ավարտել Զորագեսի (20,000 կվ.) և Միոնի (41,000 կվ.) շրջանային ելեկտրակայանների աշխատանքները, ընդարձակել Զագեսը (12,800 կվ.ից մինչև 38,400 կվ.): Միաժամանակ պլանը ծրագրում և սկսել Քանաքեռի ելեկտրական կայարանի (15,000—30,000 կվ.) կառուցումը—Հայաստանում, Կարս-Սամկալի ելեկտր. կայարանը (30,000)—Աղբքաջանում և ընդարձակել Աղնաֆթի ելեկտրական կայարանները:

Բացի այդ՝ ընդարձակիվելու յին հետեւյալ ելեկտրական կայարանները—Յերևանի (1,760-ից մինչև 4,500 կվ.) և Լենինականի (2,000-ից

մինչև 5.200 կվ.), Արաշի (600-ից մինչև 2.400 կվ.), Մըրագրված և կառուցել ելեկտրակայարաններ Գումիստա գետի վրա (1,750 կվ) — Սուխումի շրջանի համար, Գալիսդա գետի վրա (3,650 կվ.) — Տղվարչելի քարածիսային շրջանի համար, Արասթումանի, Բորժոմի, Կախեթի, Նախիջևանի և այլն.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿԱՅԹՈՒՂԻՆԵՐԸ

Անդրկովկասը լեռնոտ յերկիր և և զուրկ բնական հարմար ճանապարհներից, Գետերը մանր են և արագունու, Այս ու այն ուղղությամբ անցնում են զանազան լեռներ, վորոնք դժվարացնում են Անդրկովկասի տարրեր մասերի կապը, Այդ պատճառով յերկաթուղիները մեր յերկիրի տնտեսության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունեն: Նրանց միջոցով մեր յերկիրն առնետուր և անում ԽՍՀՄ-ի յելքոպական մասի հետ, մյուս կողմից այդ յերկաթուղիները Անդրկովկասի հարուստ շրջանները կապում ե խոշոր կենտրոնների հետ, որինակ՝ կախեթը կապվում ե Թիֆլիսի հետ, ձիաթու-



Նկ. 20. Սուբամի տունելը.

բալի հանքային շրջանը կապվում է Անդրկովկասի զլիսավոր յերկաթուղու հետ, վորը հնարավորություն և տալիս մանգանը փոխադրել Բաթում, այնտեղից ել արտասահման:

Անդրկովկասի յերկաթուղիների ընդհանուր յերկարությունն է 2.162 կիլոմետր:

Անդրկովկասի ամենագլխավոր յերկաթուղին սկսվում է Բաղվից
և Թիֆլիսի վրացով հասնում և մինչև Բաթում։ Այսպիսով այդ գիծը
մի կողմից միանում է Բագու նավահանգիստի հետ, մյուս կողմից՝
Բաթում նավահանգիստի հետ։ Այդ գծից սկսվում են միքանի ճյու-
ղեր, վորոնցից ամենակարենը և մեծը՝ Թիֆլիս-Լենինական-Յերևան-
Զուլֆա գիծն եւ Այս գծով Հայաստանը կապվում է Պարսկաստանի և
Թուրքիայի հետ և մյուս կողմից՝ Թիֆլիս-Բաթում, Թիֆլիս-Բա-
ղու գծերի հետ։

Մյուս գծերից հիշենք.

1. Կախերի յերկարուղին—Թիֆլիսը միացնում է գինեզործու-
թլամբ հարուստ Կախիթի հետ։

2. Բորժոմ-Բուկուրիանի գիծը—Կուրորտաները միացնում են գլխա-
վոր յերկաթուղային գծի հետ։

3. Ճիարուցայի գիծը—մանգանի հանքավայրերը միացնում են
գլխավոր յերկաթուղու հետ։

4. Տղիբուլի-Քութալիսի գիծը—քարածխի հանքավայրերը մի-
ացնում են գլխավոր գծի հետ։

5. Լենինական-Արտիկ, Սամարեգի-Փոթի և ալլն։

Յերկարուղային օնիարագուրյունը ննգամյա պլանում, Գլուղատնտե-
սության և արդյունաբերության արտադրանքը հնգամյակի ընթաց-
քում արագ թափով մեծանալու յեւ հետեապես գոյութիւնն ունեցող
յերկաթուղիները պետք են հարմարվեն մեծ քանակությունը բեռներ
ալս ու այն կողմը փոխազրելու համար։ Այս նպատակով պետք ե-
տեղաբեր գլխավոր գծին զուգահեռ շինվեն նոր գծեր, եկեկտրիֆի-
կացիայի պետք են լինթարկվեն Սանահին-Լենինական և Սուրամի
լեռնանցքի գծերը և ալլն։

Միաժամանակ կառուցվելու լեն նոր գծեր։

Սևովյան և Բագու—Զուլֆա գծերն ավարտելու համար հատկա-
ցրված են 78 միլիոն ոռություն։ Սևովյան գծից մնում են կառուցել 171
կիլոմետր, Բագու—Զուլֆա գծից 149 կիլոմետր—ընդամենը՝ 320 կի-
լոմետր։ Այս յերկաթուղիները կարենը նշանակություն կունենան
վոչ միայն Անդրկովկասի, ալլ և ամբողջ միության համար։

Պլանի համաձայն գլխավոր գծերից գեպի զանազան տնտեսա-
կան շրջաններ անցնելու լեն մի շարք նոր յերկաթուղիներ, ալսպես,
որինակ, Սևովյան յերկաթուղուց հնգամյակի ընթացքում կառուց-
վելու յեւ Ուշեմչիրի-Տղվարչելի գիծը (քարածուխ), Զուլֆա-Բագու
գծից՝ Ոխճի-Նաթար գիծը (պղինձ), Բաթում-Թիֆլիս-Բագու գիծից՝
Գանձակ-Դաշքեսան գիծը (յերկաթ)։ Բացի այս արդյունաբերական

դերից կառուցվելու յեն նաև մի շարք գլուղատնեսական ճյուղեր—
1) Յելլախ-Ստեփանակերտ, 2) Սարիբաբադ-Սարիջալար (բամբակ),
Թելավ-Ախմետի (փայտ), Աղստաֆան-հջական և այլն: Հնդկամենը հըն-
դամիակի ընթացքում կառուցվելու յէ 472 կիլոմետր լերկարությամբ
նոր յերկաթուղալին գիծ: Այդ բոլորի համար հատկացված և մոտ
120 մելլոն ոռութիւն:

Անդրկովկասի կենտրոնն և Թիֆլիսը, վոր
Անգրկովկասի գլխա- միենուն ժամանսկ կենտրոն և Վրաստանի
վոր բազաքիւրը. հանրապետության համար Ունի բարձրա-
գույն դպրոցներ, սապնի, ձեթի, ծխախոտի, մանվածքների, սպիրտի
գործարաններ: Առևտրական խոշոր նշանակություն ունի:

Վրաստանի մլուս քաղաքներից նշանավոր են՝

Բարսմբ—գտնվում ե Սև ծովի ափին. նավահանհիստ և Աջար-
ստանի վարչական կենտրոնն ե:

Սուլիսում—Արխագիրյի կենտրոնն ե: Մխախուտ:

Փօրի—նավահանգիստ և Սև ծովի ափին: Քուրայիս—Վրաստա-
նի յերկրորդ մեծ քաղաքն ե: Գորի—ալգեգործական շրջանի կենտ-
րոն, Բորժոմ և Աբասուլիման—հայտնի բուժարաններ են, Ախալցիս,
Սամբեդրի, Թելյավ, Սղնախ, Ծիփնիսալ, Լալիսիբրուրգ, Շահումյան և այլն:

Հայաստանի վարչական կենտրոնը Յերեվանն է, վորը ունի
բարձրագույն դպրոցներ, սպիրտի, կաշվի, բամբակի, ձեթի, կարրիղի
գործարաններ և այլն:

Լենինական—Հայաստանի յերկրորդ մեծ քաղաքն է. հայտնի իր
բամբակի գործվածքների գործարանով. առևտուր Թիուրքիայի հետ:
Ղարաբիլիսա—մեղք, ամառանոց: Աւարակ—գինի: Վարաւապատ: Դի-
լիջան—ամառանոց, Կուրորտ: Նոր Բայազես, Սեմիանավան—պանրա-
գործարաններ, Գորիս—Զանգեզուրի կենտրոնն է. Քեչիքենի, Մեղրի,
Ղարաբ (պղնձահանքեր), Ալանիբերդի (պղնձահանքեր):

Աղբքեցանի գլխավոր կենտրոնը Բագուն է, վոր հայտնի յէ իր
նավթային հարստություններով. նավահանգիստ և ունի քիմիական
գործարաններ, բարձրագույն դպրոցներ և այլն, Գանձակ—գինեգոր-
ծության և բամբակի կենտրոն:

Նախիջեվան—համանուն հանրապետության կենտրոնն է. աղա-
հանքեր: Սեմիանակիւրս—ինքնավար Ղարաբաղի կենտրոնն է: Նուխի,
Շամախի, Սալյան (ձկնորսարաններ), Լենինական, Կուբա, Աղբաւմ և այլն:

Անդրկովկասի քարանդի վրա գտեք այդ քաղաքները: Քարտեզի ող-
նությամբ գտեք այն ճանապարհները, վարոնցով կարսկեք ձեր շրջանից գնալ
Անդրկովկասի համբ քարտեզի վրա նշանակեցեք գլխավոր քաղաքները:

Անդրկովկասի ամենամուգ քաղաքը գործն ե: Դուք վոր գոր գաջառում եք
ապրում, ձեր զայտաք կենտրոնն ինչպես և կոչվում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱԾ

Հյուսիսային կովկասի ափերն ի՞նչ ծովեր են վողողում:

Գտեք նրա սահմանները,

Հյուս. կովկասն ի՞նչպիսի մակերեսութ ունի. լեռները նրա վեր կողման են բարձրանում

Գտեք գլխավոր գետերը. նրանք վարտեղից են սկսվում և գեպի հեր են հոսում:

Հյուս. կովկասի արևմայան մասերն են շատ վոռովզմանը թե արևելյանը ծույց տվեք Ռազմավիրական ճանապարհը Նա Անդրկովկասի վեր քաղաքում և սկսվում է գեպի վեր քաղաքն ե դուռմ:

Ծույց տվեք զիմանակոր յերկարութային գծերը. Գտեք Յերեան—ԲագուՄախչկալա—Վլադիկավկադ—Խոստով յերկարութային ղեծը:

Սկ և կասպից ծովերի ափին ի՞նչ նավահանգիստներ կան (Հյուս. կովկասի սահմաններում):

Հյուսիսային կովկասը տարածվում է կովկասյան լեռներից մինչև կումա-Մանիչի ցածրությանը և կասպից ծովից մինչև Սկ և Ազովի ծովերը:

1925 թ. Հյուսիսային կովկասը Դոնի ավագանի հարավային և Դոնքասսի արևելյան մասի հետ կազմեց մի առանձին վարչական միավոր, վորը կոչվում է Հյուսիս-կովկասյան յերկիր Բացի Հյուսիսային կովկասի հարթ մասերից, Հյուսիս-կովկասյան յերկրի մեջ մտան և այն ազգային հանրապետությունները, վորոնք գտնվում են կովկասյան լեռներից հյուսիս Հյուսիս-կովկասյան յերկրից դուրս մնաց Դաղստանի հանրապետությունը:

Հյուսիսային կովկասի մասին խոսելիս մենք նկատի կունենանք նաև Դոնքասսի արևելյան մասը և Դոնի ավագանի հարավային մասը:

Անդրկովկասից կարող ենք Հյուսիսային կովկաս գնալ հետեւալ ճանապարհներով 1. Յերեան—Թիֆլիս—Բագու-Մախչկալա—Վլադիկավկադ (ցույց տվեք), 2. Յերեան—Թիֆլիս—Բաթում—Նովորոսսիյսկ—Կրասնոդար (ցույց տվեք), 3. Յերեան—Թիֆլիս—Վլադիկավկադ (Ռազմավիրական ճանապարհով), 4. Յերեան—Բաթում—Կերչ—Ռուստով:

Հյուսիսային կովկասի մակերեսութի մեծ մասը հարթություն և, վորն սկսվում է կովկասյան լեռների ստորոտներից և տարածվում է և մինչև կումա-Մանիչի ցածրությունը. Այդ հարթության մեջտեղը բարձրանում է Ստավրոպոլի բարձրավանդակը, վորով Հյուս. կովկասը բաժանվում է յերկու մասի՝ Արևիլյան և Արեվմելյան:

Արևմայան տափաստանները վոռովզման մեջ մասը հարթություն է,

միներով, ծածկված են արգավանդ սեահողով և յերկրագործության համար շատ հարմար են. արեւլլան տափաստաններն, ընդհակառակը, չոր են և հողը բաղկացած ե կալից, ավազից և աղուտներից:

Գետերն սկսվում են Կովկասյան լեռնաշղթայից և հոսում են դեպի հյուսիս, բայց Ստավրոպոլի բարձրավանդակի պատճառով փոխում են իրենց ընթացքը և ծովում դեպի Սև և Կասպից ծովերը: Մերձկասպյան տափաստանների գետերը մեծ մասամբ սակավաշղուը են և շատերը ծովը չհասած կորչում են ավազների մեջ: Դեպի Կասպից ծովը հոսող գետերից ամենամեծը Տերեկն է, վորն սկսվում ե Կովկասյան լեռնաշղթայի սառցադաշտերից և Դարյալի կիրճով, Վլազիկավագոյի միջով հոսում ե գետի Կասպից ծովը՝ Կուման նույնագետն լեռնաշղթայից և սկսվում է հասած մեջ և գոյացնում ճահիճները. միայն գարնան վարարութիւնի ժամանակ նա կարողանում է թափվել Կասպից ծովը. Կուբանի սկսվում ե Ելբրուսի սառցադաշտերից. հոսում ե նաև գետի հյուսիս, ապա դեպի արևմուտք և մի ճյուղով թափվում ե Ազովի, մյուս ճյուղով՝ Սև ծովի մեջ:


Հյուսիս-Կովկասյան յերկրի սահմաններում հոսում ե նաև Դոնը, Պորը թափվում ե Ազովի ծովը:

Թթակիչենը յեվ Հյուսիս-Կովկասում ազդարնակությունը բաղեցանց պարտապմունքը կացած և շատ ժողովուրդներից: Դրանց մեջ առաջին տեղը բռնում են ուկրաինացիները (կազակները), առաջ ուստի լեռների ստորոտներում և հովիտներում ապրում են՝ կովկասյան ժողովուրդները՝ կաբարդիները, սաերը, ինգուտները և այլն:

Ուկրաինացիներն ու ուստի ապրանքում են գլխավորապես յերկրագործությամբ և անասնապահությամբ: Արևմայան սեահողալին տափաստանները ԽՍՀՄ-ի ամենահարուստ գյուղացիական շրջաններից մեկն ե, Մշակվում են մեծ քանակությամբ հացահատիկներ (ցորեն, գարի, ինգիպացորեն), փրունց բերքն այնքան մեծ ե լինում, վոր մի մասը փոխադրվում ե Մոսկովի, Մյուս մասը՝ Նովորոսսիյակի վրայով արտասահմանու Ալդ հացի մի մասն ել ստանուու ենք մենք (Կուբանի հաց): Բազմաթիվ կոլտնտեսությունների և խորհունտեսությունների շնորհիվ յերկրագործությունը զտրգանում ե արագ թափու: Տրաֆտորներն ու գյուղատնտեսական մեքենաները մեծ չափերով արածված են ամրող յերկրում: Բարձրանում ե բերքատվությունը: 1929 թ. ամառը կատարված հետազոտությունները ցուց տվին, վոր կոլտնտեսություններում մի հեկտարից ստացվել ե 30

ցենտներ բերք, ալնինչ շրջանի մասնավոր տնտեսությունների մեջ՝
11,8 ցենտներ:

Բացի հացահատիկներից տարածված են արեվածադիկը, ծխա-



Նկ. 21. Ոսեր:

խոսք և այլն: Բանջարանոցներում և ալգիներում մշակում են ձմեռուկ, վարունդ, կաղամբ, պոմիդոր. մրգեր և այլն:

Ունենալով մեծ քանակությամբ զլուղատնտեսական հումուկթ, բնակչությունը զարգացրել և նաև զյուղատնեսական արդյունաբերությունը—ալրազացները, ձիթահան գործարանները, ծխախոտի ֆաբրիկաները, սպիրտի, կաշվի, ոոլայի գործարանները տալիս են արագացանք վոչ միայն շրջանի համար, այլ և միության ուրիշ շըրջանների համար: Այդ արդյունագործությունը կենտրոնացած և գլխավորես Կրասնոդարում և Ռոստվում:

Արևելյան տափաստաններն, լնդիակառակը, աղքատ են, կլիմայի չորության պատճառով յերկրագործությունը մեծ արդյունք չի տալիս: Խորհրդային իշխանությունն այստեղ անց է կացրել «Հոկտեմբերյան» հեղափոխության» ջրանցքը, վորով վոռոգվում են դաշտերը և այգիները: Ջրովի տեղերում ապրում են ուստի և նայեցի, վորոնք մշակում են այգիներ և մեծ քանակությամբ գինի պատրաստում: Մողղոկի և Դզլարի գինիները հայտնի լեն վոչ միայն Հյուս-

Կովկասում, այլև ամբողջ ԽՍՀՄ-ում: Չոր տափաստաններում իրենց անասուններով թափառում են նողայցիները և դալմուխները:

Լեռների ստորոտներում և լեռնալանջերում ապրում են կովկասյան ծողովուրդներ. արևմուտքում՝ չերքեզները, կաբարդիները և այլն, միջին մասերում՝ օսերը, իսկ արևելքում՝ չեչենները և լեզգիները.



Նկ. 22. Կաբարդիններ.

Կովկասցիների գլխավոր պարապմունքը յերկրագործությունն ե, ցանում են գարի, բայց կլիմայի ցրտության և հարմար հողերի սակագության պատճառով մեծ բերք չեն ստանում: Մեծ չափով տարածված ե և անասնապահուրյունը, Վոլխարի բրդից պատրաստում են շալեր (չուխացու), լափնջի, գորգեր, գլխարկներ և ալլն. Կաբարդինների ձիերն իրենց տոկունությամբ հայտնի յեն ամբողջ Միության մեջ:

Հյուս. Կովկասը հարուստ ե զանազան հանքային աղբյուրներով,

վորոնք գտնվում են Մատուկ, Քետառ լեռների ստորոտներում և իշրենց բուժիչ ջրով հայտնի էն ամբողջ աշխարհում։ Ալդ աղբյուրների մոտ են գտնվում Կիսլովոդսկ, Ֆելենցնովոդսկ, Պյատիգորսկ, Խսենտովկի կուբորտները, վորտեղ բժշկվում են և. Միության զանազան ծայրերից լեկած հիվանդներ։

Հյուս. Կովկասը հարուստ ե և նավրափ, Դրոզնի քաղաքի մոտ ստացվում ե մեծ քանակությամբ նավթ, վորը խողովակներով մղվում է Մախաչկալա, այնտեղից ել նավերով փոխադրվում ե ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի կենտրոնները։ Նավթահանքեր կան և Մայկովի մոտ։

Հյուսիս-Կովկասաւան յերկիրն արտահանում է ԽՍՀՄ-ի զանազան շըրջանները—հաց, արեածաղկի ձեթ, քարածուխ, ծխախոտ, նավթ, ցեմենտ, ցինկ, կապար և այլն։ Դրանց փոխարեն ներմուծում ե շաքար, մանուֆակտուրա, գլուզատնոեսական մեքենաներ, փայտ, ձուկ, աղ, կարտոֆիլ և այլն։

Հյուսիս-Կովկասաւան յերկրի հյուսիս-արևեմտյան անկյունը հարուստ և քարածուխ (Դոնբասսի մասն ե)։ Այստեղ ե գտնվում նշանավոր Շախտին, վորտեղ ամեն տարի մեծ քանակությամբ քարածուխ և ստացվում։

Հեղամայ պլանը, Պատերազմից առաջ Տագանրոդում (Ազովի ծովի ափին) գտնվում եր խոշոր մետալուրգիական գործարանը։ Ալդ գործարանը վերականգնելու դեպքում Հյուսիս-Կովկասյան յերկիրը կունենա շիր սիհական քարածուխը, նավթը և յերկաթը, վորոնք հնարավորություն կտան շինել քաղմաթիվ գլուզատնոեսական մեքենաներ և գործիքներ։

Հնգամայ պլանն իր զլիսավոր ուշադրությունը դարձնում է վառելանյութի (նավթ, քարածուխ) արդյունաբերության, մետաղագործության և համի ու սննդի արդյունաբերության զարգացման վրաց Այդ նպատակով հատկացվում է 868 միլիոն ռուբլի։

Քարածիսի արտադրանքը հնգամայ կլի ընթացքում ոլետք և 4,7 միլիոն տոննեց բարձրանա մինչև 6,8 միլիոն տոնն։



Նկ. 23. Դալմուխ,

Ցերկը ինդուստրացման համար Ռուսովում կառուցվելու յին գլուղատնեսական մեքենաների խոշոր զործարաններ (կոմբինատ): Կառուցվում են նոր ձիթահան գործարաններ, կոնսիրվի գործարաններ և այլն:

Մրագը վում ե հնգամեակի ընթացքում ավարտել հետեւալ ելեկտրակայանների աշխատանքները—Նախտու, Նովորոսսիյսկի, Կրասնոգարի, Բակսանի և այլն, վորոնց ընդհանուր կարողութիւնը կլինի 200 հազար կիլովատու:

Դյուլատնեսության ասպարիզում ծրագրված է վորովել հյուսիսարեւլան մասի վորոշ չոր տեղերը, ուժեղացնել խոտացանութիւնը, չորացնել կուրանի ջրջանի ճահճները և այլն:

Առանձին ուշագրություն ե գարձնվում նաև սոցիալիստական հատվածի ուժեղացման վրա. Ընդարձակվելու իւ խորհունտեսութիւնների և կոլտնտեսությունների ցանցը: Հնգամեակի վերջում կոլտընտեսությունների և խորհունտեսությունների արտադրանքի ապրանքային մասը կկազմի $30^{\circ}/\circ$:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ռուսով-յերկաթուղային հանգույց, խոշոր նավահանգիստ ե, վորի վրայով արտահանվում ե հաց գեպի Արևմտյան Յեվրոպա և քարածուխ Սև ծովի լեզերային քաղաքների համար: Խոշոր արդյունաբերական և բանվորական կենտրոն. ծխախոտի Փաբրիկաներ, ալբաղացներ, ձիթահան գործարաններ և այլն:

Ստավրովոյ—հացի մթերում, անասունների և ըրդի հավաքում: Արմավիր—հացի, արևածաղկի սերմի հավաքում. Ջրաղացներ, ձեթի գործարաններ:

Վլադիկավիխազ—ուազմավիրական ճանապարհով միացած ե Թիֆլիսի հետ. առևտուր Անդրկովկասի հետ, արծաթ-կապար-ցինկի գործարան:

Գրոզնի—նավթահանքեր:

Մայկով—նավթահանքեր, ծխախոտագործության կենտրոն:

Տուապսե—նավահանգիստ ե, նավթատար խողովակով միացած ե Մայկովի հետ:

Պյատիգորսկ, Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ—բուժիչ ջրեր:

ՅԵԽԱՏԱԲԻՔ ԲԱՐԵԵԶԻ ՎՐԱ

1. Համբ քարտեզի վրա անցկացրեք Ռւբալյան, Ղըմի և Կովկասյան լեռները: Դրեցնեք այդ շղթաների անունները:

2. Ներկեցնեք յուսիսային Բևեռային, Սև, Ազովի և Կասպից ծովերի բանածտեղը և առա անունները գրեցեք.

III. ԽԱՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԸ

ԽԱՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասը բռնում և ՅԵՎՐՈՊԱՅԻ արևելյան մասը և Միջիգիրք բաժանվում և Աւրալյան լեռնաշղթալով:

Հարավում ԽԱՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասի և Կովկասի բնական սահմանը կազմում է Կումա-Մանիշյան ցածրությունը, վորը Կումալի դետարերանից Մանիչի վրայով հասնում և մինչև Ազովի ծովը:

ԽԱՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասը կազմում և ամբողջ Միության մակարդակի մեծության $\frac{1}{4}$ մասը, այսինքն հավասար և մոտ 5 միլլ. քառ. կիլոմետրի:

ԽԱՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Միության ՅԵՎՐՈՊԱԿԱՆ մասի մակերենույթի մեծ մասը հարթություն և, վոր տեղատեղ համարյա հորիզոնական և կամ շատ քիչ թեքված, տեղատեղ խորզութրդ, և միայն ծալրամասերում բարձրանում են աշքի ընկնող լեռնաշղթաներ:

Այս հարթության միջին բարձրությունը մոտ 170 մետր և նրա ամբողջ տարածության վրա չեն պատահում այնպիսի կետեր, վորոնց բարձրությունը $\frac{1}{2}$ կիլոմետրից ավել լինի:

Այսպիսով հարթության մեծ մասն իր մակերենույթի կազմությամբ դաշտավայր եւ:

Այս հարթության միջին մասում բարձրա-

Բարձրություններ.

Նում և Միջին-ռուսական բարձրությունը, վորն այնքան ել բարձր չեւ, նա սկսվում է հյուսիսում Վարդայան լեռներից և ձգվում ե գետի հարավ մոտ հազար կիլոմետր, հանելով մինչև Դոնեց գետը. Ալսպիսով Միջին-ռուսական բարձրությունը կազմում և մի ջրաբաժն գիծ, վորով Վերին Վոլգայի, Ոկալի և Դոնի ավազանները բաժանվում են Արևմտյան Դվինայի և Դնեպրի ավազաններից:

Վոլգայի միջին հոսանքի յերկարությամբ, ձգվում է Մերձվալյան բարձրությունը. Սա սկսվում է հյուսիսում Նիժնի-Նովգորոդի մոտից և հարավում հասնում և մինչև Ստալինգրադ:


Անցնելով Ստալինգրադից հարավ, այս բարձրությունը փոխվում և աննշան ըլուրների շարքերի, վորոնք հայտնի յեն Յերգենի անունով:

Մերձվալյան բարձրության ամենագեղարվեստական մասը Փիգուլյան լեռներն են, վորոնք փոխել են Վոլգայի ընթացքը և ստիպել են վերջինիս կազմել մի պատշտ, վոր հայտնի յե Սամարայի աղեղ անունով:

ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի հարավ-արևմտյան կողմը գտնվում է Վալինսկ-Պոդոլսկի բարձրությունը, վորը ձգվում է արևելյան ուղղությամբ զեպի Դնեպրը և ալտանա կոչվում է Բարե շարք. Այս շարքը, վոր կազմված է գրանիտից, գնեխից և ուրիշ բյուրեղալին ժառանգին տեսակներից, փոփում է Դնեպրի ընթացքը զեպի արևելք: Դնեպրոպետրովսկ քաղաքից հարավ Դնեպր գետը կտրում է այս շղթան և առաջացնում հայտնի Դնեպրիան սահանքները:

Թաւավայրեր. Յեվրոպական մասի բարձրությունների միջն տարածվում է մի շարք դաշտավայրեր:

Դրանցից ամենաընդարձակը Հյուսիսային դաշտավայրն է, վորը թեքված է զեպի Հյուսիսային Բնեռային ծովը:



Նէ. 24. ԽՍՀՄ-ի ռելիեֆը.

Դնեպրի և Պրիոլլատի հոսանքների ուղղությամբ ձգվում է Մերձբնեպյան դաշտավայրը, վորի շարունակությունը հարավում կոչվում է Սեմյոնյան դաշտավայր, վերջինս տարածվում է Սև ու Աղովյան ծովերի ափերով:

Դոնի և Ոկայի հոսանքների ուղղությամբ տարածվում է Ոկանիան դաշտավայրը, վոր միանում է Մերձվոլվան դաշտավայրի հետ:

Մերձվոլգուան դաշտավայրը հարավում փոխվում է Մերձկասպյան դաշտավայրի:

Խեռներ, ԽՍՀՄ-ի լեվոռպական մասի ծալրամասում բարձրանում են Ուրալյան և Ղրիմի լեռները:

Ուրալյան լեռները բաղկացած են մի քանի լեռնաշղթաներից, վորոնք ձգվում են հյուսիսից դեպի հարավ, սկսած Կարալի ծովից մինչև Ուրալ գետի միջին հոսանքը մոտ 2.500 կիլոմետր լերկարությամբ:

Ուրալի գլխավոր լեռնաշղթան, վորով ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի գետերը բաժանում են Արևմտլան Սիբիրի գետերից, կազմված է զանազան բյուրեղային լեռնալիին տեսակներից՝ գրանիտներից, գնելսներից և բյուրեղային թերթաքարերից. իսկ յերկրորդական լեռնաշղթաները բաղկացած են թե բյուրեղալիին և թե խավերով նստած տեսակներից, վորոնք շատ հին ծագում ունեն. միայն ամենաարևմտյան ճյուղերը բաղկացած են բացառապես խավերով նստած տեսակներից. Պետք են կատել, վոր ջրբաժան շղթան, վորին բաշկիրները և վոգուլները «Ուրալ» անունն են տալիս, այնքան ել բարձր լեռնաշղթա չե. նրա միջին բարձրությունը 550 մետրից չի անցնում:

Դեպի արևմուտք Ուրալն աստիճանաբար ցածրանում է և աննկատելի կերպով փոխվում հարթության, իսկ արևելյան կողմը, դեպի Սիբիրի հարթությունը, վերջանում ե սուր կտրվածքով: Ուրալի լեռների այս սեպաձև լանջերը տեղ-տեղ ճեղքվածքներ ունեն, վորոնցով լերկրի խորքից բարձրացել են հալված զանգվածներ և այստեղ գոյացել են մեծ քանակությամբ զանազան հանքեր, մանտվանդ լեռնաշղթայի միջին մասում. ալդ պատճառով ել Միջին Ուրալը կոչվում է Հանքալին: Ուրալի ամենամեծ հարստությունը յերկտթահանքի հսկայական պաշարն է, վորով առանձնապես հարուստ են Բլագոդատ, Վիսկայա և Մագնիսեալյա ստրերը: Ուրալում շատ կան նաև պղնձի, վոսկու պլատինի և զանազան թանգարին քարերի հանքեր:

Ուրալի ամենաբարձր գագաթը Տել-պոս-իզ սարեն և (1.500 մ. ավելի), վորը գտնվում է լեռնաշղթայի հյուսիսալիին մասում. ամենացածր տեղը միջին մասն է, վորտեղով ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասից դեպի Սիբիրը յերկտթուղի լե անցկացրած:

Ուրալյան լեռների մեծ մասը ծածկված է անտառներով, հյուսում՝ փշատերեկ, իսկ հարավում՝ սաղարթավոր:

Դրիմի լեռները բւնում են Դրիմի թերակղզու յարավ-արևելյան մասը: Նրանք բաղկացած են մի շարք զուգահեռական շղթաներից, վորոնց իրարից բաժանված են ընդարձակ հովիտներով. Այդ շղթաներից ամենաբարձրը հարավալինն է, վորը սեպածի լանջերով իջնում է դեպի Սև ծովը. Նրա ամենաբարձր գագաթներն են Ռոմանկոս (1^{1/2} կիլոմ. ավելի) և Զարիր-դաս:

Հարավալին գլխավոր շղթան սկսվում է համարյա ծովից և հետզհետե ծովից հեռանալով կազմում է մի նեղ ծովափնյա շերտ 2-7 կիլոմետր լայնությամբ վորն աչքի յե ընկնում իր տաք կլիմայուլա, Դրիմի հարավային ծովափն է, ԽՍՀՄ-ի կենսարանը:

ԽՍՀՄ-Ի ՅԵԼՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԼԻՄԱՆ

ԱՆԺԱՏԱՑԲԻ ԲՈՐՏԻՑՔԻ ԻՆՏ

Թարտեղի վրա ցույց տվեք ԽՍՀՄ-ի Յելրոպական մասի ամենահարավային մասերը:

Մոտավորաբես ի՞նչ զուգահեռական և անցնում Սևվաստոպոլի (Դրիմում), Արխանգելսկի վրայով:

Ցույց տվեք Յելրոպական մասի այն վայրերը, վորոնք ցույց դուռը են դանդում:

Գտեք Լենինգրազ, Մինսկ, Կազան, Սարատով, Ռովա քաղաքները գրանցից վորոնք են Առանտայան ովկիանոսին մոտ, վորոնք են հետու:


Ինչպես տեսանք, ԽՍՀՄ-ի Յելրոպական մասը արևմուտքից դեպի արևելք և հարավից դեպի հյուսիս բավական շատ և ձգված. այդ պատճառով նրա տարրեր մասերը միևնույն կլիման չունեն:

Միության Յելրոպական մասի կլիմայի համար մեծ նշանակություն ունի Առանտայան ովկիանոսալի: Մեր յերկրի այն մասերը, վորոնք Առանտայան ովկիանոսին մոտ են գտնվում, ավելի խոն սվ են, քան նրանք, վորոնք այդ ովկիանոսից հեռու յեն: Առանտայան ովկիանոսի կողմից փչում են խոնավ քամիներ, վորոնք բավականաշատ մթնոլորտացին տեղումներ են թափում Յելրոպական մասի արևմտյան շրջաններում: Դեպի արևելք այդ տեղումները հետգհետե քչանում են: Ամենաչոր կլիմա ունեցող շրջանները գտնվում են Յելրոպական մասի հարավ-արևելքում (Մերձկասովյան գաղտավալրում, Վոլգայի և Ռուսական սարին հոսանքների ավազաներում):

Միջին հաշվով Յելրոպական մասում տարեկան թափվող մթնոլորտացին տեղումները կազմում են մոտ 400 միլիմետր, այսինքն շատ ավելի քիչ, քան թե արևմտյան Յելրոպական մասի արևմուտքից դեպի արևելք գտնվում են վոչ միայն մթնոլոր-

Արևմուտքից դեպի արևելք փոխվում են վոչ միայն մթնոլոր-

տային տեղումների քանակը, այլև ամառվա և ձմեռվա բարեխառնությունների տարբերությունը։ Համեմատենք մոտավորապես միևնույն լանությունն ունեցող մի քանի քաղաքների բարեխառնություններն իրար հետ։



Նկ. 25. ԽՍՀՄ-ի մթնոլորտային տեղումները.

	ՄՈՄԿԱՆ	ԿԱԶԱՆ		
Հունվար	— 11°	— 14°		
Հուլիս	+ 19°	+ 20°		
Տատանումը	30°	34°		
	ՎԻԼՆԱ	ԿԱԼՈՒԳԱ	ՌԻԴԱՆՈՎԾԿ	ՌԵՖԱ
Հունվար	— 5°	— 10°	— 13°	— 14°
Հուլիս	+ 18°	+ 19°	+ 20°	+ 21°
Տատանումը	23°	29°	33°	35°

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր ամառվա և ձմեռվա բարեխառնությունների տարբերությունը (տատանումը) դեպի արևելք մեծանում եւ հետևապես արևելան շրջանների կլիման ավելի ցամաքային է։

Միության Յեվրոպական մասի հյուսիսային և Հարավային շրջանուները նույնպես տարբեր կլիմա ունեն. դա, ի հարկե, կախված ե աշխարհագրական լայնուրյունից. Ղրիմի հարավալիին ծովափին միջին տարեկան բարեխառնությունը $+ 13^{\circ} \text{,}^{\circ}$ է, Կոլա թերակղզու միջին մասում $- 1^{\circ}$, իսկ Կարայի ծովի յեզերքին նույնիսկ $- 8^{\circ}$.

Հյուսիսային Բևեռալին ծովի յեզերքներն ունեն դաժան (տունդրային) կլիմա:

Զմեռը տեսում ե մոտ 9 ամիս, իսկ ամառը հազիվ 3 ամիս: Սաստիկ ցրառությունից գետինը 1—2 մետր խորության մեջ մշտապես սառած է: Կարճատես ամառվա ընթացքում գետինը բավականաչափ չի տաքանում, ծովի սառուցները բոլորովին չեն հալվում: Ծովի վրա կուտակվում են թանձր մառախուզները, վորոնք ծածկում են մարգուհորիզոնը և նավագնացությունը գժվարացնում:

Տունդրային զոնայից դեպի հարավ տարածվում են Յեվրոպական մասի միջին և մասամբ հարավային շրջանները, վորոնք, բացի Ղրիմի ծովափից, ունեն չափավոր ցամաքային կլիմա—արևմուտքում համեմատաբար մեղմ, իսկ արևելքում՝ սուր: Տարվա յեղանակները կանոնավոր կերպով հաջորդում են իրար: Այս զոնայի հյուսիսային մասում ձմեռը լինում ե խիստ, շատ ձյուն և գալիս և հաճախ փչում են հյուսիսային ցուրտ քամիներ, իսկ հարավային մասում ձմեռը համեմատաբար մեղմ է, բայց ամառները հաճախ յերաշտներ են լինում:

Ղրիմի ծովափը, պաշտպանված լինելով հյուսալին ցուրտ քամիներից, ունի տաք և մեղմ կլիմա: Ջյունն ալստեղ հազվագյուտ յերևույթ է:

Ալսպիսով, յեթե չնաշվենք բևեռալին շրջանից հյուսիս ընկած ցուրտը յերկրները, ինչպես և Ղրիմի ծովափը, այն դեպքում և ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի կլիման կարելի է համարել չափավոր—ցամաքային:

ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի կլիմայի բացասական կողմնոր:

1. Սաստիկ ցրտության պատճառով հսկայական տաշածություններ մնում են անմշակ, որինակ, տունդրաները: Հյուս, Բևեռալին ծովի ափին դանվում և միայն մեկ սառչող նավահանգիստ, մացածները նավազնացության համար անհարմար են:

2. Գետերը յերկար ժամանակ սառչում են և նավագնացությունը զադարում է գեղուց գետը մնում և սառած մոտ 200 որ, նեան 150 որ, Դնեպրի ստորին հոսանքը 80 որ, և այլն:

3. Զմեռային ցրտերը կարճացնում են պյուղաճանառեական տարին: Բնակչությունը քնակարանները ապացնելու և տաք հագուստի համար ահազին ավելորդ ծախսեր և անում:

4. Ջյուղաճանառեառության համար անհարմար են և չոր շրջանները (Մերձ Կասպյան տափաստան):

ԳԵՏԵՐԸ ՅԵՎ ԼՃԵՐԸ

Աւշաւանի բարեկզի հետ

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտնեց Դոն, Վոլգա, Դնեպր և Արեմոյան Դվինա գետերը. նրանք վեր բարձրությունից են սկիզբն առնում:

Բարակ թելի ողնությամբ չափեցնեք Վոլգայի յերկարությունը և ապա մասշատի ողնությամբ գտնեց թե Վոլգայի յերկարությունը քանի կիլոմետր և Զեր ստացած պատասխանը համեմատեցնեք Վոլգայի իրական մեծության հետ (տես աղյուսկը). տարրելություն կա, այդ տարրելությունն ինչնո՞վ կարելի յեր բացատրել:

Ինչո՞ւ գարնանը Վոլգայի վրայով նավագնացությունն Աստրավանի մոտ ավելի շուտ և սկսվում, քան թե Նիժնի-Նովգորոդի մոտ:

Վոլգան և Դոնը վեր քարտաքի մոտ են իրար մոտենում. չեր կարելի այդ յերկու գետերը արենստական ջրանցքով միացնել իրար հետ:

Գտնեք Ռևսդա, Լազոպա, Ելտան և Բասկունչակի լճերը Ինչո՞ւ առաջին յերկու գետի ջուրն անուշ է, իսկ Ելտանի և Բասկունչակի ջուրը՝ աղի:

ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի գետերից շատերն սկիզբն են առնում Միջին - Ռուսական բարձրությունից:

Վորովինեա այդ գետերի ակունքները ծովի մակերեսութից այնքան ել բարձր չեն, ուստի Յեվրոպական մասի գետերը հոսում ևն հանդիսաւ և դանդաղ: Ակունքներից վոչ հեռու նրանք նավագնաց են դառնում, և համարլա զուրկ են սահանքներից. Սա մեր գետերի դրական կողմն եւ Բայց նրանք ունեն և մի շարք բացասական կողմեր:

Յեվրոպական մասի գետերի համար շատ ընորոշ եւ ալին, վոր նըրանց մեծ մասը զարնանը վարարում ե, իսկ ամառը ծանծաղանում, դրա հետեանքով առաջ են գալիս ծանծաղուտներ, ավագակուլտեր կղզիներ, վորոնք դժվարացնում են նավագնացությունը:

Դարնան հեղեղութեներն այսպես են առաջ գալիս Ջմեռվա ընթացքում Ռուսական հարթությունը ծածկվում ե ձկունի հաստ շերտով. դարնանն այդ ձյունն սկսում և արագորեն հալվել. առաջանում են մեծ քանակությամբ ջրեր, վորոնք չեն հասցնում ծծվել գետնի մեջ և թափվում են գետերի մեջ: Դրանից գետերը վարարում են:

Յեվրոպական մասի գետերի մլուս անհարմարությունն ել ալին ե, վոր նրանք յերկար ժամանակ մնում են սառած: Յեվրոպական մասի համարլա բոլոր գետերը սառչում են և սառուցը նրանց վրա մնում ե 65—200 որ: Այսպիսով շատ գետերի վրա, կես տարուց ավելի նավագնացությունը դադարում ե:

Յեվրոպական մասի գետերը բանական թեքությունների վրայով հոսում են գեպի չյուսիսային Բեռուլին ծովը, Բալտիկ ծովը (Ատլանտյան ովկիանոսը), Սև և Կասպից ծովերը:

Դեպի չյուսիսային Բեռուլին ծովը հոսող գետերից աչքի յեն ընկնում Պեչորան և Հյուսնան:

Պեսուան մեր յերկրի համար այնքան ել մեծ նշանակություն չունի, վորովհետև նա հոսում ե սակավ ազգաբնակություն ունեցող տեղերով և թափվում ե ծովի այն մասը, վորը միայն շատ կարճ ժամանակով ե ազատվում սառուցներից. բացի այդ՝ նա տարվա մեծ մասը ստուծ ե լինում: Ավելի մեծ ե Հյուս. Դվինալի նշանակությունը, նա իր ամբողջ յերկարությամբ նավագնաց եւ նրա վրայով զեպի Արխանգելսկի փոխադրվում ե մեծ քանակությամբ փայտ: Բայց Հյուս. Դվինան նույնպես յերկար ժամանակով սառչում ե:

ԽՍՀՄ-ի Ցեվրոպական մասի հյուսիս-արևմտյան անկյունը հարուստ ե լճերով, վորոնց մեջ իրենց մեծությամբ աչքի լին ընկնում: Ունեան և լաղոզան: Ռնեղան Սվիր գետով միանում ե Լաղոզայի հետ: Լաղոզայից սկսվում ե Նելիս գետը, վորը մոտ 75 կիլոմետր յերկարություն ունի: և թափվում ե Փիննական ծոցը: Վորովհետև Նեղան սկիզբն ե առնում լճից և ճանապարհին վոչ մի աչքի ընկնող վտակ չի ընդունում, այդ պատճառով նա վարարութներ չի տալիս, բայց յերբեմն արևմտյան ուժեղ քամիները ծովի ջուրը մղում են գետի մեջ և դրանից նեղան բարձրանում ե և հեղեղում Լենինգրադի ցածրագիր մասերը: Լաղոզայի մեջ թափվում ե Վոլխով գետը, վորի վրա կառուցված ե Վոլխովսրոյ ելեկտրակայարանը:

Միջին ռուսական բարձրությունից սկսվում են Արևմտյան Դվինան, Դնեպրը, Դոնը և Վոլգան:

Արեվմտյան Դվինան թափվում ե Բալտիկ ծովը. նրա ստորին հոսանքը պատկանում ե Լատվիային:


Դնեպրը հոսում ե գեպի Սև ծովը: Դնեպրոպետրովսկի քաղաքի մոտ նա ճեղքում ե գրանիտի ժայռերը և գոյացնում սահանքներ, վորոնց պատճառով գետի այս մասը նավագնաց չե: Սահանքների ջրալին հսկայական եներգիան ոգտագործելու համար խորհրդադին իշխանությունն այստեղ կառուցում ե Դնեպրուսրոյ ելեկտրակայարանը, վորը լինելու ե ամենամեծ ելեկտրակայարաններից մեկն ամբողջ աշխարհում:

Դոնը թափվում ե Ազովի ծովը. աջ կողմից ընդունում ե Դոնից վտակը: Դոնի ստորին հոսանքը նավագնաց եւ:

Միության Ցեվրոպական մասի ամենամեծ գետը Վոլգան ե, հոսում ե գեպի հասպից ծովը: Ճանապարհին աջ ու ձախ կողմից նա ընդունում ե բազմաթիվ վտակներ, վորոնցից նշանավոր են Կաման և Ուկան, Վոլգան իր վտակներով վոռոգում ե Ցեվրոպական մասի մակարդակի մոտ $\frac{2}{3}$ -ը: Վոլգան նավագնաց եւ նրա վրայով լողում են բազմաթիվ շոգենավեր, վորոնք գեպի հյուսիս փոխադրում են հաց, նավթ և աղ, իսկ գեպի հարավ՝ գործարանալին ապրանքներ, փայտ և այլն:

Կասպից ծովի մեջ թափվում են նաև Ուրալ և Սմբան:

Ինչպես տեսանք, ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի գետերը հարմար աշխարհագրական դասավորություն ունեն. Նրանք սկսվում են լեռների կենտրոնական մասից և հոսում գեղի շրջապատող ծովերը, բայց դժ-



Նկ. 26. Գետերի սառեցման տևղությունը.

բախտաբար այդ ծովերը լեռներոդական ծովեր են, իսկ ամենաջրառատ գետը՝ Վոլգան թափվում է լճի մեջ: Գետերից շատերն իրենց ակունքներով այնքան են իրար մոտենում, վոր նրանց կարելի յե արհետական ջրանցքներով միացնել և արդպիսով ներքին հաղորդակցու-

թունն ավելի զարգացնել։ Այդպիսի ջրանցքների և գետերի շնորհիվ կասպից ծովը միանում է Բալտիկ ծովի հետ։ Այդ ջրային կարևոր ճանանապարհը, վոր կոչվում է Մարինյան սիստեմ, այսպես և կազմված։ Վոլգա-Շեկանա-Բելոյե լիճը յեղերող ջրանցք—Կովժա-Մարի-

ԽՍՀՄ-ի գետերի յերկարությունը յեվ սառցի ծածկոցի տեխնոլոգիաներ (բայ Իրկաչովի)

Ցուցանիւն և լայ- վում	Վեր քաղաքի մոտ	Ցուցանիւն և լայ- վում	Գետի անունը	Գետի լայ- վում թվունը (կիլոմետրի մուն)	Գետի նավա- գնաց մասը (կիլոմետրի մուն)
4/V	Ոբդուկ	27/X	Ոբ	5300	3574
15/V	Սեմիպալատինսկ	16/XI	Իրուիչ	3712	3403
2/V	Տորուլսկ	7/X			
1/V	Կրասնոյարսկ	12/XII	Ցենիս	5200	3200
22/V	Տուրուխանսկ	30/X			
22/V	Յակուտսկ	28/X	Լենա	4600	4481
23/V	Բլազովեցչենսկ	12/XI	Ամուր (Շիլկայի և Արգունի խառ- նման տեղից)	2870	2870
20/V	Նիկոլսկ	9/XI			
18/V	Ռիբինսկ	24/XI			
20/V	Նովօրոպոդ	1/XII			
18/V	Ստալինգրադ	15/XII	Վոլգա	3660	3567
24/III	Աստարիան	13/XII			
27/III	Կուլ-Որդա	18/XII	Սիբ-Դարիա	2863	1300
4/V	Ստրին հոսանքում	3/XII	Ամուր-Դարիա	2394	469
13/V	Որժնըռորդ	9/XI			
12/III	Դոերյել	3/XII	Ուրալ	2379	827
27/III	Կիւ	18/XII			
11/III	Խելսոն	16/XII	Դնեպր	2139	1992
25/III	Ռոստով	8/XII	Դոն	1808	1359
27/IV	Գելգ	23/XI	Կամա	1797	1215
6/VI	Պուստովյորսկ	13/X	Պեչորա	1647	1433
8/VI	Ն. Նովգորոդ	27/XI	Ոկա	1441	1422
3/V	Վելիկի Ուստյուզ	22/XI	Կուր Հյուս. Դվինա	113	418
13/V	Արխանգելսկ	6/XI		1297	1253
1/III	Կրասնոդար	30/XII	Կուբան	822	370
21/VI	Լենինգրադ	25/XI	Նեվա	75	75

նյան միացնող ջրանցք—Վիտեղրա—Ռնեգան լիդերող ջրանցք—Սվիր-Լաղողան լիդերող ջրանցք—Նեվա: Ծրագրված և անցկացնել մի շատ կարեռ ջրանցք Վոլգայի և Դոնի միջն, ալնտեղ՝ վորտեղ Վոլգայի և Դոնի հոսանքներն իրար մոտենում են: Այդ ջրանցքով Վոլգան կը-կապի Սև ծովի հետ:

Մերձկասպան գաշտավայրի գետերից շատերը ծովը չհասած աստիկ չորությունից ցամաքում են: Նույն չորության պատճառով ալստեղ պատահում են աղի լճեր: Գարնանն այդ լճերի մեջ մեծ քանակությամբ ջուր և հավաքվում, իսկ ամառը գոլորշիանում ե, թողնելով լի տակ աղի հաստ շերտ: Արդպիսի լճերից նշանավոր են Ելդոնիր և Բասկրունչակը, վորոնցից ամեն տարի ահազին քանակությամբ աղ և ստացվում:

ԽՍՀՄ-ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ՀՈՂԵՐԸ

Միության Յեվրոպական մասի տարբեր շրջաններում տարբեր հողեր են գտնվում: Հողի տեսակը և հատկությունները կախված են այն յենթահողալին լեռնալին տեսակից, վորի վրա առաջ և յեկել այդ հողը: Յեվրոպական մասի յենթահողերի մեծ մասը կավեր և ավազներ են: Կուրսակ քաղաքից հարավ յենթահողը կազմված ե, այսպես կոչված, յոսից, վորն ավելի փիրուն և փափուկ լեռնային տեսակ ե, քան կավը:

Ուրեմն հող առաջացնող կարեռը ֆակտորներից մեկը յենթահողն ե:


Յերկրորդ կարեռը ֆակտորը կլիման ե: Նման լեռնային տեսակները տարբեր կլիմայական պայմաններում տարբեր հողեր են առաջացնում: Առև. վորովհետեւ կլիման ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում զոնաներով (գոտիներով) և դասավորված, ուստի հողերը նույնպես զոնաներով են դասավորված:

Հողը կախված և նաև բույսերից և կենդանիներից: Բուկսերը հողի մեջ քայլայվելով առաջացնում են մի անուակ որգանական նյութ, վորը կոչվում է հումուս: Հողի գույնը կախված է հումուսի քանակից: Վորքան հումուսը շատ է, հողն այնքան ավելի մութ գույն է ունենում: Սևահողը հարուստ է հումուսով:

Յեվրապական մասը կարելի լեռաժաննել միքանի հողալին գոտիների կամ զոնաների, վորոնցից մոխրահողալին և սեահողալին զոնաները բավական ընդարձակ տարածություն են բռնում:

Յեվրոպական մասի ամենահուսիսալին ցուրտ շրջաններում տարածված են ալսպես կոչված տունդրային հողերը: Այս հողերը տարգա մեծ մասը ստուծ են լինում: իսկ նիդրին շերտերի ստուցը նույն իսկ յերբեք չեն հալվում:

Տունդրային հողերից հարավ, վորտեղ տարածվում են անտառաներ, գլուցել են մոխրանողեր. Մոխրանողային զոնայի արավային



Նկ. 27. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի հողերը.

սահմանը կազմում է այն զիծը, վորն սկսվում է Ժիտոմիր քաղաքից և Կիևի, Ոկայի և Կամացի վրայով հասնում և մինչև Ռուբալյան լեռները: Այս զոնայի հողերը բաղկացած են յերկու շերտից—վերին՝ հու-

մուսային և ստորին՝ մոխրահողալին։ Վերին կամ հումուսալին շերտն ունենում է մինչև 13 սանտիմետր հաստություն և շատ քիչ ($2-3\%$) հումուս և պարունակում, հաճախ այդ շերտն այնքան ըարակ և լինում, վոր մոխրահողալին շերտն ուղղակի գետնի յերեսն եղութագլիս։



Նկ. 28. ԽՍՀՄ-ի հողերը.

Մոխրահողերը չափաղանց աղքատ են և նրանց վրա յերկրագործությամբ կարելի յե պարապել միայն լավ պարարտացնելու դեպքում։

Սևահողերը բռնում են Յելվրոպական մասի

Սևգահող

Հարավային կեսը նրանք սկսվում են հարավարևելուտքում և լայն շերտով տարածվում են դեպի հուսա-արենելք, անցնելով Անդրվոլգան շրջանը։ Հարավ-արևմուտքում այս դոնանունի 350—400 կիլոմետր լայնություն, բայց հետո աստիճանաբար լայնանում ե Վոլգայի մոտ նրա լայնությունը հասնում և 700—800 կիլոմետրի։ Միության Յելվրոպական մասում սևահողերը բռնում են մոտ 100 միլիոն հեկտար տարածություն։

Սևահողն առաջ ե յեկել տափաստանների ֆարթամ բուսականությունից, Բուլսերի արմատներն ու ցողունները տարեց-տարի ֆտելով մեծ քանակությամբ հումուսի պաշար են գոյացրել հողի մեջ։ Սևա-

Հողի մեջ գտնվում ե սովորաբար $6-10\%$ հումուս, բայց կան և այնպիսի սեահողեր, վորոնց մեջ հումուսը կազմում է 16% . Բացի բույսերից կարեռը նշանակություն ունեն և այն մանր կենդանիները, վորոնք կերակրվում են հողի մեջ գտնվող քայլավող որգանական նյութերով և նպաստում են այդ նյութերի շուրջ քայլավոր դրանով մեծանում ե հողի ծավալը և ջուրն ու ողը կարողանում են հեշտությամբ ծծվել հողի մեջ և շատ խորը տարածվել. Դրան ավելացնենք և այն, վոր սեահողը մեծ քանակությամբ սննդարար նյութեր



Նկ. 29. ԽՍՀՄ-ի բուսական գոնաները.

և պարունակում: Ահա թե ինչու ԽՍՀՄ-ի սեահողային զոնան հաց և մատակարարում վոչ միայն Միության զանազան մասերին, այլև արտասահմանաւան լեռկրներին: Սեփանողային զոնան ԽՍՀՄ-ի տարածանին ե:

Սեահողային զոնայից հարավ. Սկ և Ազովի ծովերի յեզերքներով տարածվում են տագանակային նողերը. շագանակային հողեր գտընվում են նաև Մերձկասպյան դաշտավայրում: Այս հողը շագանակի գույն ունի կամ մուգ և և պարունակում է 2-4 տոկոս հումուս. արգավանդ և, բայց ջրի պակասության պատճառով յերկրագործությունը մեծ զժվարությունների յե հանդիպում:

Մերձկասպլան դաշտավայրում պատահում են նաև զանազան աղեր պարունակող հողեր, վորոնք աղուտներ են կոչվում: Աղերի առառության պատճառով աղուտներում առանց արհեստական վոռոգման հնարավոր չեն յերկրագործությամբ պարապել:

Ճանալոյին հողերը ցրված են Յեվրոպական մասի հյուսիսում, հյուսիս-արևմուտքում և Դնեպրից դեպի արևմուտք: Նրանք մուգ գույն ունեն, բավական թեթև և փխրուն են, բաղկացած են զլխավորապես քիչ քարայված բուսական մնացորդներից, իսկ մի քանիսները նաև տորֆից:

Ճանալոյին հողերը պահպան հողերի նման զոնաներով չեն տարածված. ալդ պատճառով՝ նրանք կոչվում են վոչ զոնային հողեր:

Աջակատանք. — Համբ բարտեղի վրա անցկացրեք Յեվրոպական մասի բոլոր զոնային հողերը:

ԽՍՀՄ-Ի ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻ ԲՈՒԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՁԸ

Աջակատանք Բարեկզի հետ

1. Դիտեցեք ԽՍՀՄ-Ի բուսական բարտեղը (այս գրքի նկարը և աշխարհագրական ատլասում գետեղված ԽՍՀՄ-ի բուսականության բարտեղը): Ամբողջ ԽՍՀՄ-ում և մասնավորապես նրա Յեվրոպական մասում ինչ բուսական զոնաներ են գտնվում:

2. Այս կամ այն բուսական զոնան վոր հողային զոնայում և գտնվում:

3. Բուսական բարտեղի վրա քաշեցիք + 10°-ի կղունը (ոգտվել աշխարհագրական ատլասից, գորակդ կարելի յէ գտնել ԽՍՀՄ-ի կղունըները): Այդ կղուները վոր բուսական զոնայի հյուսիսային սահմանն է կազմում:

4. Յեվրոպական մասի վոր շրջաններում են տարածված փշատերեկ և սաղարթավոր անտառներ, ասպաստաններ:

5. Վորական ան անում այն ծառերը, վորոնցից լուցկու կոթեր են պատրաստում: Լուցկու տուփի վրա յեղած գրվածքով իմացեք թե լուցկու գործարանները վոր բուսական զոնայում են գտնվում:

Բույսերը կախված են կլիմայից և հողից, ալդ պատճառով նրանք կլիմայի և հողերի նման նույնպես զոնաներով են դասավորված: Վորոշ չափով զոնաներով են տարածված նաև կենդանիները, վորովհետեւ նրանք կախված են կլիմայից և բուսականությունից.

ԽՍՀՄ-Ի Յեվրոպական մասը բույսերի և Ցունդրային զոնա.

Կենդանիների տարածման տեսակետից կարելի յէ բաժանել յերեք զոնայի՝ տունդրային, անտառային և տափաստանային:

Տունդրային զոնան տարածվում է բևեռալին շրջանից հյուսիս և բավական լայն շերտով ձգվում է հյուս.-քենուային ծովի յեղերքներով: Այս զոնայի մեջ են մտնում և այն կղզիները, վորոնք ընկած են բևեռային ծովում, որինակ՝ նոր Յերկիրը, Կոլգուեր, Վայդաչը և այլն:

Ինչպես տեսանք, տունդրաները ցուրտ կլիմա ունեն. հուլիսի միջին բարեխառնությունը $+10^{\circ}$ -ից ցածր և ձմեռը զածան և և յերկարատե. տունդրաները 6—9 ամիս ծածկված են լինում ձյունով:

Տունդրաների բնությունը շատ աղքատ և Ամենուրեկ տարածվում են մատուռներ ու զանազան բնուեր, իսկ ճահճալին տեղերում զանազան ճահճալին բուլսերով, վորովինետ գետինը 1—2 մետր խորության մեջ մշտապես սառած և լինում, արդ պատճառով այստեղ ճառեր չեն կարողանում տձել: Մառերի փոխարեն պատահում են գաճաճ ուռիների և կեչիներ, վորոնք փոփում են գետին և իրենց փոքրիկ սաղարթը գեանից շատ չեն բարձրացնում, վորովինետ գետինն ավելի տաք և, քան ողբ:



Նկ. 30. Տունդրան ձմեռը.

Տունդրայում լերկրագործությամբ չի կարելի պարագել բայց հարավային շրջաններում, անտառային զոնայի մոտերքը կարելի է մշակել կարտոֆիլ, բողկ և սոխ:

Առանձնապես հետաքրքիր և տունդրային զոնայի կենդանական աշխարհը Հյուս. բևեռային ծովի լեզերքներին և կղզիների վրա ապրում են այնպիսի կենդանիներ, վորոնք հարմարվել են լերկարտե ձմեռներին և բևեռային ծովի ցուրտ ջրերին:

Զկներն առատ են ու բազմազան, շատ կան մանավանդ տառելի (հարինգ) փողոս (տրեսկա), վորոնցով կերակրվում են միլիոնավոր մարդիկ:

Աւտեղ ապրում են զիշատիչ սպիտակ արջ, վոր կերակրվում է ձկներով և փոկով, բենեռային աղվեսը, վորի մորթին բավական թանգ:

Ե գնահատվում: Ծովում լողում են խոշոր կաթնասուններ — կետր, ծովացուլլի և փոկիր, վորոնց կաշվի տակ ճարադի հաստ շերտ և գտնվում: Այդ ճարազը պաշտպանում է նրանց բնեռային ցրտերից:

Տունդրան ձմեռն աղքատ է կենաց դանիքներով, ալստեղ ձմեռում են մի այն կենդանիները, վորոնք ցրտից պաշտպանվելու միջոցներ ունեն (փափուկ փետուր, հաստ մորթի, ճարպ): Ալգափիսի կենդանիներից են սպիտակ արջը, բենուային բուն, սպիտակ կաթավը և այլն Հետաքըրքիր և և այն, վոր այդ կենդանիները ձմեռը սպիտակ դույն են ունենում, իսկ ամառը գորշ (պաշտպանողական գույն): Սպիտակ արջը սպիտակ ձլունի վրա աննկատելի կթնաւ:


Ամառը տունդրան կինդանանում և հարավից չվում են բազմաթիվ թռչուններ, վորոնք ալստեղ ձռւ են ածում, ճագեր հանում և ամառն անցնելուն պես նույն ճանապարհով ուղերձում են դեպի հարավ:

Տունդրայում ապրում ե նյուսիսային յեղքերուն, վորը կերակըրպում և «մամուռով» (մի տեսակ քոս ե): Տունդրայի բնակիչների համար չեղջերուն մեծ նշանակություն ունի, վորովհետև նա տալիս ե սնունդ և հագուստ, բացի այդ՝ տունդրայի բնակիչները տեղից տեղ քոչելիս յեղջերուն ոգտագործում են վորպես լծկան կենդանի:

Տունդրաներից հարավ, սոխրանողի գոնանեաւային զանալում տարածվում են ընդարձակ անտառներ, վորոնք սկսվում են Յեվրոպական սասի արևմտյան սահմանից և հասնում են մինչև Ռուսական լեռները:

Անտառային գոնայի հյուսիսային մասը ծածկված է զիխտվորապես փշատերել, իսկ հարավայինը՝ սաղարքավոր անտառներով: Փշատերեկ անտառների մեջ աչքի ընկնող տեսակներն են սոնին և յեղելնին, իսկ սաղարթավոր անտառների մեջ՝ կեչին, հացին, թխկին, կաղնին, լորին և այլն:

Անտառային գոնայում արեց յերկնակամարի վրա ավելի յերածրանում, քան թե տունդրաներում: այդ պատճառով կլիման ալստեղ



Նկ. 31. Հյուս. Բնեռային ծովում (սպիտակ արջ, ծովացուկ և փոկ).

համեմատարար մեղմ և և հնարավոր և մշակել զարի, լարսակ, հանար, և վուշ, իսկ սաղարթավոր անտառների շրջանում նաև ցորեն, բանջարեղեն և պտղատու ծառեր (տանձենի, խնձորենի),




Նկ. 32. Փշտերև անտառներ.

Անտառային գոնայի կենդանիներից իրենց շատությամբ աչքին ընկնում այլուրները. շատ կան նաև գայլեր և աղվեսներ. բացի գրանից, այսակեղ ապրում են արջեր, նապաստակներ, կղաքիսներ սամուկրներ և այլն, վորոնցից շատերն ունեն աղվամազ մորթի, այդպատճառով անտառային գոնալի բնակիչները մեծ քանակությամբ վորսում են նրանց:

Ճահիճներում և լճերի մեջ ապրում են կռունկներ, արագիւնիեր, վայրի բաղեր և սագեր: Գետերում և լճերում կան զանաղանձներ:

Անտառների գոնայից հարավ գտնվում են Տափաստանային գանձ Տափաստանային գանձ. Բայց անտառային գոնան միանգամից չի փոխվում անտառների, այլ աստիճանաբար, այն-

պես վոր տափաստանալին զոնայի հլուսիսալին մասերում տեղ-տեղ դեռևս կարելի է տեսնել կղղիների ձևով անտառների:



Նկ. 33. Փշատերև անտառի կենդանիներ.

Տափաստաններում ամառը յերկարատև եւ չոր, իսկ ձմեռը՝ կարճ և սակավածյուն: Գարնանը տափաստանները ծածկվում են փարթամ և բազմերանդ ծաղիկներով, իսկ ամառը արևի կրզող ճառագայթներից նրանք խանձվում են ու դեղնում: Շնորհիվ արգավանդ հողի, տափաստանները ներկայումս համարյա ամբողջապես մշակված են: Այսաեղ մեծ հաջողությամբ մշակում են ցորեն, յեգիպտացորեն, ճականագիր և ալին: Տափաստանների ամենահարուստ շըրջանը սեահողալին զոնան եւ:

Տափաստաններում աչքի ւնի ընկնում կրծողները, վորոնք փըխրուն լյոսսի մեջ հեշտութիւնը իրենց համար անցքեր են բացում և բներ շինում: Այդ կրծողներից նշանավոր են հատակեր արջամուկը (սուսլիկ), նազարամուկը, գերմանական արջամուկը կամ համստերը և այլն: Դիշտատիչներից պատահում են գալիքը և աղվեսները, իսկ թոշուններից՝ արծիվը, արագիլը, կռունկը: Տափաստաններում շատ կան և միջատներ, վորոնցից մօրեխը մեծ մասաներ եւ տալիս արտերին:

Մերձկասպյան տափաստաններում պատահում են բռնձ (պելիկան) և երարշուն (ֆլամինգո):

Ղրիմի հարավային ծովափը, բավական բարձր լեռներով պաշտպանված լինելով հյուսիսային ցուրտ քամիներից, կազմում ե անկախ բուսական շրջան։ Այստեղ աճում են զանազան մշտադալար ծառեր, վորոնք հիշեցնում են Միջերկրական ծովի յերկրները. այդպիսի ծառերից են, որինակ՝ ձիքենին, ոլեանդր. մազնոլիան, նևենին, դափնին կիպարիսը և այլն։

ԽՍՀՄ-ի ՌԱՅՈՆԱՑՈՒՄԸ

Ամենափոքր պետությունն անգամ իր տարբեր մասերում միևնույն կլիման և հողը չունի, ամեն տեղ ընակիչները միևնույն գործով չեն. պարապում. մի տեղ զարգացած ե գյուղատնտեսությունը, մի ուրիշ տեղ՝ արդյունագործությունը։ Դյուղատնտեսական շրջաններում մի տեղ գերակշռում ե հացահատիկների մշակությունը, մի ուրիշ տեղ տեխնիկական բյուսերի մշակությունը, մի այլ տեղ՝ անասնապահությունը և այլն։ Այսպիսով ամեն մի լերկեր թե իր բնական պայմանների և թե մարդու զբաղմունքի համեմատ կարելի յե բաժանել այնպիսի առանձին-առանձին ռայոնների, վորոնցից ամեն մեկը տնտեսական ամբողջություն ունենա և իր տնտեսական բնույթով և բնական պայմաններով քիչ թե շատ տարբերվի հարևան ռայոններից։ Իբրև որինակ կարելի յե բերել Միության Յեվրոպական մասի կենտրոնական արդյունաբերական և կենտրոնական-սևահողային շրջանը։ Առաջին շրջանում գտնվում են մի շարք արդյունաբերական քաղաքներ (Մուսկվա, Ռվանով-Վոլոնեսենսկ, Յարոսլավլ, Նիժնի-Նովգորոդ և այլն), վորոնք արտադրում են Միության տարբեր մասերի համար գործվածքներ, մեքենաներ և այլն։ Շրջանի բնակիչների գլխավոր զբաղմունքը արդյունագործությունն եւ։ Նրանք ուրիշ շրջաններից ստանում են հաց, յուղ, միս, բամբակ, մետաքս, նավթ և այլն, իսկ քըրա փոխարեն արտասահմանում են գործվարանալին ապրանքներ (գործվածքներ, ներկեր, մեքենաներ և այլն)։

Բոլորովին այլ պատկեր ունի Կենտրոնական-Սևահողային շրջանը վորը հորևան և կենտրոնական-արդյունաբերական շրջանին (տես ԽՍՀՄ-ի քաղաքական քարտեզը, 9-րդ շրջանը)։ Այստեղ գերակշռում ե գյուղատնտեսությունը բնակիչները դրսից ստանում են գործարանային ապրանքներ գործվածքներ, մեքենաներ և այլն), իսկ արտահանում են հաց և այլ սննդամթերքներ։

ԽՍՀՄ-ի ռայոնացման խնդրով զբաղվել են թե առանձին գիտնականներ և թե միքանի պետական հաստատություններ։ Յերկիրը ռայոնների բաժանելիս նրանք ղեկավարվում ելին այս կամ այն հատ-

կանիշով, որինակ, հողմողկոմը ռալոնի սահմանները վորոշելիս նկատի ուներ հետեւալ հատկանիշները՝ կլիման, հողը, հողի արգավանդությունը, պետքական հողի քանակը և ալն, բայց նկատի չեր առնում չերկը լեռնազբությունը, նավազնաց գետերը, հանքալին հարստությունները և այլն, վորոնք ժողովրդական տնտեսության համար այնքան կարենոր նշանակություն ունեն:

Հետազայում Միության ռայոնների խնդրով սկսեցին զբաղվել Հանրապետության բարձր որգանները: Խորհուրդների 8-րդ համառուսական համագումարը խնդրի լուծումը հանձնեց Կենտղործկոմին: Պետպահնում կազմվեց մի հատուկ հանձնաժողով յերկիրը ռայոնների բաժանելու համար: Հանձնաժողովը ռայոնների սահմանները վորոշելիս նկատի ունեցավ Միության ելեկտրիֆիկացիայի պլանը, այդ ռայոնի տնտեսական հեռանկարները և մասնագիտացումը, Միության տնտեսության շահերի տեսակետից:

Փետպահնի նախագծով Միությունը բաժանվեց հետեւալ ռայոնների կամ շրջանների:

ՄԻՈՒԹՅԱՆ ՑԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՍՈՒՄ

1. Հյուսիս-արևմտյան,
2. Հյուսիս-արևելյան,
3. Արևմտյան,
4. Կենդրոնական-արդյունագործական,
5. Վլատկա-Վետլուգովի,
6. Միջին-վոլգյան,
7. Ռուսական,
8. Հարավ-արևելյան,
9. Հարավալին հանքարդյունագործական,
10. Կենտրոնական-սևահողալին,
11. Ստորին-վոլգյան,

ԱՍԻԱԿԱՆ ՄԱՍՍՈՒՄ

12. Կովկասյան*)
13. Արևմ. Կիրգիզական} Կաղակստան**)
14. Արևել. Կիրգիզական} Կաղակստան**)
15. Արևելյան-Միջիրական

*) Կովկասյան շրջանը ներկայում բաժանվում է յերկու առանձին շրջանների՝ Հյուսիս-Կովկասյան և Անդրկովկաս:

**) Այժմ Կաղակստանը վերցնում են վորպես մի շրջան:

16. Յենիսեյան

17. Ալտարան

18. Լենա-բայկալան

19. Ցակուտական

20. Հեռավոր-արևելյան*)

21. Թուրքեստանի կամ Միջին Ասիական (Միջին Ասիա):

Վարչական ռայոնացում.—Պետք է նկատել վոր պետպլանի ռայոնների սահմանները միշտ չեն համապատասխանում նահանգների սահմաններին. հաճախ մի նահանգը բաժանվում է մի քանի տնտեսական շրջանների մեջ, այսինքն միևնույն նահանգի մի մասն անցնում է մի տնտեսական շրջանի, նույն շրջանի մյուս մասերն անցնում են ուրիշ շրջանների: Այդ պատճառով միևնույն տնտեսական շրջանի տերը իտորիալում գտնվող 5-6 նահանգական և 60-70 դպրանական կենտրոնների փոխարեն մնում ե մեկ շրջանային և մոտ 15 գավառային (ոկրուգային) կենտրոն: Որինակ Հյուսիս-Կովկասան յերկրի տերը իտորիալում առաջ գտնվում ելին Տերեկի շրջանը, Կուրանի շրջանը, Ստավրոպոլի նահանգը, Սևծովյան նահանգը, Դոնի շրջանի մի մասը. այժմ այդ բոլորը կազմում են մի վարչական միավոր, վորի կենտրոնն և Ռուսակը:

Վարչական ռայոնացումը զեռիս վերջացած չե: Վերջնականապես հաստատված կարելի յե համարել հետեյալ շրջանները (մարզերը)—Ռուրալյան, Լենինգրադի, Կենտրոնական-Սևահողային, Միջին-վոլգյան շրջանները. Հյուսիս-Կովկասյան և Հեռավոր արևելյան յերկրները:

Ա. ՌԻԿՐԱՒՆԱՅԻ ՍԽՀ **)

(Պետպլանի VIII յևլ IX տրամադրը)

Աշխատանի բարեկայի վրա.

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա ցույց տալ:

1. Ուկրաինայի սահմանները, սահմանակից շրջանները՝ ոտար պետությունները:
2. Դնեպը, Դնեստը և Դոնեց գետերը:
3. Սև և Ազովի ծովերը:
4. Կիև, Զերնիգով, Պոլտավա, Ողեսսա, Խարկով, Դնեպրոպետրովսկ, Ալյոնովսկ, Ստալին, Նիկոլայկ քաղաքները:
5. Բաթում—Ոգեստ—Կիև, Բաթում—Սևաստոպոլ—Խարկով ճանապարհները:

*) 15-20 զըջանները կազմում են Արևել. Միջին. մեր գասընթացքի մեջ Արևելյան Միջինը վերցված է արմողապես:


**) Հյուսիս-Կովկասյան յերկրներն անցնելուց հետո նպատակահարմար և անցնել Ռուսիային:

Ուկրաինան Հյուսիս-Կովկասյան յերկրի անմիջական շարունակությանն եւ Նա Միութենական ֆեղերացիայի մասերի մեջ ՌՍՖՀ-ից հետո ամենախոշորն եւ Բոնելով 450 հազար քառ. կիլոմետր մակարդակ և ունենալով ավելի քան 29 միլիոն բնակիչ, Ուկրաինան գեղազանցում և լեվովական շատ պետությունների:



Նկ. 34. Ուկրաինայի (Հարավ-արեմայան լըծանի) քարտեղը

Ուկրայինալում ամեն մի քառ. Կիլոմետրի վրա ապրում և 65 մարդ ալսինքն մոտ 10 անգամ ավելի, քան Միության մասացած մասերում։ Այդ խտությունը բացատրվում է Ուկրայինայի նպաստավորքնական պայմաններով—հրաշալի սեահող, ծովի մոտիկություն, տաք կլիմա, քարածուխ և յերկաթ։



Նկ. 35. Ուկրայինայի (Հարավ-արևելյան շրջանի) քարտեզը.

Ամբողջ Միության հացի բերքի $\frac{1}{3}$ -ը, ստացվող աղի $\frac{1}{2}$ -ը, քարածիսի $\frac{4}{5}$ -ը, թուղի $\frac{3}{4}$ -ը, և շաքարի $\frac{4}{5}$ -ը Ուկրայնան և տալիս Մեր անտեսության խոշոր լերկու սլուները—հացի արտահանությունը և ծանր ինդուստրիան $\frac{3}{4}$ -ով Ուկրայինայի հետ են կապված։

Ուկրափնայի բնակչության ցեղական կազմը.

Ուկրափնայի բնակչություն	80%
Ռուսներ	9,2%
Հրեաներ	5,4%
Ալ ցեղեր	5,4%

Բնուրյունը.—Ուկրափնայի մակերեսույթը մի ընդարձակ հարթություն է, վորք հուսկուս-արևելքում միանում է Միջին Ռուսական բարձրության հետ, հյուսկուս-արևելություն՝ Պոլեսկյի դաշտավայրի հետ, իսկ հարավում ձգվում է մինչև Սևև Աղովի ծովերի յեզերքները, Նըա միջով արևմուտքից զեպի արևելք ձգվում է բարային շարքը, վորք կըտրելով Դնեպրի հոսանքը, առաջացնում է նշանավոր Դնեպրյան սահմանները. Ահա այդ սահանքներում է, վորք կառուցվում է Միության ամենախոշոր ելքաբուկայաններից մեջը՝ Դնեպրոստրոյը:

Կլիման ընդհանուր առմամբ ցամաքալին է, բայց ավելի մեղմ է, քան թե յելբուպական մասի կենարոնի կլիման. Զմեռը խիստ չէ, ամառը չափավոր տաք է:

Միջին տարեկան բարեխառնությունն ամբողջ Ուկրափնայի հավասար է $+8^{\circ}$. Հունվարի միջին բարեխառնությունը կիսում -6° է, իսկ Խարկովում՝ -8° :

Հուլիսի միջին բարեխառնությունը կիսում $+19^{\circ}$ է, Խարկովում՝ $+21^{\circ}$.

Այստեղից յերեսում է, վորք Ատլանտիան ովկիանոսի ազդեցությունն Ուկրափնայում թուլլ է, և բարեխառնության տատանումները բավական մեծ են:


Տեղումների միջին քանակը հասնում է մոտ 500 միլիմետրի և թափվում է գլխավորապես ամառը. Այսպիսով մինուրապալին տեղումները միանդամալն բավարար են գլուղատնտեսության համար. Բայց դժբախտաբար յերբեմն փշում են արեկլան և հարավ-արևելյան չորքամիջներ, վորոնք չորացնում են հասկերի միջի հատիկները և դարձնում նրանց մասը ու թեթև չողը շատ է և մեծ մասը բաղկացած է սելվանողերից. Շնորհիվ իր ալդ բնական նպաստավոր պայմանների, Ուկրափնան հացի բերքով առաջին տեղն է բռնում ամբողջ Միության մեջ:

Զբաղվունեքը.—Ուկրափնայի բնակիչների գլխավոր զբաղմունքը գլուղատնտեսությունն է: Շնորհիվ արգավանդ սեահողի և նպաստավոր կլիմալիի, հացահատիկների մշակությունը հսկայական չափերի լեասելու հացահատիկների մեջ առաջին տեղը բռնում է ցորենը, վորոն

իր լավ հատկությունների շնորհիվ մեծ հոչակ ունի Արևմտան Ցեղապահում: Ուկրաինան հաց և սատակարարում վոչ միայն Միության հացի պակասությունը ունեցող շրջաններին, այլ և Արևմտայան Ցեղապահյան: Նա Միուրյան ամենամեծ տեսարանն է: Ուկրաինայից արտասահման ուղարկվող գյուղատնտեսական մթերքների մոտ 70% -ը հացահատիկներ են:

Տեխնիկական բուկսերից Ուկրանայում շատ տարածված եւ տարարի նակնդեղը՝ ճակնդեղի մշակման հետ կապված եւ և մեր տարարի արտադրությունը: Ուկրաինայում գտնվում են շաքարի մի շարք խոշոր գործարաններ, վորտեղ ճակնդեղից մեծ քանակությամբ շաքար են ստանում: 1926 թ. ամբողջ ԽՍՀՄ-ում ստացվել ե 983 հազար տոնն շաքար, վորի $\frac{1}{4}$ -ից ավելին Ուկրաինան ե տվել:

Ճակնդեղի մշակության լայն ծավալվելը հեղաշրջեց Ուկրաինայի լեռկրագործությունը: Հացահատիկների հետ միաժամանակ մշակելով ճակնդեղ, յերկրագործը հարկադրված յեղավ թողնել-յեռադաշտան սիստեմը և անցնել քառադաշտան սիստեմին: Բացի այդ ճակն-



Նկ. 36. Հունձը արակտորի ոգնությամբ.

դեղի ցանքսերը ստիպեցին հողն ավելի խնամքով մշակել և պարարտացնել հանքային պարարտանյութերով: Այս բոլոր մեծացրեց հողի արդավանդությունը և բարձրացրեց բերքատվությունը:

Ուկրաինայում մեծ տեղ են բռնում և ալգիները, վորտեղ մշակում են խնձոր և տանձ, իսկ հարավային Ուկրաինայում նաև ծիրան, դեղձ և խաղող:

Պակաս տարածված չեն սեխը և ձմեռը կը:


Վերջերս Ուկրաինայում սկսեցին մշակել Կենած բուկսը, վորեց պարկեր են գործում:

Անասնապահությունը կարևոր տեղ է բռնում Ուկրաինայի ժողովրդական անտեսության մեջ: Պահում են մեծ քանակությամբ խոշոր յեղջուրավոր անասուններ (մսացու), ինչպես և խողեր ու վոչխարներ:

Ուկրաինայի բնական հարստությունների մեջ առաջին տեղը բռնում են լեռկարը և բարածուխը:

Քարածուխի հանքը գտնվում է Դոնեցի ավազանում (Դոնի աջակողման վտակներից մեկն ե) և բռնում է 20 հազար քառ. կիլոմետր տարածություն: Քարածոխի պաշարը հաշվում են մոտ 60 միլիարդ տոնն:

Դոնեցի այդ քարածխային ավազանը, կամ ինչպես ասում են Դոնբասսը քարածխի արտադրությամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Միության մեջ: ԽՍՀՄ-ում ստացվող ամբողջ քարածխի $\frac{3}{4}$ -ը Դոնբասսն է տալիս:




Նկ. 37. Դոնբասս. Հանքահորում գագոնիկը բարձում են քարածխով.

Դոնեցի քարածխի շերտերը տեղ-տեղ ուղղակի գետնի լեռնեսն են գուրս գալիս կամ շատ խոր չեն գտնվում: Այս հանգայանքը հեշտացնում է քարածխի արտադրությունը: Մյուս կողմից այդ քարածուխն աչքի յե ընկնում իր վորակով: Նա տալիս է կոմս, վորն անհրաժեշտ ե մետալլուրգիայի համար:

Յերկաթահանքերը գանվում են թե Դոնբասսում (Լուդանսկ քաղաքի մոտ) և թե Կրիվոյ Ռոգում (Դնեպրից արևմուտք):

Կրիվոյ Ռոգի յերկաթահանքի մեջ պարունակվում է մոտ 60% յերկաթ։ Բացի ալդ նա հեշտ և հալվում։



Նկ. 38. Գործարան Դոնբասում.

Այսպիսով Ուկրաինայում կողք-կողքի գտնվում են կոքսացող քարածուխ և գյուրահալ յերկաթահանք։ Այդ պատճառով Դոնբասում, ինչպես և Կրիվոյ Ռոգում կառուցվել են մի շարք մետալուրգիական գործարաններ, վորտեղ մեծ քանակությամբ թուջ, պղղատ և յերկաթ և ստացվում։

Խարկովում, Դնեպրոպետրովսկում այդ յերկաթից ու պղղատից պատրաստում են զանազան մեքենաներ, իսկ Նիկոլաևում նաև նավեր։

Մյուս հանքերից հիշենք մանգանը, աղը և սնդիկը։

Մանգանի հանքերը գտնվում են Նիկոլաև քաղաքի մոտ (Դնեպրի աջ ափին) և գործ և ածվում վոչ միայն Ուկրաինայի մետալուրգիայի կարիքների համար, այլև արտահանվում են։

Աղի արտադրությունը հսկայական չափերի յէ հասել։ Ամբողջ Միության մեջ գործածվող աղի 50% ը Ուկրաինան է տալիս։

Սնդիկը նույնպես միութենական նշանակություն ունի։

Հնգամյա պղանեն։—Հնգամյա պղանի համաձայն Ուկրաինայում պետք և ընդարձակվեն ինտենսիվ կուլտուրաների ցանքսերը (շաքա-

րի ճակնդեղը, կարտոֆիլը և ալլն) և ալդ կուլտուրաների վերամշակությունը Որինակ, ճակնդեղի ցանքսերը պետք ե աճեն 68⁰/₀-ով, իսկ արտադրվող շաքարի ցանակը պետք ե կրկնապատկվի: Մանր ճլուղերից կարելի յե ընդարձակել խաղողի և ծխախոտի մշակությունը և արգելործությունը:

Ուկրաինայի քարածխային և մետալլուրգիային արդյունաբերությունը բացատիկ տեղ ե բռնում ԽՍՀՄ-ի ժողովրդական անտեսության մեջ: Ալդ պատճառով հնգամյա պլանի մեջ առանձնապես ուշադրություն և դարձնվում այս շրջանի վրա: Կառուցվելու լեն յերկու խոշոր և լեկտրական յերկաթուղիներ, վորոնցից մեկը՝ Կրիվոյ Բուզը Դոնբասի վրայով միացնելու յե Ստալինգրադի հետ (Վոլգայի ափին): Իսկ մյուսը՝ Մարիուպոլիցը Դոնբասսի վրայով՝ Մուկվայի հետ:

Կրիվոյ Բուզ-Դոնբասս-Վոլգա գիծը կեֆանացնի քարածխի և յերկաթանանքի փոխադրությունը, մյուս կողմից ալդ գծով Դոնբասսի քարածուխը կհասցվի Ուրալ և ալսպիսով Դոնբասսի քարածուխը և Ուրալի յերկաթանանքը կկապվեն իրար հետ:

Դոնբասս-Մուկվագիծը հնարավորություն կտա քարածուխն ավելի ձեռնառ պայմաններով հասցնել կենտրոնական արդյունագործական շրջանին Ներկայումս կառուցվում են Դնեպրի ելեկտրոկայանը (Դնեպրոստրուլը՝ 372 հազար կիլովատա), Ռարկովի 44 հազար կլվ.) և Կիեվի (44 հազար կլվ.) ելեկտրոկայանները, վորոնց եներգիան զարկ կտա գործարանային կյանքին: Կրացվեն մետալլուրգիական և քիմիական բազմաթիվ գործարաններ: Մետաղագործության սսպարիզում առաջին հերթին արտադրվելու լեն վագոններ, շոգեկառքեր և նավեր:

Ուկրաինայի արդյունագործությանը հնգամյա պլանով հատկացվում և 4.201 միլիոն ռուբլի, վորի խոշոր մասը (մոտ 3642,7 միլիոնը) ծախսվելու յե ծանր արդյունաբերության զարգացման վրա:

ԴԼԵԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Խարկով—417 հազար բնակիչ: Ուկրաինայի վարչական, քաղաքական և կուլտուրական կենտրոն: Հացի առևտուր, շոգեկառքերի և վագոնների կառուցում, ելեկտրոտեխնիկա, գյուղատնտեսական մեքենաներ, կոնֆետի գործարաններ:

Կիև—514 հազար բնակիչ: յերկաթուղային հանգույց, կաշվի, կոշկեղենի, ծխախոտի, լուցկու գործարաններ, սղոցարաններ, կուլտուրական կենտրոն:

Ոլիսսա—421 հազար քնակիչ. Նավահանգիստ, հացի արտահանություններ. ջրաղացներ, կաշվի և կոշկեղենի արտադրություն. գյուղատնտեսական մեքենաներ:

Դնեպրովետրովսկ—մետալլուրգիական խոշոր գործարաններ, մեքենաների արտադրություն. բանվորական կենտրոն:


Արտեմովսկ, Լուգանսկ յել Ստալին—արդյունագործական և բանվորական խոշոր կենտրոններ:

Նիկոլայևկ—նավահանգիստ. հացի արտահանություն. ելեկատորներ, ջրաղացներ. մեքենաների արտադրություն:

Մարիսվոլ—քարածխի և հացի արտահանություն. ջրաղացներ մետալլուրգիական և մետաղագործական գործարաններ:

ՀՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՈՎԱՓԸ ԽԱՀՄ-Ի ԿԵՆՍԱՐԱՆՆ Ե

Իր բնության գեղեցկությամբ միանգամայն ուրույն տեղ ե գրավում Ղրիմի հարավալին ծովափը, այսինքն այն ծովափնյա նեղ շերտը, վոր ընկնում ե Ղրիմի լեռների և ծովի միջև:



Նկ. 39. Ղրիմի հարավային ծովափը.

Ղրիմի այդ ծովափը պաշտպանված լինելով հյուսիսային ցուրտ քամիներից, ունի տաք յել մեղմ կլիմա, Զմեռ համարյա չի լինում: Յալտայում տարեկան միջին բարեխառնությունը $+13^{\circ}$ է, իսկ հունվարինը՝ $+3,5^{\circ}$: Ամառը շատ շոգ ե լինում. հուլիսի միջին բարեխառնությունը՝ հասնում է միչև $+23^{\circ}$,

Դրիմի լեռների հարավային լանջերի հողը գլխավորապես կը առաջն է և բավական հարմար և խաղողի մշակության համար։ Իր նըղապատճակոր կը իմայի պատճառով Դրիմի հարավային ծովավազ, մանավանդ այնտեղ, վորտեղ արհեստական վոռոգումը կիրառվում է, ծածկված և փարթամ և բազմազան բուսականությամբ։ Այստեղ մեծ հաջողությամբ աճում են զափնիներ, մագնոլիա, ձիթենի, ոլիանդը, մըշտաղար նոճի և այլն։ Ընդարձակ տարածություններ ծածկված են խաղողի և մրգի այդիներով, վորտեղ մշակում են ընտիր խաղող, դեղձ, ծիրան և այլ մրգեր։ Դրիմի խաղողը բավական քաղցր և և լավ գինի չետալիս, ալդ պատճառով գինեղործությունը բավական տարածված է Դրիմում։

Դրիմում մշակում են նաև ծխախոտ, վորը լավ վորակ ունի։

Դրիմի ափերի մոտ վորսում են մեծ քանակությամբ ձկներ, վորոնց մեծ մասից պատրաստվում են պահածոներ (կոնսերվներ), կոնսերվների արտադրությունը կենտրոնացած է Կերչում և Բալակլավում։ Եռվափից վոչ հեռու գտնվում են բազմաթիվ լճեր, վորտեղից ստացվում է ալ։




Նկ. 40. Սեփաստոպոլի խորշը։ Սև-ծովյան նավատորմի կայանը։

Դրիմի հարավային ափը, շնորհիվ իր սքանչելի կլիմայի, հանդիսանում է համամիուրենական կենսարանը։ Առեն տարի ալստեղ առհագին քանակությամբ ժողովուրդ և գալիս հանգստանալու, ծովում լողանալուն և բժշկվելու համար։ Առանձնապես շատ գալիս են թոքախտավորներ, վորոնք ալստեղ թեթևություն են զգում։

Դրիմի կենսարանում կառուցված են բազմաթիվ սանատորիաներ և հանգստյան տներ: Ալդ հանգստյան տներն ու սանատորիաներն են ուղարկվում, համարյա կլոր տարին, ամբողջ Միությունից քաղմաթիվ բանվորներ և ծուռայողներ:

Մինչև հիմա բանվորներն իրենց առողջությունը վերականգնելու և հանգստանալու համար բոլորովին մուտք չունեյին այդ սքանչելի, գեղեցիկ տեղերը, վորովհետև համարյա ալդ ամբողջ ափը պատկանում եր հարուստ բուրժուազիային և նախկին թագավորական ընտանիքի անդամներին: Նրանք այստեղ կառուցել ելին փառահեղ պայտաներ և ամառանոցներ, վորոնցից ոգտվում ելին միայն մի խումբ մարդիկ, իսկ մնացած ազգաբնակությունը հնարավորություն չուներ նույնիսկ ալդ պալատները գիտելու: Այժմ այդ բոլորը դարձել և ամբողջ ժողովրդի սեփականություն: այստեղ բացվել են ամբողջ Միության բոլոր յերեխաների համար բազմաթիվ մանկական զաղութներ կրվագիալի պալատի մի մասը գարձրել են թանգարան, վորը գտնվում ե Լուսժողկոմի հսկողության տակ, մյուս մասը՝ արված և Առժողկոմին, վորն այստեղ կազմակերպել ե զյուղացիական կուրոր:



Նկ. 41. Խաղողի այգիներ Դրիմում.

Կենտրոնական կուրորտը Յալտա քաղաքն է. նրանից դեպի արևմուտք ընկնում են՝ Լիվագիան, Ալուպկան, և Սիմեիզը, իսկ դեպի արևելք՝ Գուրզուֆը, Ալուշտան և ուրիշները Վորապես ծովալին կուրորտներ, վոր չափազանց ոգտակար մասնավանդ յերեխաների համար, հայտնի յե Յեվպատորիան իր ընդարձակ պլատով:

Իրենց բուժիչ հատկություններով հայտնի յին նույնպես Դըիմի մի քանի լճերը, առանձնապես Սաքսի լիճը, վոր գտնվում ե Յեփպատորիայի մոտ և Չոկրակսկին, վոր գտնվում ե Կերչի մոտ:

Դըիմի ինքն. Անձ լուսավորության կենտրոնը Սիմֆերոպոլին է: Դըիմի ծովափում գտնվում ե հանրապետության կարևոր զինվորական նավահանգիստ՝ Սեվաստոպոլը, ինչպես նաև առևտրական նավահանգիստներ՝ Կերչը և Ֆեոդոսիան:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ-ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ

Աշխատանիկ բարեկի հետ

ԽՍՀՄ-ի քարտեզի քրա ցույց տալ.


1. Կենտրոնական-Սևահողային շրջանի սահմանակից շրջանները, 2) գլխավոր յերկաթուղիները, 3) Ոկա և Դոն գետերը, 4) Վորոնեժ, Կուրսկ, Ռյայով Տամբով և Կովով քաղաքները:

Կենտրոնական-Սևահողային շրջանը գտնվում է Ռոկրայինալից հյուսիս և Նրա մակերեսութիւնի մեծ մասը հարթ և ծածկված արգավանդ սիլվանողով, վորից և շրջանն ստացել է իր անունը:

Կլիման մեղմ և միջին տարեկան բարիխառնությունը հասնում է +5°-ից մինչև +7°, Մթնոլորտային տեղումներ կազմում են մոտ 500 միլիմետր, վորը միանգամայն բավարար և տեղում մշակվող բուսաբանության համար Ալսպիսով բնական պայմանները բավական նպաստավոր են գլուղաւանտեսության դարպացման համար:

Շրջանը գտնվում է ծովից հեռու և չունի աչքի ընկնող նավագնաց և կլեկտրական եներգիա ստանալու համար հարմար զետեր. մյուս կողմից նա զուրկ և վոչ միտքն քարածխից, այլ և փայտի ածուխից (անտառները սակավ են): Անա ալդ և պատճառը, վոր Կենտրոնական-Սևահողային շրջանի բնակչության գլխավոր պարագմունքը կազմում է վոչ թե առևտուրը և արդյունագործությունը, այլ գլուղատնտեսությունը: Շրջանից արտահանվում է գլխավորապես գլուղատնտեսական պրոդուկտներ—հաց, անասուն, միս, լուղ, կանեփ և շաքար. ներմուծվում է հանքային արդյունաբերության պրոդուկտներ.—նավթ, քարածխ, աղ, փալտ, ձուկ, գործվածքներ, լերկաթե գործիքներ և այլ պարագաներ:

ԽՍՀՄ-ի վոչ մի շրջանում այնքան հող չի վարված, վորքան Կենտրոնական-Սևահողային շրջանում. ինչ վոր կարելի յեր վարել, վարված ե: Հացահատիկների մեջ առաջին տեղը բռնում են հանարը, կորեկը և վարսակը:




Հետ. 42. Եհանուրունական՝ սկզբանուրային շրջաններ քարտով դիտվող դիմումը.

Շաքարի նակնդեղի, ծխախոտի, կանեփի և արևվածաղի մշակությունը համաժութենական նշանակություն ունի:

Խոտացանքսերը և խոտահարքերը շրջանում մեծ տեղ չեն բըռնում, ալդ պատճառով նա անասուններով ապահով չեն Անասունների մեջ աչքի յեն բնկնում ձիերը. Որլովի և Վորոնեժի ձիերը հոչակված են ամբողջ Միտության մեջ:

Սրգունագործությունը թուլլ և գերամշակում և գլխավորապես գյուղանտեսական պրոդուկտներ, Կարեոր և հիշել արդի գործը, ձիքահանությունը, (արեածաղկի սերմից), ռաֆարի և սոլիտի արտադրությունը:

Ենակյուրյան խոտարյունը յիշ արտազդը՝ Կենարոնական-Սևողային շրջանի բնակչության գլխավոր զանգվածը ուսւմնեան են, շրջանի հարավային մասերում ապրում են նաև Ռէկրայի-նայիները:



Նկ. 43. Որլովի արագավազ ձին.

1926թ. մարգահամարի տվյալների համաձայն ամեն մի քառ. կիլոմետր տարածության վրա ապրում ե մոտ 58 մարդ. Ալսպիսով իր բնակչության խոտարությամբ Կենարոնական-Սևահողային շրջանը լիբկրորդ տեղն և բնում ամբողջ Միտության մեջ (առաջին հարավ-արեամալան շրջանն ե, Ռէկրայինայում): Բայց հարավ-արեամտյան շրջանում գյուղանտեսությունն անհամեմատ ավելի ինտենսիվ ե, քան Կենարոնական-Սևահողային շրջանում. Ալդ և պատճառը Կենարոնական-Սևողային շրջանի բնակչությունը չի կարողանում բավարարվել զյուղատնեսության արդյունքով և ստիպված է լինում անցնել Դոնբասու, Հյուսիսային Կովկաս, կենարոնական-արդյունաբերական շրջանը և այլն. 1896 թվականից մինչև 1921 թ., այսինք 25 տարվա ընթացքում այսակեցից գաղթել են մոտ 1 սկզբին մարդ:

Հեղամյա պլանը. — Կենարոնական-Սևահողային շրջանի գյուղատնեսությունը բարձրացնելու համար հատկացված և այս հնգամյակի ընթացքում 500 միլիոն ռուբլի Սուանձնապես ուշադրություն է դարձվում տեխնիկական բույսերի ցանքսերի լնզարձակման վրա. հողաշենարարության և մելորիտացիալի վրա. ընդարձակվելու յեն խոտարուց սերի ցանքսերը, վորով կրաքարանա և անասնապահությունը: Բիեքատովությունը մեծացնելու համար ուժեղացվում է արհեստական պարարտացումը: Բայց վորքան ել զյուղատնեսությունն ինտենսիվ դարձ-

վիր, այնուամենաւինիվ նա չի կարող բավարարել ամբողջ շրջանի բնակչության կարիքներին։ Միաժամանակ անհրաժեշտ է, վոր գլուղատընտեսական արդյունագործությունը նույնպես ինդուստրացվի, այսինքն այդ արդյունագործությունը պետք է այնքան բարձրացնել, վոր տեղական գյուղատնտեսության տված հում նյութն ամրողապես տեղական գործարաններում մշակվի։ Հնգամյակի ընթացքում արդյունագործության մեջ դրվելու և մոտ 421 միլիոն ռուբլի։

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Վարսինեծ—Շրջանի վարչական կենտրոնն է. յերկաթուղային հանգույց։ Հացի և արևածաղկի սերմի մթերում. ձեթի, կաշվի գործարաններ. գյուղատնտեսական մեքենաների արտադրություն։

Կուրսկ—Հացի և արևածաղկի սերմի մթերում. ջրաղացներ. կողեղենի արտադրություն։

Ուրյալ—Ռկալի վրա. կանեփի վերամշակություն. գյուղատնտեսական մեքենաների արտադրություն։

Տամբով—Հացի մթերում. ջրաղացներ. կողկեղենի արտադրություն։

Կազլով—Ջրաղացներ. սպանդանոցներ. սաոցրած մոխ դորձ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ֆարմատեմբ Բարեկի հետ

1. ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք կենտրոնական արդյունագործական շրջանը. ցույց տվեք հարկան շրջանները (տշխարհ, ատլատ, ԽՍՀՄ քաղ. քարտեզ)։


2. Ցույց տվեք Մոսկվա—Յերկան, Մոսկվա—Տաշկենտ, Մոսկվա—Վլադիվոստոկ, Մոսկվա—Արխանգելսկ, Մոսկվա—Լենինգրադ, Մոսկվա—Մինսկ, Մոսկվա—Բղենայի, Մոսկվա—Սեմանովո, յերկաթուղիները։

3. Ցույց տվեք շրջանի գլխավոր քաղաքները. դրանք նշանակած են քարտեզի վրա։

Կենտրոնական—արդյունագործական շրջանը գտնվում է ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի կենտրոնում և իր արդյունագործությամբ ու առևտրով առաջին տեղն է բռնում ամրող ԽՍՀՄ-ում։

Նա Միուրյան արդյունագործական յեկանական կյանքի սիրացի է։

Բնուրյունը, Շրջանի մեծ մասը դաշտավայր և աննշան բարձրություններ գտնվում են միայն նրա արևմտյան մասում։




Նկ. 4. Հինգուրինական-արդյունագործական շրջանի քարտեզը.

Յերկրի ամբողջ մակարդակի մոտ 40%-ը դեռևս ծածկված է անտառներով. վորոնց հլուսիսային մասը փւաժերել ե, իսկ հարավա-լինը խառն.

Հողը բերրի չե (մոխրահող, ճահճոտ և տորֆային հողեր). Կլի-ման չափավոր ցամաքային ե. տարեկան միջին բարեխառնությունը հասնում է 30-ից մինչև 50. Մթնոլորտալին տեղութիւնը մոտ 500 միլ-լիմետր ե: Շրջանի միջով հոսում են մեծ և ջրառատ գետեր, ալդ պատճառով ել նա բավական լավ ե վոռոգվում և լերաշտները հազվա-գյուտ լերկութ են:

Հում նլութով և վառելանյութով շրջանը աչքի չի ընկնում, չնայելով վոր արդյունագործությունը խոշոր չափերի լի հասել: Ալս-տեղ գտնվում ե ցածր վորակի բնածուխ (Յենթա-Մոսկովյան ավա-



Նկ. 45. Բյաղանի դեղնկուհներ.

դան) և տորթ: Նա չունի վոչ կոքսացող քարածուխ, վոչ նավթ և վոչ ել այնպիսի ջրալին եներգիա, վոր հնարավորություն տար մեծ ելեկ-

տրակայարաններ կառուցելու ձիշտ և յերկարահանիքի պաշարը մեծ և, բայց այդ յերկաթահանքը ժամանակակից մեաալլուրգիայի համար առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, վորովհետև քիչ յերկաթ և պարունակում (50% -ից պակաս): Գյուղատնտեսական հում նյութից աչքի յե ընկնում վուշը և կարտոֆիլլ:

Շնայիլով իր ալս աննպաստ պայմաններին, շրջանը կարողացավ արդյունագործությամբ առաջին տեղը բռնել Միության բոլոր շրջանների մեջ: Այդ բանին նպաստեց նրա աշխարհագրական դիրքը: Գոնվելով Միության Յերոպական մասի կենտրոնական մասում, նազարեռվ կապվում և հարեան շրջանների հետ:

Շրջանի կենտրոնից՝ Մոսկվայից սկսվում են ուսանեմեկ յերկաթուղիներ, վորոնք ԽՍՀՄ-ի հեռավոր մասերը կապում են կենտրոնական արդյունագործական շրջանի հետ: Գետերով և լեռկաթուղիներով շրջանը ԽՍՀՄ-ի զանազան մասերից ստանում ե բամբակ, բուրդ, քարածուխ, նալթ, մետաքս և այլն ու արդպիսով դառնում արդյունագործական կենտրոն: Բավական և հիշել հենց այն, վոր ԽՍՀՄ-ի ամրող բանվորության $\frac{1}{3}$ -ը ալս շրջանումն ե գտնվում:


Զբաղմնութիւն: Արդյունագործությունը կենտրոնական արդյունագործական շրջանում հսկայական չափերի յե հասել: ԽՍՀՄ-ի գլխավոր գործարաններն ու ֆաբրիկաներն ալս շրջանումն են գտնում:

Այստեղ և կենտրոնացած մեր բամբակիցնենի համարյա ամրող արտադրությունը, վորով աչքի յեն ընկնում մանավանդ Մոսկվան և Եվրոպա-Վոլգիսենսկիր: Այդ ֆաբրիկաների բամբակն ստացվում է Միջին Ասիայից (Ռւսբեկստանից), Անդրկովկասից և մասամբ Հյուսիս-Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Բամբակից այստեղ պատրաստում են չիթ, միտկալ, սատին և այլն, վորոնք Արևմտյան Յերոպայի գործվածքներից իրենց վորակով հետ չեն մնում և նույնիսկ մրցում են նրանց հետ: Այդ բամբակի գործվածքները տարածվում են վոչ միայն Միության հեռավոր մասերում, այլև ասիական շուկաներում, մանավանդ Պարսկաստանում:

Շրջանի ֆաբրիկաներում մեծ չափով պատրաստում են նաև բրդի և վուօի գործվածքներ: Վուշի ֆաբրիկաներով աչքի յեն ընկնում մանավանդ Բարուլավլը և Կոստրոման:

Շրջանի ամբողջ բանվորության $\frac{2}{3}$ -ը տեքստիլ արդյունագործության մեջ և աշխատում: Համամիութենական նշանակություն ունի նաև մեքենաշինարարական արդյունաբերությունը: Մոսկվայում և Սորունվորում (Նիժնի Նովգորոդի մոտ) գտնվում են հսկայական դործարաններ, վորակ պատրաստում են վագոններ, շոգակառքներ, նավեր

և այլն։ Նիմոնի նովգորոդում կառուցվում ե մի մեծ գործարան, վորտեղ շինվելու լեն մեծ քանակությամբ տրակտորներ ամբողջ Միության համար։



Նկ. 46. Որեխովո—Զույեվոյի մանուֆակտուրան.


Հիշենք նաև համամիութենական նշանակություն ունեցող կոնսֆեսեղենի Փարբիկաները («Մոսկվարոմ») ապակեղենի, զանազան հոստավետ ստալոնների, կաշվեղենի գործարանները և այլն, վորտեղ պատրաստած ապրանքները տարածվում են հյուսիսային բևեռային ծովից մինչև Սև ու Կասպից ծովերը և Միության արևմտյան սահմաններից մինչև Հեռավոր Արևելքը։

Չնայելով վոր արդյունագործությունը այդ չափ զարգացել է, շրջանի բնակչության խոշոր մասը պարագում ե յերկրագործուրյամբ, բայց սեփական հացը չի բավականանում և ԽՍՀՄ-ի հացահատ շրջաններից ամեն տարի մեծ քանակությամբ հաց և ներմուծվում է Ենոպատերազմից առաջ բնակչությունն սկսել եր կրճատել հացի ցանքները և զարկ տալ զլիսավորապես տեխնիկական բույսերի (վուշի, կարտոֆիլի) մշակության և խոտացանուրյան։

Գյուղատնտեսությունն սկսում է հարմարվել քաղաքային բնակչության պահանջներին։ Խոշոր քաղաքների շուրջը զարգանում են պլոտուկամիվ անասնապահությունը, բանջարաբուծությունը և այգեգործությունը, վորոնք այդ քաղաքներին մատակարարում են թարմ կաթնեղենն, կանաչեղենն, վարունգ, սոխ, կաղամբ, տանձ, խնձոր, բաւչելագ և այլն։


Վորովհետեւ կենտրոնական-արդյունագործական շրջանի հացը բերքի ամենահաջող տարիներում անդամ չի բավականանում, այդ պատճառով զլուզացիներն ստիպված են ապրուստի այլ աղբյուրներ գտնել. Նրանցից շատերը գնում են քաղաք աշխատելու, մլուսներն իրենց տներում զանազան իրեր են շինում ու վաճառում:

Տնայնագործական արդյունագործությունը Տնայնագործական արդյունագործություն կարևոր նշանակություն ունի շրջանի բնակչության համար. Այդ արդյունագործությամբ գրադարձում են միլիոնավոր ձեռքեր, Տնայնագործները Տուլայում պատրաստում են ինքնայեռներ, Պավլովո քաղաքում՝ կողպեքներ, Վորովյանում՝ զանակներ, մկրատներ, Յարուլավի և Կոստրոմայի նահանգներում՝ քաթան, գդալներ՝ խսիրներ, տուփեր, մասնավորապես Կոստրոմայի նահանգում՝ ականջողեր, մատանիներ և արծաթե ու արուրե զանազան զարդարանքներ:



Նկ. 47. Տնայնագործներ. Մատուցարաններ են պատրաստում,

Մոսկվայի մոտակա ուալոններում զարգացել են կահկարասիքի արգյունագործությունը, մետաքսե գործվածքների, ճենապակե ամանների, կավե խաղալիքների արտադրությունը և այլն:



Նկ. 48. Տնայնագործների գործած կարասիք.

Աննացոնական-արդյուն-
նազործական օրջանի
կապը Խռ՛մՄ-ի մյուս
օրջանների հետ

Կենտրոնական-արդյունագործական շրջանը
մյուս շրջաններից ներմուծում և գլխավորա-
պես հում նյուր և սննդամբերք. այսպես որի-
նակ կենտրոնական Սևահողալին շրջանից նա
ներմուծում և հաց, թագվիզ՝ նազթ, Դոնրա-
սից՝ քարածուխ, Ուրալից՝ աղ, Վոլգալից, Արևմտան Միբիրից, Հյուս-
կովկասից, Կաղակստանից՝ անասնապահական պրոդուկտներ, Աստրա-
խանից՝ ձուկ, Ուզբեկստանից՝ բամբակ և ալյն:

Դրա փոխարեն այս շրջանը արտահանում և գործարանային
ապրանքներ, զլիսավորապես մանուֆակտուրա, ապա դանազան մեքե-
նաներ, սապոն և ալյն:

Այդ ապրանքների բաշխման գործում Մոսկվան բացառիկ նշա-
նակություն ունի, վորովհետեւ այստեղ են գտնվում բոլոր սինդի-
կատների և բանկերի վարչությունները, կենտրոնական բիրժան և
ալյն:

ՀԵզամյա պլատնը, Կառավարությունն առանձնապես ուշաղրություն
ե գարձնում կենտրոնական արդյունագործական շրջանի արդյունագոր-
ծության զարգացման վրա. Այդ յերեսում և հենց տին գումարի քա-
նակից, վոր հատկացվել և շրջանին այս հնգամյակում: 2.820,2 մի-

լիոն սուբլուց տեքստիլ արդիունագործությանը բաժին և ընկնում 897,2 միլիոն սուբլի, մետաղագործական և հլեկտրատեխնիկական արդյունագործությանը 1.050 միլիոն քիմիական արդյունագործության 205,1 միլիոն և այլն:

Դյուզանանատեսության ասպարիգում մեծ ուշադրություն է դարձվում անասնապահության և տեխնիկական բոււսերի մշակության վրա: Պետք և ընդարձակվեն վուշի, խոտարությունների ցանքսերը. մեծ չափերի պիտի հասնի նաև կոլտնտեսությունների ցանքսերը:



Նկ. 49. Սպերգլովի հրապարակը: Պետական մեծ թատրոնը, վուշտեղ գումարվում և ԽՍՀՄ-ի խորհուրդների համագումարը.

Պլանը մեծ տեղ և տալիս նաև շրջանի ելեկտրիֆիկացիային ուայունական ելեկտրակայարանների կարողությունը հնգամյակի ընթացքում (1927/28—1932/33) պետք և 282 հազար կիլովատտից հասնի 1.100 հազար կիլովատտի:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ:

Մոսկվա 2.026 հազար բնակչութ (1926 թ. մարդահամարի տվյալներով), ԽՍՀՄ-ի գլխավոր քաղաքը և արդյունագործական, քաղաքական և կուլտուրական կյանքի կենտրոնը: Մոսկվայում և գումարվում Միության իշխանության գերազույն որգանը խորհուրդների համագումարը: Այսուհետ կենտրոնացած են պետական գերազույն հիմնարկությունները ԽՍՀՄ-ի կենտրոնական ֆորմադիր կոմիտեն և ժողովրդական կոմի-

սարների Խորհուրդը կոմունիստական կուսակցության վճռութեան կանորոնական
կոմիտեն և այլն:




Նկ. 50. Մոսկվայի կղզելը.




Նկ. 51. Ազատության արձան Մոսկվայի Խորհուրդների շենքի մոտ:

Մոսկվայում գտնվում են՝ նաև յերկու համալսարան, վորոնց կլինիկաները հայտնի լին ամբողջ Յիվրոպայում, միութենական նշանակություն ունեցող թանգարաններ, կենդանաբանական պարկը և բուսաբանական ալյին, Լենինի մավզոլեյը և հայտնի զործիչների արձանները:




Նկ. 52. Լենինի անվան համամիութենական գրադարան.



Նկ. 53. Լենինի մավզոլեյ.

Մոսկվան Միության առևտրի սիրտն ե. նա գտնվում է 11 յերկաթուղիների հանգույցում և ապրանքներ և մատակարարում ԽՍՀՄ-ի բոլոր մասերին։ Այստեղ կենտրոնացած են պետական խոշոր տրեստները և սինդիկատները։

Նիմնի-Նովգորոդ, Յերկաթուղարին և ջրալին ճանապարհների հանգույց. գտնվում է Ռկալի գետաբերանում, վորտեղ Ռկան խառնվում է Վոլգայի հետ։ Գետալին խոշոր նավահանգիստ։ Արդյունագործական կենտրոն (մետաղագործական) նրա մոտ գտնվում է Սորմովին (վագոնների և շոգեկառքերի գործարան) և Բալախնան (թղթի խոշոր ֆաբրիկա)։



Նկ. 54. Նիմնի Նովգորոդ.

Կառումա: Նավահանգիստ Վոլգայի վրա. փայտի առևտուր, վուշի արդյունագործություն։

Յարուշավլ, Նավահանգիստ Վոլգայի վրա. Մոսկվա Արխանգելսկ յերկաթուղու վրա։ Վուշի արդյունագործություն։

Տիեր, Նավահանգիստ Վոլգայի վրա. տեղադրի արդյունագործություն։

Խվանովո-Վողնեսենսկի, Բամբակի գործվածքների ամենախոշոր
կենտրոնը. «Սովետական Մանչեստեր»:

Տուլա: Մետաղագործություն:

Արեխանդր Չուլիկով: Խոշոր տեքստիլալին կենտրոն:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՇՐՋԱՆ

Աշխատանիք բարեկամի հետ

1. ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք Արևմտյան շրջանը. նրա արևմտյան կողմունչ ստար պետական շրջաններ կան:

2. Այս շրջանի մեջ վեր միավեհական հանրապետությունն և մտնում. գտեք նրա գլխավոր քաղաքը: Ցույց տվեք հարեան շրջանները:

3. Դիմեցեք զքեի քարտեզը և նրա վրա գտեք շրջանի գլխավոր քաղաքները Մինսկ, Սմոլենսկ, Բրյանսկ, Գոմել, Վիտեբսկ. զետերը Դնյանպր Պրիպյատ և Բերեզինա գտակներով, Արևմտյան Թվինս:

Բնուրյունը Արևմտյան շրջանի մակերեսութիւնը մեծ մասը դաշտավայր եւ Արևմուտքում բարձրանում և Բելոռուսական բարձրուրույնը, իսկ արևելքում՝ Միջին ուստական բարձրուրույնը: Ամենացածր մասը գտնվում է հարավում և կոչվում է Պոլիսյե: Պոլիսյեն ծածկված է ընդարձակ ճահճճներով, այդ պատճառով բնակչությունն այստեղ շատ նուր և և զյուղատնտեսությունն ել զարգացած չեւ կիման Արևմուտքան Յեփրոպալի խոնավ և ԽՍՀՄ-ի չոր կլիմաների միջին տեղն երանում: Մթնոլորտային տեղումները հասնում են 550—600 միջիմետրի: Ճմեռը համեմատաբար մեղմ և (հունվարի միջին բարեխտանությունը՝ 6,5° հ, մինչդեռ հարեան կենտրոնական-արդյունագործական շրջանում նա հասնում եւ 11°-ի):


Շրջանն ամբողջապես զանվում է խառն անտառների ղոնակում և սևլամողից զւրկ եւ:

Բնական հարստություններից աչքի յեն ընկնում յերկարանաելք և ֆոսֆատիքը, վորոնք ցածր վորակ ունեն: Սպիտակ ածուխի պաշարը մեծ չեւ, վորովինտես գետերը յերկրի մակերեսութիւն հարթ լինելու պատճառով զանդաղ են հոսում այսպիսով բնական պալմանները նպաստավոր չեն թե գյուղատնտեսության և թե արդյունագործության համար:

Զբաղմունելիք: Արևմտյան շրջանի բնակչությունը բաղկացած է գլխավորապես բելոռուսներից, ռուսներից, հրեաներից և մասամբ լա-

*¹⁾ Մանչեստերը Անգլիայի բամբակի արդյունագործության կենտրոնն եւ:

տիշներից, վորոնց դիմավոր զբաղմունքը կազմում է գյուղատնտեսությունը:



Նկ. 55. Արևմտյան շրջանի քարտեզը.

Գտնվելով Սոսկվայի, Լենինգրադի և մյուս կողմից՝ Լենաստանի և Մերձբալտյան արդյունագործական ուժունների միջև, Արևմտյան շրջանն ավելի շատ կարողացավ իր գյուղատնտեսությունն ինտենսիվ դարձնելու:

Ինտենսիվ մշակույթների տոկոսով (27%) շրջանը ըստում է ա-

առջին տեղերից մնելու կարտեզիլիք գործ և ածվում սպիրո քաշելու, անասուններ կերակրելու համար: Լայն չափով տարածված են վուսի և կանեփի մշակությունը վուշը և կանեփը արտահանվում են Հացահատիկները (համար և վարսակ) յիբէրորդական նշանակություն ունեն շրջանի համար և չի բավականանում պակասորդը (մոտ 3 միլիոն կվինտալ) ներմուծվում և Աւելախնակից և կննտրոնական սեահողալին շրջանից:

Ծնորհիվ առաջ կերի (կարտոֆիլ ցանովի խոտեր, բնական մարդագիտիններ), շրջանն ապահովված և պրոդուկտիվ անտունեներով, Խոզարուծությամբ շրջանը բռնում և առաջին տեղը Միության Յենքրապական մասում:

Զափազանց կարենը նշանակություն ունի շրջանի տնտեսության համար անտառ: Գորնվելով շուկաներին ավելի մոտ, քան հյուսիսի խուլ անկյունները, Արեմտալան շրջանը շատ վաղուց կարողացել են զարգացնել անտառախն և նեխուրբյանը: Ծառեր կարտելը և գերանների փոխազդությունը գյուղացիների կարենորդաբարձրմունքներից մեկն են:

Արդյունագործությունը հիմնվում և գալխավորապես տեղական հում նյութի վրա: Ալսակս որինակ, կարտոֆիլի հետ կապված և սպիրտի յիշու ուղարկած արդյունաբերուրյանը, խոզարուծությունը տալիս և մեծ քանակությամբ խոզամազ, գորով արեմտալան շրջանն առաջին տեղն և բռնում ԽՍՀՄ-ում: Սղացարաններում սղոցում են տախտակ ու շինարարական այլ փայտեր, գործարաններում պատրաստում են մեծ քանակությամբ լուցի բաւր, փայտից ծյուր են հանում և ալին կանառեւ վուշի, բամբակի և բրդի գործարաններ: Ավելի կարենը են ապակիդենի և ցեմենտի արտադրությանը:

Լուցիին, խոզամազը, վուշը, կանեփը, շինարարական փայտը, ցեմենտը և ապակեղենը ունեն համամիտութենական նշանակություն:

Հնգամյա պլանը հնգամյա պլանն առանձնապես ուշադրություն և գարձնում տեխնիկական կուլտուրաների և ցանովի խոտերի մակարդակի ընդունակվելու վրա: Առաջինը պետք են մեծանա 30—40% ո-ով, իսկ յիբէրորդը նույնիսկ 70—100% ո-ով: Հացահատիկներին հատկացրած մակարդակը համարյա անփոփոխ և մնում: Ճահիճների չորացնելը հերթական խնդիրներից մեկն ե քանականդ վոր շրջանը գերբնակված և գույղացիությունը սակագահող ե:

Հատկացրած 420 միլիոնի մեծ մասը ծախսվելու և արդյունագործության այն ճյուղերի վրա, վորոնք մշակում են տեղական հում նյութքայց աչքաթող չի արգում և այն ճյուղերը, վորոնք բերովի հում նյութով են աշխատում (մետաղագործական արդյունաբերություն):

ԳԼԽԱՎՀՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Մինչևլ. — Բելոռուսիայի ՍևՀ կենտրոնն է, հացի և փայտի առետուր. կաշվի, հագուստի, կոշկեղենի և սպիրտի գործարաններ:

Սմոլենսկ. — Վարչական կենտրոն, յերկաթուղային հանգուցնավահանգիստ Դնեպրի վրա. փայտի, փուշի, հացի առևտուր. ողոցարաններ, հագուստեղենի, սպիրտի գործարաններ:

Բրյանսկ. — Յերկաթուղային հանգուց. նավահանգիստ Դնենալի վրա. Բրյանսկի արդյունազործական ռալոնի կենտրոն (լուցկի, ցիմենտ, մեքենաներ, ապակեղեն, սղոցարաններ):

Վիտեբսկ. — Յերկաթուղային հանգուց. Հայտնի յե վուճի, կաշվի, կոշկի, հագուստի, խողածազի գործարաններով:

Գոմել. — Առետրական և արդյունազործական կենտրոն:

I. ԼԵՆԻՆԳՐԱԴԻ (ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ) ՇՐՋԱՆ

Ա. ԺԻԽԱՏԱԲԻ ՏԱՐՏԵԼԻ հետ

1. ԽՍՀՄ-ի քաղաքական քարտեղի վրա գտնեք հյուսիս-արկմտյան շրջանը տվել հարեան շրջանները, ոտար պետությունները և նրա ափերը վողողող ձևերը:

2. Մասշտարի միջոցով իմացեք թե շրջանի հյուսիսային սահմանից մինչև հարավայինը քանի կիլոմետր եւ:


3. Ցույց տվեք Լենինգրադ—Մոսկվա, Լենինգրադ—Մուրմանսկ, Լենինգրադ—Պակով—Վարչական, Լենինգրադ—Վոլոգդա յերկաթուղիները:

4. Կարելի յե Լենինգրադից և Մուրմանսկից ծովային ճանապարհով Ամերիկա գնալ.

5. Դրբեք մեջ գետեղված է հյուսիս-արկմտյան շրջանի քարտեղը. Նրա վրա գլուխ Բարենցի և Սպիտակ ծովերը. Փիննական ծոցը, Լոպոզա, Ռելոյե, Իմմեն-Զուլ լճերը. Նեվա, Ավիլ, Վոլխով, Շեկսնա, Կովժա, Վիտեբսկ գետերը, Լենինգրադ, Պոկով, Նովոգորոդ, Չերովովսկ, Զերպովկա, Մուրմանսկ քաղաքները, Կրոնշտադտ ամրոցը (Ֆիննական ծոցում):

6. Շրջանի ուղարկածային քարտեղի վրա ծովերը ներկեցնեք կապույտ գույնով. սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք և նշանակեցեք վերը հիշած անունները. գրեցեք սահմանակից պետությունների անունները:

Բնուրյունը. — Հյուսիս-արկմտյան շրջանը հյուսիսից հարավ ձգվում է 1.500 կիլոմետր. հյուսիսում նա քենապային շրջանից անցնում է, իսկ հարավում հասնում է 57° հյուսիսային լայնության, այսինքն համարյա մինչև Մոսկալի լայնությունը:



Հյուսիսից հարավ այսչափ ձգված լինելով, Հյուսիս-արևմտյան շրջանը իր բնությամբ և մարդու տնտեսական զործունեյությամբ, բնականաբար, չի կարող միատեսակ լինել նա բաժանվում և հետեւալ յերեք մասերի՝ Կոլա բերակղզի, Կարելիա և հարավային մաս, վորը լճերի շատության պատճառով կոչվում է Աների յերկիր:

ԿՈԼԱ ԹԵՐԱԿՂՋԻ

Կոլա թերակղզին, բացառությամբ իր հարավային անտառապատ շրջանների, տունդրային գոնայում և գանգում. այդ պատճառով նա ունի ցուրտ, դաժան կլիմա և տունդրային, քարքարոտ հող. Համեմատաբար մեղմ կլիմա ունի Մուրմանի ծովագիր. Գոլֆշտրոմ տաք հոսանքը վողողում և ալս մասը և նրա կլիման այնքան մեղմացնում, վոր բենուալին շրջանից հյուսիս ծովը յերեք չի սառչում. Թերակղզու բնական պայմանները յերկրագործության համար այնքան աննպատճ են, վոր վարելահողերը կազմում են նրա ամբողջ մակարդակի հաղիվ 1 %-ը.



Նկ. 57. Գոմուներ.

ցեղին են պատկանում: Նրանք ձմեռը իրենց յեղջերուների հետ քոչում են տեղից տեղ, իսկ ամառը, թողնելով յեղջերուներին անխնամ, ուղևորվում են ծովափ և պարապում ձկնորսությամբ:

Մուրմանի ծովափին, գլխավորապես ամառը, ապրում են ռուսները՝ «պոմորներ», վորոնք իսկական ձկնորսներ են:

Զբարյաներ. — Թերակղզու բնակիչները գլխավորապես ձկնորսությամբ են պարապում:

Բնակչությունը. — Կոլա թերակղզու բնակչությունը շատ նոսր է (ինչնու), բայց հենց արդ քիչ բնակչությունն անգամ չի կարողանում իր սեփական հացով բավարարվել և ապրում ե գլխավորակները, վորովի հացով:

Թերակղզու ներսն ապրում են լոպարները, վորոնք զեղին:



Նկ. 58. Կարելներ.

Դյուտեղ վրասում են մեծ քանակությամբ փողոշներ (արհեսկա), վրը հյուսիսացին յերկրների բնակչության սիրած կերպուրն եւ Զուկը վրասում են կարթերով, վորոնք հազարներով ամրացրած են լինում 3—5 կիլոմետր յերկարություն ունեցող պարանների վրա։ Ջկների գլուխները կտրում են, չորացնում են և պահում ձմեռված համար; Եյարդից «Ճկան լուղ են ստանում, իսկ մարմինը տակառների մեջ ազում են և փոխազրում Արխանգելսկ վաճառելու համար։ Շողենավելքը շըրջում են ձկնորսարանները և թողնում այնտեղ ալյուր, աղ և այլ ապրանքներ, իսկ փոխարենը վերցնում են ձուկ։

Բացի փողոշից Բարենցի ծովում վրասում են տառեխ, սալմոն, փռկ և ալին։ Փռկի կաշվից լավ պայուսակներ են ստացվում։ Մեծ քանակությամբ ձուկ վրասում են նաև Սպիտակ ծովում։

Ճիշտ և Հյուսիսալին Բենետին ծովը ձկներով շատ հարուստ է, բայց մեր ձկնորսները նրանց չեն կարողանում ոգաագործել, վորովհետեւ հար-



Նկ. 59. Լոպար.

մար նավեր չունեն: Առաջաստավոր նավերով ծովագից շատ հեռու գնալ չի կարելի. Բեեռային ծովում հաճախ կատաղի փոթորիկներ են լինում: Նորվեգացիներն ու անգլիացիները լավ նավեր և ձեկնորսական հարմար պարագաներ ունեն. այդ պատճառով նրանք կարողանում են բաց ծով գուրս գալ և մեծ քանակությամբ փողոց փորսալ: Յերբեմն ել ոգտվելով իրենց նավերի արագությունից մտնում են մեր ծովերը և ձուկ վորսում:

Ինչպես ասացինք, Կոլա թերակղզու հարավային մասը ծածկված է անտառներով, այդ պատճառով բնակիչների համար նշանակություն ունի նաև անտառի արդյունաբերությունը: Վերջին տարիներու, Մուրմանի լեռկաթուղին անցկացնելուց հետո, լեռանգուն կերպով սկսիլ են այս անտառները շահագործել.

ԿԱՐԵԼԻԱ

Կարելիան գտնվում է Կոլա թերակղզուց հարավ, վշտերե անտառների զոնայում, այդ պատճառով կլիման այստեղ լեռկարգործույան համար ավելի նպաստավոր է, քան թե Կոլա թերակղզու վրա: Միջին տարեկան բարեխառնությունը կազմում է մոտ +2°, մինչուրացին տեղումները հասնում են 300—500 միլիմետրի: Բալտիկ ծովը գոլֆշտրոմ տաք հոսանքը և լեռկրում ցրված բազմաթիվ լճերը մեղմացնում են կլիման: Բայց վորովնետք հողը լեռը չի, այդ պատճառով բնակիչների գլխավոր պարապմունքը վոչ թի լեռկարգործություններ, այլ անտառի արդյունաբերություններ:

Կարելիան անտառների աշխարհն է. նրա ամրող մակարդակի 84% -ը ծածկված է անտառներով, 9% -ը խոտանարգով և հաղիվ 7% -ը վարելահողերով:

Բնակիչները բաղկացած են գլխավորապես ուստիշից յեվ կարելներից, վորոնց խոշոր մասը զբաղվում է անտառի արդյունաբերությամբ: Նրանք կտրառում են ծառերը և կերանները յիրկաթուղով կամ կետերով փոխադրում են սղոցարաններ: Այստեղ պատրաստում են տախտակ և շինարարական այլ փայտեղենն, վորոնց կամ արտասահման են ուղարկում կամ փոխադրում ԽՍՀՄ-ի այն շրջանները, վորոնք փայտի կարիք ունեն: Կարելիայում կան և ախնախի գործարաններ, վորտեղ փայտից թուղթ են պատրաստում: Ներկայումս կառուցվում են թղթի նոր գործարաններ, վորոնցից ամենամեծը լինելու յի կոնգրոսոգայի շրջանում: Կոնգրոսոգայի գործարանն արդեն պատրաստ է և տարեկան կտա մեզ մոտ 250 հտզար տոն թուղթ:

Անտառները հարուստ են աղվամաղ գաղաններով ու թուննե-

ըրով, իսկ զետերը և լճերը՝ զանազան ձկներով։ Բնակչության մի վորոշ մասն եւ պարապում և վորսորդությամբ և ձկնորսությամբ։

Բայց անտառի արդյունաբերությունը, ինչպես և յերկրագործությունը, անասնապահությունը, վորսորդությունն ու ձկնորսությունը, չեն բավարարում բնակչության կարիքներին. այդպատճառով մեծ քանակությամբ աշխատավորներ ամեն տարի գնում են յերկաթուղու վրա ծառայելու. այստեղ նրանք նավեր են բարձում, բեռներ են դատարկում և ալլն։

Կարելիայի միջով հարավից գեղի հյուսիս անցնում է Մուրմանի յերկարուղին, վորը սկսվում է Լենինգրադից և վերջանում է Մուրմանսկ քաղաքում։ Այս նույն շրջանով ե անցնում Մարինան ջրային սիստեմը, վորով լերթենեկում են մեծ քանակությամբ ապրանքատար նավեր։ Այդ նավերը գեղի Լենինգրադ փոխադրում են փայտ, նավթ, աղ և այլն, իսկ Լենինգրադից ԽՍՀՄ-ի զանազան մասերի համար գործարանային ապրանքներ, որինակ, կրկնակողիկներ, հեռախոսի խողովակներ, մեքենաներ և ալլն։

ԼՃԵՐԻ ՑԵՐԿԻՄԸ

Հյուսիս-արևեմտյան շրջանի հարավային մասը, ինչպես ասացինք, շատ հարուստ է լճերով և գրա համար ել նա կոչվում է Լենտի լերկիր։


Հոգը բների չե, բայց կեմայական պայմանները լերկրագործության համար բավական նպաստավոր են։ Ատլանտյան ովկիանոսի մոտեկության պատճառով ձմեռն այստեղ խիստ չե, իսկ ամառը՝ շոգ։ Մթնոլորտավին տեղումները հասնում են սոտ 500 միլիմետրի։

Անտառներն ընդարձակ տարածություն են բռնում, մանավանդ նովորոդի և Զերեպովեցի շրջաններում։ Այդ անտառները բաղկացած են գլխավորապես յեղենիներից, վորոնց հետ խառն աճում են նաև սաղարթավոր ծառեր։ Անտառներում շատ կան աղվամազ զաղաններ և թռչուններ, իսկ լճերում՝ ձկներ։

Բնակիչները։—Բնակիչները բաղկացած են գլխավորապես ոռւսներից, կան քիչ թվով նաև կարեներ, եստեր և լատիչներ։ Բնակչությունն խիստ չե և անհավասար է տարածված։ Խիստ բնակչություն ունի Լենինգրադի շրջանը։

Աջախանիքը։—Լճերի յերկրում բնակչությունը զլխավորապես յերկրագործությամբ և զրագվում, ցանում են հաճար և վարսակ, բայց բերքը չի բավականանում։ Առանձին ուշադրություն են դարձնում վլուքի մշակության վրա։ Վուշը լավ թելիկներ ե տալիս և պատերազմից առաջ մեծ քանակությամբ արտահանվում եր։

Լենինգրադի շրջանում զարգացել և բանջարաբուծությունը և կաթնատնտեսությունը, վորք Լենինգրադի բնակչությանը մատակարարում և թարմ բանջարեղեն և կաթնեղեն:



Նկ. 60. Լենինգրադ. Սմոլնի և Լենինի արձանը.

Բնակչության ոժանդակ պարապմունքներից կարեոր և հիշել անտառային արդյունաբերությունը, Գյուղացիները կտրառում են ծառերը և գերանները գետերով փոխադրում, ածուխ են ալրում, ձյութ են ստանում, պատրաստում եր տակառներ, սահնակներ, նավակներ և այլն: Նրանք զբաղվում են նաև վորսորդությամբ և ձկնորսությամբ:

Շատերն ել գնում են քաղաք աշխատանքի, մանավանդ շատ մարդ և գրավում Լենինգրադը:


Խաբրիկա-գործարանային արդյունաբերությունը կենտրոնացած և գլխավորապես Լենինգրադում և նրա շրջակայիքում:

Լենինգրադը ներկայումս ամբողջ ԽՍՀՄ-ում յերկրորդ արդյունագործական կենարոնն և Մոսկվայից հետո, բայց վորպես առեստրական նավահանգիստ արտաքին առեստրի տեսակետից առաջինն է: Լենինգրադում և կենարոնացած մեր ծանր ինդուստրիալի աչքի ընկնող մասը՝ «Բոլենկա», «Կարմիր Պուտիլովեց» և այլ պետական խոշոր գործարաններով: «Կարմիր Պուտիլովեցը» 1924 թ. տվեց առաջին ոռւսական տրակատորները, վոր այնքան կարեոր են մեր գյուղատնտեսության համար: Լենինգրադում են գտնվում հսկալական նավաշինարաններ, վորտեղ պատրաստում են ուսումնական և առեստրական նավեր: Մեծ հոչակ ունի ճենապակու գործարանը, վորի համար որինակներ

հն պատրաստում հայտնի գեղարվեստագիտաներ, իսկ գործարանի ապրանքները ուղարկում են արտասահմանյան ցուցահանդեսները և մեծ հաջողություն են ունենում: Լինինգրադում գտնվում ե ուստինի ֆաբրիկան՝ «Կրասնի տրեսուլունիկը», վորը պատրաստում ե ամբողջ ԽՍՀՄ-ի համար կրկնակոչիկներ, ավտոմոբիլի շիներ, ուստինե խողովակներ, գնդակներ և այլն: Հայտնի լին նաև «Դրուժնալա» գորկա» ապակե գործարանը, ելեկտրամեքենաշինարարական տրեստը՝ «Ելեկտրիկ», «Ելեկտրոստրիլա» և այլ գործարաններով, ինչպես և ելեկտրատեխնիկական տրեստը, վորը իր «Սվենտլանա» գործարանում պատրաստում ե ելեկտրական լոպտերներ և այլն:

Կան և ուրիշ շատ գործարաններ ու ֆաբրիկաներ:

Լճերի լերկրի ուրիշ գործարաններից կարենոր և հիշել ապակու և լուցկու գործարանները, վորոնք գտնվում են Նովզորովի շրջանում:



Նկ. 61. Վոլխովի հիզբունիկուր. կայանը.

Հյուսիս-արևելքայան օրու տուրը և արդյունագործությունը համամիութանի նօանակուրյունը թենական նշանակություն ունեն:

Գտնվելով ԽՍՀՄ-ի հյուսիս-արևելքայան անկյունում, այս շրջանը Բալտիկ և Հյուսիսական ծովերի վրայով առևտրական մեծ հարաբերություն ունի Արևմտյան Յեվրոպայի արդյունագործական յերկրների, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի հետ. մյուս կողմից նա Վոլգա—Նեվա ջրագին սիստեմով կապվում է վոչ միայն Յեվրոպական մասի միջին շրջանների հետ,

ալլ և Ուրալի, Կասպից ծովի, Միջին ասիայի, Պարսկաստանի և Կովկասի արևելյան ափերի հետ (Բագու, Մախաչ-Կալա):

Երջանի արդյունազործության նշանակության մասին արգեն խոսեցինք, հիշենք միայն, վոր Լենինգրադում կան ալնպիսի գործարաններ, վորոնց միակն են ամբողջ ԽՍՀՄ-ում:

Նիեկտրինիկացիա. — Հյուսիսարեմտյան շրջանում ներկայումս աշխատում են հետեւալ ելեկտրակայանները՝

1. «Կրասնի ոկտյաբր», գտնվում է Լենինգրադի մոտ, աշխատում ե տորֆով:

2. «Վոլխովստրոյ», գտնվում է Լենինգրադից մոտ 110 կիլոմետր հեռու, Վոլխովի գետի վրա, աշխատում ե սպիտակ ածուխով:

Կարելիայում արգեն վերջացել և «Կոնդոստրոյ» հիդրոկայանը, կոնդոպոգայի մոտ, Պետրոզավոդսկից 55 կիլոմետր հոռավորության վրա:

Կառուցվում ե «Սվիբուլոյ», Սվիբ գետի վրա:

ԼԵՆԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Լենինգրադ. — Նախկին մայրաքաղաք. Մոսկվայից հետո բնակիչների թվով ամենամեծն է Առևտուր արևմտյան Յեվրոպայի հետ Նրա վրայով արտահանվում ե փայտեղին, վուշ, հաց, ներմուծվում են՝ մեքենաներ, քարածուխ, բամբակ, ջուտ, կառւչուկ: Յերկաթուղարին կարեվոր հանգույց է: Արդյունագործական խոշոր կենտրոն: Միութենական նշանակություն ունիցող կուլտուրական կենտրոն:

Բալխաշ լիճը), Զերավուսն (մի ժամանակ թափյում եր Ամուշ-Դարիայի մեջ), Մուրդար և ալին,

Դհոտերը գուրս գալով հարթությունները վոռոգման ցանցով ցրվում են և իրենց ջրերով վոռողում են դաշտերն ու ալղիները, թողնելով հրուսիսում հսկայական տարածություններ առանց ջրի:

Միջին Ասիայի գլխավոր հողը ավազինեն են. Մեծ տարածություններ բռնված են գորշ հողերով, վորոնք գտնվում են զլխավորապես զետերի միջև, թեքվածքներում, նախալեռներում, փոսերում, վորտեղ ջրեր են հոսում. Այդ գորշ հողերի վերին շերտը մոխրագույն եւ հաղիվ շտկոս բուսահող և պարունակում: Մեծ տեղ են բռնում նաև կալվանողերն ու աղուտները. Լեռնալին շրջաններում հողերը դասվորված են ուղղաձիգ գոտիներով ստորին գոտիները ծածկված են շագանակագույն հողերով, իսկ ավելի բարձր գոտիները սևահողով.

Բուսական լեկ կենդանական աշխարհ. Միջին Ասիայի բուսականությունն ազգաց եւ. Հսկայական ավազոտ տարածություններ համարյա զուրկ են բուսերից, յեղածներն ել հարմարվել են ավազների չոր կլիմային, ալտեր աճում են այնպիսի բուսեր, վորոնք քիչ զուր են զոլորշիցնում, այդ պատճառով Միջին Ասիայի ավազների բուսերն ունեն շատ նեղ տերևներ, կամ տերեկներից զուրկ են վերջին դեպքում տերեկներին փոխարինում են կանոչ ճյուղերը. Անապատների միակ ծառը սահսալի եւ. վորն ունի կոշտաշատ ցողուն, ծուռ ու մուռ կանաչ ճյուղեր, վորոնց վրա նստած են սպիտակավուն թեփանման տերեկներ, և շատ լերկար արմատներ, վորոնց միջոցով գետնի խոր տեղերից նա կարողանում է խոնավություն ծձել Տեղ-տեղ սաքսառուլը տարածվելով կազմում է անտառներ, սակայն այդ անտառները ստվեր բոլորովին չեն տալիս (ինչև): Կենդանի եւակը հնարավորություն չի ունենում թագնվելու արեի կրկիչ ճառագալթներից, այդ և պատճառը, վոր սաքսառուլի անտառում դուք չեք լսի թաշունների լերգն ու ծղրիդների ձայնը, կամ նույնիսկ տերեկների սոսափյունը, միայն ուժեղ քամիների ժամանակ լսկում ե ճյուղերի ճռնողոցը:

Սաքսառուն աճում է ամրացած ավազուտներում փխրուն ավազներում աճող առաջին բույսերից մեկը ավազալին ակացիան ե, վորը մեծ պայքար և մղում այդ շարժվող ավազների դեմ. ավազները ծեծում, ալլանդակում են նրան, քամին շատ անգամ նրա տակի ավազը քշում, տանում ե և մերկացներով արմատը, զրկում ե հենարանից: Նա ընկնում ե, բայց ծառը մնալով թաղված ավազների մեջ շարունակում է պալքարել կյանքի համար, նա սկսում ե նոր արմատներ արձակել և նորից աճել:

Կավալին տափաստաններում գարնանը, սովորաբար վաղ ծաղկում են զանազան գեղեցիկ ծաղիկներ, ինչպես որինակ՝ կակաչը, շուշանը և այլն։ Այդ բուսները կարծես շտապում են ոգտագործելու հողում գտնվող խոնավությունը, արագ թափում են ծաղիկները, պտուղ տալիս և ամառային շողը վրա հասնելուն պես մեւնում են.

Գետերի հովիտներում պատահում են իսկական անտառներ, վորոնք բաղկացած են ուռիներից և կաղամախներից, ինչպես և լեզերնությունների.

Լեռներում, 1.000 մետրից բարձր աճում են ընկուղենի, թխկի, խնձորենի և այլ սաղարթավոր ծառեր, ավելի բարձր պատահում են փշատերեկ անտառներ, վորոնցից բարձր փովում են ալպյան մարդադետինները։

Կլիմայական բազմազան պայմանների պատճառով Միջին Ասիայի կենդանական աօխարհի նույնպես բազմազան և, հյուսիսային տեսակների հետ ալտուղ պատահում են հնդկական և նույնիսկ աֆրիկական տեսակներ։ Անապատի կենդանիներն ունեն դեղնավուն դորշ գորշ վորը նման և շրջապատող ավաղի գոռյնին։ Այդ տեղերի ամենաբնորոշ կենդանիներն են մանր կրծողները՝ ճագարամուկը, պոնտական մուկը և այլն։

Միջին Ասիայի անապատները սողունների թագավորությունն են. ունենալով խիտ զրահներ, վորոնք պաշտպանում են խոնավությունը կորցնելուց, ալդ կենդանիները աղատ կերպով ման են գալիս 700 ունեցող ավագներում և նրանցից շատերը կարողանում են ապրել նույնիսկ առանց ջրի։ Պատահում են մեծ քանակությամբ մօղիսներ, քունակություն ունենալու հետ վոր բունակոր ուներ և կրիաներ։

Խոշոր կաթնասուններից այստեղ գտնվում են բարայծեր և վայրենի եեւր, անտառներում, գետափերին պատահում են վարազներ, իսկ յեղեգնուաններում նաև վագր։

Լեռներում ապրում են խոշոր, տանվաճեկ լիղջուրներով լեռնալին խոյեր, լեռնալծեր, արջեր և այլն։ Պամիրի լեռներում բնակիչներին անփոխարինելի ծառոյթյունն և անում լեռնային յեզր (յակը), վորին հծնում են և բարձում։

Անվողնաշար կենդանիներից աչքի յեն ընկնում կարինները և թունավոր սարդերը։

Բնակչությունն Ասիայի բնակիչների թիվը ներկայումս հասնում ե մոտ 8 միլիոնի, վորի կեսից ավելին ապրում ե Ռւզբեկստանում։

Բնակչության գլխավոր զանդվածը կազմված ե թուրքական ժո-

զովուրդներից բռւրգմեններից, կազմակերպություն լին ուղբեկներից, կիրզիկներից և իրանական ծագում ունեցող տափկներից,

Թուրքմեննստանում և կիսաքոչվորավին կլանք են վարում:

Ուղբեկների մեծ մասն ապրում են Ռուսական կազմակաց են, նրանցից շատերը ջրանցքներ անցկացնելու մեծ հմտություն ունեն:

Կազմակները (կաղակ-կիրզիկները) ապրում են Միջին Ասիայի հյուսիսարեկան մասում, իսկ կիրզիկները՝ կիրզիկների հՍԽՀ մեջ:

Միջին Ասիայի բնիկ ժողովուրդները սաջիկներն են, վորոնք ապրում ելին Ֆերգանի արգավանդ հովատում և պարապում եյին լեռկրագործությամբ։ Հետագալում Ասիայի խորքից արշավեցին գեպի Միջին Ասիա Թուրքական քոչվոր ժողովուրդները (Թուրքմեններ, կիրզիկներ), վորոնք տաջիկներին մղեցին գեպի ալժման Տաջիկստանը։

Բնական պայմանների բազմազանության պատճառով բնակչությունը հավասարապես չի տարածված անպատճերն ու լեռնային ընդարձակ տարածությունները անմարդաբնակ են, իսկ ոպիսներում բնակչության խտությունը հասնում է 100 և նույն իսկ 200 մարդու մի քառ. կիլոմետրի

Նկ. 84. Ուղբեկ.


Վրա. Միջին ասիական հանրապետությունների մեջ Ուղբեկստանն ունի ամենախիտ բնակչությունը, հենց այն պատճառով, վոր ուղիսներն ալստեղ բավական մեծ տեղ են բռնում։

Զբաղմունելի, Միջին Ասիայի տափաստաններում և լեռներում բնակչության գլխավոր զբաղմունքը անասնապահությանն ե, իսկ գետափերին և ընդհանրապես այնտեղ, վորտեղ հնարավոր և ջուր անց կացնել, բնակիչները պարապում են յերկրագործությամբ և սրա հետ կապված այգեգործությամբ և բանջարաբուծությամբ։

Ուղիսների այն զոնան, վոր ճգվում և լեռների ստորոտներում



և վոռոգվում ե լեռնային գետակներով, յերկրագործության համար ամենահարժար շրջանն եւ:



Նկ. 85. Թուբքըմենների քոչատեղը Կարս-Կում անապատում.

Զոր և տաք կլիմայի պատճառով Միջին Ասիայում լավ բերք կարելի յե ստանալ միայն արհեստական վոռոգման դեպքում, այդ պատճառով ալստեղ տասնյակ կիլոմետր տարածությունների վրա անց են կացրած արհեստական ջրանցքներ, վորոնցով մոտակա գետերի ջրերը տանում են դաշտերը և վոռոգում:


Արհեստական կերպով վոռոգվող հողերը Միջին Ասիայի ընակչության ապրուստի հիմքն են կազմում:

Շնորհիվ տաք կլիմայի այդ վոռոգվող հողերում հնարավոր և մշակել այնպիսի թանգարժեք տեխնիկական բույսեր, ինչպիսին են՝ բամբակը, խաղողը, ճակնդեղը և այլն:

Մանավանդ կարենոր նշանակություն ունի բամբակի մշակուրյունը, զորը տալիս ե գյուղատնտեսության պրոդուկցիայի ամբողջ արժեքի $\frac{1}{3}$ -ը: Բամբակի մշակության տեղերն ունեն խիտ բնակչություն և մեծ քաղաքներ բամբակի մշակության տեղերով են անցնում յերկաթուղիները:

Միջին Ասիայի բամբակը փոխադրվում է կենտրոնական արդյունագործական շրջանը: (Իվանովո-Վոզնեսենսկ, Մոսկվա և այլն), զորտեղ ալդ բամբակից պատրաստում են գործվածքներ ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Բամբակի մշակությունը կենտրոնացած ե գլխավորապես Ուզբեկստանում:

Արտահանած բամբակի փոխարեն Միջին Ասիան ստանում է հաց և ֆարբիկատներ: Բացի բամբակից Միջին Ասիայում տարածված և բննի և խոռաբույսերի մշակությունը:



Նկ. 86. Կիրգիզների համագումարը Թրունդե քաղաքի մոտ.

Հացահատիկները (ցորեն, գարի և կորեկ), մշակում են զլխավուապիս այն վայրերում, վորոնք վոռոգվում են մթնոլորտալին խոնավությամբ:

Ալիքիներում տարածված են դեղձ, ծիրանը, նուեր, բրենին, և խաղողը, բանջարանոցներում՝ սեխիր և ձմեռուկը: Խաղողն ուղարկվուա և ԽՍՀՄ-ի Յերկրոպական մասը, թարմ վիճակում կամ չորացրած (չամիչ) մի փոքր մասն ել գործ են ածում զինի պատրաստելու համար:

Անասնապահուրլամբ զլխավորապիս զբաղվում են քոչվորները—կերգիզները, և թյուրքմենները: Անասունների մեջ առաջին տեղը վոչխարն և բռնում, տարածված են դմակավոր և կարակուլյան վոչխարները: Կարակուլյան վոչխարի մորթին մեծ հռչակ ունի վոչմիայն ԽՍՀՄ-ում, այլև Յերկրոպայում: Խոշոր անասուններից կարեոր գեր և կատարում ձին, վորը ծառայում և տափաստաններում տեղափոխվելու համար և տառը տեղացիներին տալիս ե ընտիր խմիչք-կումիս:

Ցարական կառավարությունը թուլ չեր տալիս, վոր Միջին Ասիայի տեղական արդյունագործությունը զարգանա: Բուրժուաժիայի ամար ձեռնտու եր, վոր Միջին Ասիայի հում նյութը փոխադրվե նուսաստանի միջին շրջանները, իսկ զրա փոխարեն ոռւսաստանի որթարանային ապրանքները փոխադրվեն Միջին Ասիա: Այսպիսով արական կառավարությունը Միջին Ասիայի վրա նայում եր վորպիս ի գաղութի վրա, վորին կարելի յեր շահագործել իր բուրժուազիայի գտին:

Շնորհիվ խորհրդալին իշխանության ձեռք առած միջոցների Միշին Ասիայի արդյունագործությունը նոր սկսում ե առաջ զար այստեղ այժմ գտնվում են բամբակաղտիչ և ձեթի գործարաններ, 1926 թվի վերջին ֆերգանում սկսել են կառուցել Ուզբեկստանի առաջին բամբակի ֆաբրիկան, վորն ունենալու յի 40.000 իլիկ:

Հում նյութերի մշակումը կատարվում ե բացառապես տնայնագործական յեղանակով: Առանձին արտադրություններից աչքի յի ընկումը բրդի մշակումը, վորից քոչվորները պատրաստում են գորգեր, թաղիքներ (կոմշու) և այլն: Գորգերով առանձնապես հայտնի յի թուրքմենստանը (թուրքմենական գորգեր):

Յերկրագործական շրջաններում, գլխավորապես Ուզբեկստանում չափազանց տարածված ե մետաքսե գործվածքների տնայնագործական արտադրությունը:

Թուրքեստանի առեվտուրն արտահայտվում ե նրանով, վոր պատաժնատեսական մթերքները փոխանակում են ֆաբրիկա-գործարանացին արդյունաբերության առարկաների հետ:

Արտահանության զլիավոր առաքեկաները հետեւյալն են՝ բամբակ, բուրդ, չորացրած մրգեր, մետաքս և այլն: Ներմուծում են բամբակի գործվածքներ, լերկաթե առարկաներ, շաքար, փայտ, նավթ և այլն:

Հաղորդակցուրյան ձանապահները.

Միջին Ասիայի ապրանքների տեղափոխությունը կատարվում է գլխավորապես Անդրկասպայան և Ուենցուրգ-Ֆակենտի լերկաթուղթներով:

Անդրկասպայան լերկաթուղթին սկսվում ե Կրասնովոլսկից (Կասպից ծովի ափին) և Աօխաբադ, Մերվ, Սամարղանդ, Կոկանդ, Ֆերգանա բաղաբերի վրայով հասնում ե մինչեւ Զալալ-Աբադ: Այդ գծից մի ճյուղ բաժանվում ե գեպի Կոււկա, մի գիծ՝ գեպի Տաւկենս, իսկ մի լերրորդ գիծ ել գեպի Տաջիկստան:

Որենքուրդ—Տաջիկնորի գիծը Միջին Ասիան միացնում է ԽՍՀՄ-ի Յերկրոպական մասի հետ: Նրանից մի ճյուղ անցնում ե գեպի Ֆրունզե, վորը նոր կառուցված Թուրքիստան-Միջիրյան լերկաթուղով միանում է Միջիրի հացած շրջանի հետ: Այդ լերկաթուղով Միջին Ասիան հասարակորություն ունի Միջիրից ստանալ հաց, իսկ իր ջրովի տեղերը կհատկացնի բամբակագործության և այդպիսով զարկ կտրվի բամբակի մշակության զարգացմանը:

Ապրանքների փոխադրության գործում ներսը գեռևս մեծ դեր են կատարում ուղտի քարավանները, ձիերը և լերկանիվ սալլերը:

Հնգամյա պլանը. Միջին Ասիալի ամենամեծ հարստությունն ինչպես ասացինք, բամբակն ե, վորը ԽՍՀՄ-ի տեքստիլ արդյունագործության հիմքն ե կազմում: ԽՍՀՄ-ում գործածվող բամբակի $\frac{1}{10}$ -ը տալիս ե Միջին Ասիան: Բամբակի ցանքսերի ընդարձակումը հնարավորություն կտա բավարարել մեր գործարանների կարիքներին և փական բամբակով և ազատվել Ամերիկայի կամ Յեգիպտոսի բամբակից:

Հաշվել են, վոր Միջին Ասիայում բամբակի մշակության համար հարմար հողերի մակարդակը հասնում ե մոտ 87 միլիոն հեկտարի, վորից կարելի է ջրել մոտ 10 միլիոն հեկտար:

Հացահատիկների ցանքսերն ընդարձակվելու յեն մթնոլորտալին խոնավությամբ վոռոգվող տեղերում, իսկ արհեստական կերպով վոռոգվող տեղերում, ընդհակառակը, այդ ցանքսերը պիտք ե կրճատվեն և ազատված հողերը հատկացնեն բամբակի մշակության:

Արդյունագործության զարգացման համար հատկացրված ե 467 միլիոն ոռությի, վորի մեծ մասը ծախսվելու յե տեղական հում նյութերի վերամշակության համար—կառուցվելու յեն բամբակազտիչ, ձիթհան, պահուծոների, կաշվի և ալլ գործարանները ֆերգանում և Աշխարհագում կառուցվում են բամբակեղենի Փարբիկաներ, վորոնցից մեն մեկն ունենալու յե 40.000 իլիկ:

Բացի գլուղատնտեսական հում նյութից Միջին Ասիան ունի նաև հանքալին հում նյութեր, որինակ, նավթ (Ուզբեկստանում, Ֆերգանա), քարածուխ (Ուզբեկստան), զլառուքերյան աղ, ծծումբ, լերկաթահանք և այլն, վորոնցից նավթը և բարածուխը արդեն շահագործվում են: Մրագրված ե շահագործել նաև ծծումբը, պղինձը և կտապարը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Միջին Ասիալի քաղաքները մեծ մասամբ հին ծագում ունեն. նրանք առաջ են յեկել ուղիսում, վորոնք աչքի յեն ընկնում իրենց խիտ բնակչությամբ և ապրանքալին բնուլթ ունեցող գլուղատնտեսությամբ: Ավելի խոշոր քաղաքները գտնվում են հին առետրական ճանապարհների վրա:

Ուզբեկստանում հայտնի յեն հետեւյալ քաղաքները:

Տաւկենս, գտնվում ե ուղիսում: Միջին Ասիալի հին քաղաքներից մեկն ե: Ուսւսաստանից բերված ապրանքներն այստեղ են բաշխ-

վում. արդյունագործական և բանվորական կենտրոն, Բամբակագտիչ, պահածոների և ծխախոտի գործարաններ, սպանդանոցներ, կաշվի գործարաններ, մետաղագործություն, ելեկտրոկալան:

Սամարգանդ—Ուզբեկստանի զիխավոր քաղաքն ե—Զինաստանը, Պարկաստանը և Հնդկաստանը միացնող պատմական ճանապարհների հանգույցում. բամբակագտիչ գործարաններ:

Անդիման, Նամանգան և Կոկանդ բամբակագործության խոշոր կենտրոններ:

Թուխարա, գտնվում է խիտ բնակված ոազիսում, վորն առաջացնել և Զարեվշանից անցկացրած ջրանցքների շնորհիվ. բուխարական խանության նախկին մայրաքաղաք:

Խիվա, գտնվում է Ամու-դարիայից անցկացրած ջրանցքի վրա. Խիվայի խանության նախկին մայրաքաղաք:

Թուրքմենստանում հայտնի յեն.

Աշխարադ, Թուրքմենստանի զիխավոր քաղաքը, գտնվում է ոազիսում. բամբակագտիչ գործարաններ. կառուցվում է բամբակի թելի մանարան և գործվածքների ֆաբրիկա:

Մերվ, գտնվում է ոազիսում, վորը վոռոգվում և Մուրղար գետով. այստեղից անցնում է մի լերկաթուղի դեպի ավշանական սահմանը (Կուչկա):

Կրասնովդուկի, նավահանգիստ Կասպից ծովի ափին:


Լենինսկի, (նախկին Զարջույ):

Կիրգիզստանում հայտնի յե Ֆրունզե քաղաքը (նախկին Պիշապեկ). գտնվում է արգավանդ հովտում, վոռոգվում է լեռներից սկավող գետակներով:

VI. ՏԱԶԻԿԱՏԱՆԻ ՍՈՅ. ԽՈՐՃ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Տաջիկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետուրյունը (Տաջիկստանը) մինչև 1929 թ. Ուզբեկստանի ինքնավար մասն եր կազմում, բայց այդ թվականին նա անջատվեց Ուզբեկստանից և միութենական հանրապետության իրավունքով մտավ Խորհրդային Միության մեջ. Այսպիսով նա յոթերորդ միութենական հանրապետությունն եւ:

Տաջիկստանի մեջ մտնում և Լեռնային Թաղախւանի ինքնավար շրջանը, վորի գլխավոր քաղաքն և Խորոգ:



Նկ. 87. Լեռնային տաջիկների ամառային վրանները.

Բնուրյաւելը: — Տաջիկստանի հանրապետությունը մի լեռնաշխարհ և, վորը արևմուտքից դեպի արևելք հետդիետե բարձրանում եւ Նրա հյուսիս-արևմտյան և արևմտյան մասերում տարածվում են հարթ տարածություններ, վորոնք ծովի մակերեսույթից այնքան ել բարձր չեն և շատ մեծ տեղ չեն բռնում: Այստեղից դեպի արևելք տարածվում են նախալեռները և ապա լեռները, վորոնք Պամիրի լեռնաշխարհի մասն են՝ կազմում: Այսպիսով Տաջիկստանի մակերեսուլիթի մեծ մասը կազմուված և լեռնաշղթաներով, վորից շատերը ծածկված են հավերժական ձյունով: Ալդ լևոնաշղթաներ ձգվում են արևմուտքից դեպի արևելք իրար զուգահեռ և գոյացնում են բազմաթիվ խոր հովիտներ, վորոնք դեպի արևելք հետզհետե նեղանում են: Պամիրի բարձունքներում ալդ հովիտները նեղանալով դառնում են նեղ կիրճեր, վորոնց միջով հոսում են կատաղի լեռնային գետակներ: Լեռների բարձրանալու հետ միասին դեպի արևելք բարձրանում են և հովիտները, այնպես, վոր Պամիր լեռնաշխարհում ամենացածր հովիտը ծովի մակերեսույթից բարձը և ավելի քան 3.000 մետր:

Տաջիկստանի կլիման բազմազան է: Արևմտյան հարթ մասի կը-լիման տաք և չոր. մթնոլորտային տեղումներ այնքան քիչ են, վոր յերկրագործությամբ առանց արհեստական վորոգման անհնար և զբաղ-

վել: Նախալեռներում կլիման մեղմ և քիչ թե շատ խոնավ, իսկ առևելքում (Պամիրում) այնքան խիստ և, վոր հիշեցնում և նոր Յերկրի դաժան կլիման:



Նկ. 88. Արևմտյան Պամիրի լեռնային տաջիկներ.

Բնակիչները.—Տաջիկստանում ապրում ե մոտ 823 հազար մարդ՝ վորեց 784 հազարն ապրում ե գյուղերում, իսկ 38 հազարը՝ քաղաքներում: Բնակիչների մոտ 75 տոկոսը տաջիկներ են, 20 տոկոսը՝ ուղրեկներ, իսկ մնացածը կիրդիզներ, կազակներ, թուրքմեններ, հրեաներ, ոռուներ և այլն:

Տաջիկստանը նոսր բնակչություն ունեցող յերկրներից մեկն է: Միջին հաշվով մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում ե 5 մարդ:

Զբաղվուները.—Տաջիկստանի արևմտյան հարթ մասերում, ինչպես և տաք հովիտներում բնակիչները պարապում են գլխավորապես յերկրագործությամբ: Մշակում են հացանատիկներ, բամբակ և խաղող: Տաջիկը հմուտ յերկրագործ ե. նա իր վարելահողը լավ և մշակում, բայց հարմար վարելահողեր քիչ են: Զրովի վարելահողերը հազիվ 200 հազար հեկտար են: Արևմտյան չոր մասերում ներկայումս անց են կացված նոր ջրանցքներ, վորոնք կարենու նշանակություն կունենան ժողովրդական տնտեսության համար: Ամու-Դարիան և իր վտակները ըստական ջրառատ են (մանավանդ ամառը, յերբ սարերի ձյունը հալվում ե): Այդ գետերից կարելի յե անցկացնել ջրանցքներ և վոռոգել ընդարձակ տարածություններ: Լեռնալին հովիտներում յերկրագործու-

Ծյունը այնքան ել մեծ արդյունք չի տալիս, վորովհետեւ բրինձը և բամբակն ալստեղ չեն աճում: Այստեղ ավելի կարենը նշանակություն ունի անասնապահությունը: Պահում են կովեր, վոչխարներ, յեղներ (հեծնելու և բարձելու համար), եղեր և ջորիներ:

Արդյունագործությունը թուլլեւ: Կան միքանի բամբակազտիչ գործարաններ և ջրաղացներ: Դեռևս մեծ դեր ե կատարում տնայնագործությունը:

Խորհրդակին իշխանությունը միջոցներ և ձեռք առնում լիրկրի գնական հարստություններն ուսումնասիրելու, ինչպես և արդյունագործությունը զարգացնելու համար:

Տիջիկստանի գլխավոր քաղաքն և Ստալինաբադ (Դյուշամբե):

Ս Ի Բ Ի Բ

Աօխառանի բարեկի հետ

1. Ցույց տալ Սիբիրի սահմանները—Հյուսիսային բենեռային ծովը, Խաղաղ ովկիանոսը, Յավոնիան (Կորեա), Զինաստանը (Մանջուրիան), Մոնղոլիան, Տաննու-Ցուվայի հանրապետությունը, Կազախստանը և Ուրալյան լեռները:

Գտեք! 1) Որ, Ենիսեյ, Լենա և Ամուր գետերը, Սիբիրական գաշտավայրը, Ուրալյան, Ալտայան, Սայանյան, Յարլունովյան, Ստանովյան և Սիխոստա-Ալին լեռները, Բայկալ լիջը, Յա-Մալ, Տայմիր, Չուկոտյան, Կամչատկա թերակղզիները՝ Հյուսիսային Ֆերկիր, Նոր-Սիբիր, Սախալին կղզիները:

2. Յակուտական ԽՍՀ, Բուրյատ-Մոնղոլ. ԽՍՀ, Ոյրատյան Խնք. շբջան:

3. Զելյարինսկ, Ռմակ, Նովո-Սիբիրսկ, Տոմսկ, Կուլնեցկ, Իրկուտսկ, Վերխնե-Ռուդնակ, Խարաբովսկ, Վակուտասկ, Վերխոյանսկ քաղաքները:

Սիբիրը բռնում և Ասիայի ամբողջ հյուսիսային մասը, վորը տարծվում է Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ ովկիանոսը և Հյուսիսային բենեռային ծովից մինչև Զինաստանի և Մոնղոլիայի սահմանները: Այս պայմաններում Սիբիրը բռնում է մոտ 12 մելիոն քառակուսի կիլոմետր տարածություն, այսինքն հավասար ե ամբողջ Ասիայի համարլա ^{1/4}-ին:

Սիբիրի աշխարհագրական դիրքը ժողովրդական տնտեսության զարգացման համար շատ աննպաստ ե: Հյուսիսից նրա ափերը վոլոզում ե Բենեռային ծովը, վորն ամբողջ տարին ծածկված և սառուցներով և նավագնացության համար անհարմար ե: Արևելքում ձգվում և Խաղաղ ովկիանոսը, վորի ծովերը բացի Յավոնականից նավագնացության համար նույնպես անհարմար են: Հարավում գտնվում են սի-

շարք բարձր լեռնաշղթաներ ու անապատներ, վորոնք դեռևս լերկաթուղիներով կտրտված չեն. դրանցով Սիբիրը բաժանվում է հարավային Ասիբալցի, Արևմուտքում Սիբիրը Յեվրոպակալից բաժանվում է Ռւրալան լեռներով. Այս բոլորին ավելացնենք և այն, վոր Սիբիրի մակարդակի մոտավորապես $\frac{1}{3}$ -ը գտնվում է ցուրտ գոտում:

Սիբիրի հսկայական տարածության վրա ապրում ե ընդամենը 12 միլիոն մարդ, մինչդեռ Անգլիակի միայն Լոնդոն քաղաքում ապրում ե մոտ 8 միլիոն մարդ. Միջին հաշվով լուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածության վրա ապրում ե մեկ մարդ:

Միբիրն ըստ բնության բաժանվում է լերկու մասի Արևիմյան լեռների վեցից:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐ

Արևմտյան Սիբիրը տարածվում է Ուրալան լեռներից մինչև Յենիսեյ գետը և Բևեռալից ծովից մինչև Կաղակստանը. Նրա մակերեսույթի մեծ մասը գաշտավայր ե և հայտնի յե Ոբի դաշտավայր անունով:

Արևմտյան Սիբիրի հարավ-արևելյան անկյունում բարձրանում ե Ալտայը, վոր բաղկացած ե միքանի լեռնաշղթաներից. Այդ լեռնաշղթաների ամենաբարձր գագաթը Բելուխան ե, վորի բարձրությունը հասնում ե $4\frac{1}{2}$ կիլոմետրի. Ալտայի գագաթներից շատերը ծածկված են հավերժական ձյունով և սառցադաշտերով:

Կլիման զամաքային ե և ավելի խիստ ե, քան թե ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի արևելյան շրջանների կլիման: Ամառը տաք ե, բայց կարճատե, իսկ ձմեռն ընդհակառակը շատ ցուրտ ե, լերկալրատն և հաճախ սոսկալի սառնամանիքներ են տեղի ունենում: Այսպիս որինակ, Տոմսկի մոտ հուլիսի միջին բարեխառնությունը հասնում ե $+19^{\circ}$, իսկ հունվարի միջին բարեխառնությունը՝ -20° -ի:

Մթնոլորտային տեղումները Արևմտյան Սիբիրի մեծ սասում հասնում են 300-400 միլիմետրի, այսինքն պակաս, քան ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում, և գլխավորապես ամառն են թափվում: Արևմտյան Սիբիրը վոռոգվում ե բազմաթիվ գետերով, վորոնք բացառապես Ոբի ավազանին են պատկանում: Նրանք աչքի լին ընկնում իրենց լերկարությամբ և ջրառատությամբ:

Ոբը (մոտ 4,000 կմ.) կազմվում է լերկու գետերի միացումից-

դրանք են վճիտ Բիւան, վոր սկիզբն և առնում մի փոքրիկ լճից և պղասր Կատունը, վորը սկսվում և Տելուխայի սարցադաշտից: Բիյան և և Կատունը շենալին գետեր են, հոսում են արագ, կատաղի և ունեն բազմաթիվ սահանքներ, ու ջրվեժներ: Այդ գետերի միացումից հետո Որը դուրս և գալիս գաշտավայր, վորտեղ նրա հոսանքը դանդաղում է: Որի վրայով յերթենեկում են նավեր, բայց նավագնացություն շատ ել զարդացած չե, վորովհետեւ Որի գետաբերանում գտնվում են ծանծաղուտներ, վորոնք խանգարում են ծովագին նավերին գետը մտնելու: բացի այդ՝ Որը տարվա մեծ մասը ծածկված է լինում սառուցով, վորի հաստությունը ստորին մասերում հասնում է մոտ 3 մետրի:

Որն ընդունում է բազմաթիվ վտակներ, վորոնցից ամենամեծը Խրիչև և Խրտիշն սկսվում է Զինաստանում. անցնելով Զալսան լճի միջով նա պատում է Ալտայը և գոյացնում մի խոր կիրճ, վորից հետո դուրս և գալիս գաշտավայր:

Իրտիշն իր հերթին ընդունում է միքանի վտակներ, վորոնցից նշանավոր են Խիմը և Տոբոլ:

Աջ կողմից Որի մեջ թափվում են Տոմը, Չուլիմը և Կետը:

Արևմտյան Սիբիրի բուսականությունը բաժանվում է հետեւյալ զոնաների՝ տունդրային, անտառային և տափաստանային:

Անտառային և տափաստանային զոնաների միջև ձգվում է անտառա-տափաստանը:

Տափաստանի և անտառատափաստանի հողը ունահող և և արգավանդ, այդ պատճառով Արևմտյան Սիբիրի բնակչության մեծ մասն այստեղ և կենտրոնացած:

Բնակչության խոշոր մասը (մոտ 90% -ը) ուստի սլավոնական: — Արևմտյան Սիբիրի բնակչությունը պատկանում է հետեւյալ լեռքեք խմբերին՝ Ֆիննական, բուրքական և սլավոնական:

Բնակչության խոշոր մասը (մոտ 90% -ը) ուստի սլավոն (սլավոն) են, վորոնք գլխավորապես ապրում են տափաստաններում և պարտպում են յերկրագործությամբ և անասնապահությամբ:

Ֆիննական խմբին պատկանում են սույակներ, սամոյեդներ և վոգուններ, վորոնք ապրում են Արևմտյան Սիբիրի հուսիսային շրջանում:

Թուրքական ժողովուրդները՝ բարաներ, կազակներ և ոյրաները ապրում են հարավում, Կազակստանի սահմանամերձ շրջանում:

Տունդրական ժողովուրդների զոնաներում բնակչությունը շատ նոսր է, մոտավորապես 0,2 մարդ, մինչդեռ տափաստանների և անտառա-

տափաստանների գոնաներում բնակչության խտությունը հասնում և մոտավորապես 9 մարդու մեկ կիլոմետրի վրա:

Արևմտյան Սիրիի բնակչության մոտավորապես $95^{\circ}/\text{o}$ -ն ապրում և տափաստաններում և անտառա-տափաստաններում:

Զբաղյութեր.—Տափաստանների և անտառա-տափաստանների բը-նակչությունը պարապում և գլխավորապես յերկրագործուրյամբ և անասնապահուրյամբ:

Ցանում են ցորեն, հաճար և վարսակ, հացի ավելցուկը փոխադրվում և Արևելյան Սիրիի, ինչպես և Յերրողական մասը:

Անասուններից պահում են խոշոր լեզվուրավոր անասուններ, վոչխար և ձիեր: Անասնապահության զարգացմանը մեծ զարկ ավեց Սիրիի լերկաթուղին, վորով Արևմտյան Սիրիին սկսեց ԽՍՀՄ-ի Յերրողական մասին մատակարարել միս և մանավանդ յուղ: Յուղի արտադրությունը մեծ չափերի հասավ շնորհիվ միշ շարք կոռպերատիվ յուղագործարանների, վորոնցով հայտի լեզվագանձր (լերկաթուղու վրա):

Ոնասնապահությամբ պարապում են նաև ալտայցինները, վորոնք ունեն վոչխարների մեծ հոտեր և ձիերի ջոկեր:

Հյուսիսում, տունդրաներում սամոեդներն ու սոտյակները պահում են յեղջերուներ, վորոնք անփոխարինելի ծառայություն են անում իրենց տերերին:

Տունդրաներում և տալգաներում ոստյակները և վոգուները վորուսում են մուշտակատու կենդանիներ—աղվես, սկյուռ, սամոյիլ և այլն. բայց տանիակ տարիների ընթացքում անխնան կերպով կոտորելով այդ կենդանիներին, այժմ նրանց վորսը բավական ընկել և, և ներկայումս վորսում են գլխավորապես սկյուռ:

Արևմտյան Սիրիի լեռնային մասը հարուստ և հանքերով, վորոնց մեջ աչքի լեզնինում բարածությունը (Կուգնեցկ քաղաքի մոտ),

Կուգնեցկի քարածխալին ավագանը—Կուգբասսը—գերազանցում և Դոնբասսին վոչ միայն քարածխի պաշարով, այլ և վորակով:

Կուգբասսի քարածուխն արդեն մշակվում եւ Վորովինետե Ռուբալը լավ վորակի քարածուխն չունի, ուստի նա սկսել (1924 թվականից) ստանալ Կուգբասսի քարածուխը: Ռուբալում կառուցվող ամերիկական տիպի հսկայական գործարանները Կուգբասսի քարածխով են աշխատելու:

Կուգբասսում գտնվում եւ նաև լերկաթահանք, վորի մեջ $57-58^{\circ}/\text{o}$ լերկաթ և պարունակում: Քարածխի, լերկաթահանքերի, պղնձահան-

քերի միատեղ լինելը, մյուս կողմից՝ հացառաւ շրջանի մոտիկությունը կուղասասը գարձնելու լին ԽՍՀՄ-ի ինդուստրիայի կենտրոններից մեկը, վորի պրոդուկտները կվաճառվեն վոչ միայն ամբողջ Սիբիրում, ալլև Մոնղոլիայում, Մանջուրիայում և սահմանակից լեր-կըրներում:

Թարրիկա-զործարանային արդյունագործությունը գեռես թույլ եւ մշակում են գլխավորապես գյուղատնտեսական պրոդուկտներ (յուղի, կաշվի գործարաններ, ալրազացներ և այլն):

Հնգամյա պլանը...Արևմտյան Սիբիրի հսկալական հարստությունները գեռես բավարար չափով չեն ոգտագործվում, հյուսիսային մեծ ճանապարհի ոգտագործումը, իերկաթուղարին ցանցի ընդարձակումը և այն դրամական միջոցները, վոր կառավարությունը հատկացրել ե Արևմտյան Սիբիրին, մեծ զարկ են տալու նրա անտեսության զարգացմանը. կմեծանա քարածխի արտադրությունը, ձկան արտահանությունը, մեծ չափերով կմշակվեն լերկաթահանքը, անտառային հսկայական հարստությունները և այլն:

Ուրալ-Կուզնեցկի պլրուկտի համաձայն Ուրալի մետալուրդիան զարգանալու համար պետք ե Կուզնեցկի քարածուխը լայն չափերով փոխադրել Ուրալ Ալդ նպատակով Ուրալը և Կուզնեցկը կապելու համար կառուցվելու յեն նոր լերկաթուղիներ և բարելավվելու յեն ջրացին ճանապարհները:

Սեփական մետալուրդիան զարգացնելու համար Կուզնեցկի մոտ կառուցվում ե մի մեծ մետալուրդիական գործարան այս տարի պատրաստ կլինի և ամբողջ Սիբիրին կմատակարարի եժան թույլ: Ալս թույլը զարկ կտա լերկաթուղարին ցանցի լայնանալուն և մետաղագործության զարգացմանը:

Դյուղատնտեսությունը բարձրացնելու համար Նովո Սիբիրսկում կառուցվելու յեն գյուղատնտեսական մեքենաների և կաթի ամանների գործարաններ:

Հնգամյա պլանի մեջ մտցրված ե յերեք խոշոր ելեքտրակայանների կառուցումը, վորոնց կարողությունը հասնելու յե 132 հազար կիլովատտի:

Որի ավագանի անտառային հարստությունն արտահայտելու համար ծրագրված ե Որի ավագանը լերկաթուղով կապել Սպիտակ ծովի նախանդիստների հետ: Մի շարք լերկաթուղարին գծեր Կուզնեցկի գործարանին մատակարարելու ելին հանք, քարածուխ և փալտ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ումսկ.—Իրտիշի վրա, Սիբիրի լեռկաթուղու ճյուղավորման տեղում, անասունների հավաքում, հացի, յուղի մթերում, Յիլըռպական մասից ստացված գործարանալին ապրանքների բաշխում։ Զրադացներ, կաշվի գործարաններ, զյուղատնտեսական մեքենաների արտադրություն։

Տյումեն։—Սիբիրի նավագնացության ամենաարևմտյան կետը՝ նավերի նորոգում, պարանի Փարրիկա, սղոցարաններ, կաշվի գործարաններ։

Կուրգան։—հացի և լուղի մթերում, անասունների հավաքում, սպանդանոցներ, պահածոների գործարան, կաշվի և կողկեղենի արտադրություն։

Տօբոլսկ։—մորթիների, թռչունների և ձկների մթերում։

Նովօ-Սիբիրսկ։—յերկաթուղիներով միացած և Բարնոսուլի և Սեմիպալատինսկի հետ, ջրադացներ, սղոցարաններ, սպանդանոցներ, կաշվի գործարաններ։

Տումսկ։—Սիբիրի կուլտուրական կենտրոն (համալսարան)։ Սիբիրի յերկաթուղու հետ միացած և մի յերկաթուղալին ճյուղով։

Բարենաուլ։—խոշոր նավագնացության սկզբնակետ, հացառատ և յուղառատ շրջանի կենտրոն, հացի մթերում, ջրադացներ, կաշվի գործարաններ, յերկաթուղալին արհեստանոցներ, զյուղատնտեսական մեքենաների արտադրություն։

Բիյսկ։—Առևտուր Մոնղոլիայի հետ, այստեղից սկսվում և կարելը խճուղի դեպի Մոնղոլիա։ Այս ճանապարհով Մոնղոլիա յեն ներմուծում մանուֆակտուրա, շաքար, թեր, յերկաթե իրեր, իսկ Մոնղոլիայից արտահանում են անասուններ, կաշի, բուրդ, մորթի և այլն։ Լենինսկ, Կուզնեցի, Անժերսկ, Շչեգոլիսկ։—Կուղբասսի քարածխալին արդյունաբերության կենտրոններ։

Մինուսինսկ։—(հաց, անասուններ)։ առևտուր Տաննուր. Տուվալի հանրապետության հետ, վորտեղից ստանում ենք մորթի, բուրդ և կաշի։

ԱՐԵՎԵԼՑԱՆ ՍԻԲԻՐ


Արևելցան Սիբիրի սահմանները կազմում են հյուսիսից՝ Հյուս. Բեեռալին ծովը, հարավից՝ Մոնղոլիան և Չինաստանը, արևմաւրքից՝ Արևմտյան Ասիան, իսկ արևելքից՝ Խաղաղ ովկիանոսը։

Ալսպիսով Արևելյան Սիրիրի մեջ մտնում էն Սիրիրական լեռ-կըրի արևելյան կեսը, Յակուտական ինքնավար հանրապետուրյունը Բուրյաս-Մոնղոլական ինքնավար հանրապետուրյունը յել Հեռավոր-արյեվելյան յերկրությունը:

Նրա մակերևույթի մեծությունն ե մոտ 9 միլիոն քառ. կիլոմետր, ալսինքն՝ համարյա Յեվրոպայի չափ ե:

Բնուրյունը—Արևելյան Սիրիրը լեռնոտ լեռկիր ե. այս ու այն ուղղությամբ ձգվում են զանազան լեռնաշղթաներ ու բարձրավանդակներ, վորոնք բաղկացած են կամ հին բլուրեղալին լեռնային տիսակներից (գնելսից, թերթաքարերից և բլուրեղալին կրաքարերից), կամ հին ծովալին կիտվածքներից: Հրաբխային գործունելությունից վիճել են ահազին լավագին հեղեղներ, վորոնք տեղ-տեղ ծածկել են հին լեռնային տեսակները: Այդ ներքին ուժերից ցամաքը շատ տեղ բարձրացել ե, շատ տեղ ել ընդհակառակն իջել: Այդ իջած տեղերը հետագայում լցվել են ջրով և ճեր առաջացրել: Այդ լեղանակով ե առաջ յեկել լեռկագնդի ամենախոր լիճը՝ Բայկալը (1.522 մետր խորություն):

ԽՍՀՄ-ի Փիդիկական բարտեզի վրա ցույց տվեք Արևելյան-Սիրիրի գլխավոր լեռնաշղթաները—Սայանյան, Յարլոնովյան, Ստանովյան, Բայկալյան, Վերխոյանսկի, Սիրիոստա-Ալին:



Նկ. 89. Ռուսակաների վրանը.

Արևելյան Սիրիրի լեռներն ընդհանրապես ալնքան ել բարձր չեն և գագաթների մեծ մասը մերկ ե: Ընդարձակ դաշտավայրեր, ինչպես արևմտյան Յեվրոպայում, այստեղ չկան. լեղածներն ել տարածվում են

գետերի հոսանքի յերկարությամբ և զլուս. Բնեռային ծովի ու Խաղաղ ովկիանոսի ափերին:

Կլիմա—Արևելյան Սիբիրն ունի խիս ցամաքային կլիմա, վորովհետև Ատլանտյան ովկիանոսից շատ հեռու լի գտնվում, Խաղաղ ովկիանոսից բաժանվում է լեռնաշղթաներով, իսկ Հյուսիսային Բնեռույին ծովը ցուրտ ե ու սառուցներով ծածկված: Յերկրագնդի վրա վոչ մի տեղ այնպիսի սառնամանիքներ չեն լինում, ինչպես Արևելյան Սիբիրում. այստեղ, Վերինոյննուկ քաղաքի մոտ, գտնվում է յերկրագնդիս ամենացուրտ վայրը (ցրտի բևեռը), վորտեղ հունվարի ջերմությունը մոտ՝ -70° -ի. Վլագիվաստոկում հունվարին 21° -ով ավելի ցուրտ ե, քան Սուխումում, չնայած վորայդ քաղաքները գտնվում են մինույն լայնության վրա, Ուսսուրիակ յերկրի հարավային մասում, վորը գտնվում է Դրիմի լայնության վրա, ձմեռն այնպես ցուրտ ե, ինչպես Արխանգելսկում: Ամառն Արևելյան Սիբիրում ջերմությունը վորոշ տեղերում բարձրանում է $+40^{\circ}$ ավելի, այնպես վոր բարեխառնության տատանումները (ամպլիտուդան) 100° -ից անցնում են: Սառնամանիքներն առանձնապես ուժեղ են Արևելյան Սիբիրի կաթսայանման գոգավորություններում, նա շարունակում է ստոչել և ամբողջ ձմեռն անշարժ կանգնում ե. չոր լեղանակի և քամու բացակայության շնորհիվ մարդ հեշտությամբ կարողանում է տանել այդ սառնամանիքները:



Նկ. 90. Սիբիրի յերկաթուղային գիծը.

Զմեռը շուտ ե դալիս, հոկտեմբերի սկզբին արդեն գետերը ծածկվում են սառուցով և մնում ե նրա տակ 200 որից ավելի (լենան 200

որ, ստորին մասերում՝ 250 որից ավելի). Արևելյան Սիրիոսւմ ամառը տաք ե լինում:

Արևելյան Սիրիոսի համեմատաբար կարճատե ամառվա բարձր բարեխառնությունը նպաստավոր ե միաժամ բույսերի զարգացման համար. այսպես, Յակուտսկի քաղաքի մոտ, վորտեղ հողը շատ քիչ խորությամբ և հալվում և վորտեղ տարվա ջերմության միջին աստիճանը հավասար ե —10°-ի, հասնում են ցորեն, պոմիդոր, իսկ Անդրբայկալում, վորտեղ տարվա ջերմության միջին աստիճանը հավասար ե —2°-ի, նույնիսկ առատ ցորեն ե լինում: Սակայն ձմռան ջերմության ցածր աստիճանի պատճառով, այստեղ հնարավոր չե պտղատուծառեր մշակել:

Մթնոլորտային տեղումներ Սիրիոսւմ քիչ են թափվում. հուսիսում 10 սմ., գեղի հարավ մթնոլորտային տեղումների քանակը շատ անում և հասնում ե մինչև 30—40 սմ.-ի: Բայկալան լճի շրջանում մթնոլորտային տեղումների քանակը նորից նվազում ե (20—30 սմ.): Բոլորովին այլ կլիմա ունի Յապոնական ծովի լեռերքը և Կամչատկայի հարավային մասը, վորոնք գտնվում են Խաղաղ օվկիանոսի մուսսոնների ազդեցության տակ, այդ պատճառով ել մթնոլորտային տեղումներն այստեղ հասնում են 50 սմ., իսկ վորոշ տեղերում նույնիսկ մինչև 100 սմ.: Այդ անձրևները թափվում են գլխավորապես ամառը:

Դեմերտ. — Արևելյան Սիրիոսի գետերը մեծ ։ ամբ հոսում են լեռնոտ տեղերով և արագանու են. շատ տեղ ճեղքելով լեռնալին պինդ տեսակները նրանք առաջացնում են սահանքներ:

Արևելյան Սիրիոսի հոսում են լեռեք մեծ գետեր՝ Յենիսեյ*) Լենա լեկ Ամուր:

Յենիսեյն (մոտ 5 հազար կմ.) սկիզբն ե առնում Սայանյան լեռների հարավային լանջերից, Տաննու-Տուվայի սահմաններում և աջ կողմից ընդունում ե յերեք Տունգուսկաներբ' Վերին, Միջին և Ստորին Վերին Տունգուսկան կոչվում ե Անգարա և սկսվում ե Բայկալ լճից՝ Հարավ-արևելքից Բայկալ լիճն ե թափվում Սելենգա գետը:

Լենան (մոտ 4¹/₂, հազ. կմ.) սկիզբն ե առնում Բայկալյան լեռներից, Բայկալ լճից վոչ հեռու: Աջ կողմից՝ նա ընդունում է Վիտիմ, Ոլեկմա, և Ալդան, իսկ ձախ կողմից՝ Վիլյույ վտակները:

Ամուրը (2.870 կմ. հաշված Շիլկայի և Արգունի միացման տեղից):

*) Զախ կողմից Յենիսեյի մեջ թափվում ե կաս գետը, վորը միացած ե կետքետի (Որի վտակը) հետ ջրանցքով. սա կարող ե մեծ նշանակություն ունենալ ապագայում:

կազմվում ե յերկու գետից՝ Շիլկայից և Արգունից. ձախ կողմից Ամուրի մեջ են թափվում՝ Զեյտ և Բուրեյա, իսկ աջ կողմից՝ Ուստուրի գետերը:

Արևելյան Սիբիրի մյուս գետերից պետք ե մատնանշել հետևյալ՝ ները՝ Խատանգա, Ոլենեկ, Յանա, Խնդիգիրկա, Կոլիմա, Անադիր և Կամչատկա թերակղզում՝ Կամչատկա գետը:

Բուսականուրյուն—Արևելյան Սիբիրի Բուսական աշխարհը շատ բաներով հիշեցնում ե Արևմտյան Սիբիրի բուսականությունը: Արևելյան Սիբիրի հյուսիսային մասը բռնված և տունդրաների զոնայով, վորը ծածկված ե գլխավորապես քոսերով, իսկ գեղեցիկ հարավ սկսվում ե ավելի անանցանելի, քան Արևմտյան Սիբիրում, տայգայի զոնան, վորտեղ գտնվում են նույն փշատերկ ծառերի տեսակները, վորոնց մեջ զերիշխում ե կուենին. սա բռնում է մեծ տարածություն: Ավելի սահավաքատահում են՝ սոճի և յեղենի, իսկ ավելի արևելք, լենալից այն կողմ սոճիներ այլևս չկան: Արգավանդ սևահող տափաստաններ Արևելյան Սիբիրում պատահում են միայն տեղ-տեղ, այն ել փոքր կտորներով, որինակ Մինուսինյան տափաստանը Յենիսեյի վերին հոսանքում և Բայկալից այն կողմը՝ Բուրյայան տափաստանները:

Միանգամայն առանձին տեղ են բռնում Ամուրի և Մերձձովյան շրջանի հարավային մասի բուսական տշխարհը. այդ շրջանները գտնվում են մուսսոնների ազդեցության տակ: Մուսսոնները փշում են ամառը Խաղաղ ովկիանոսից և մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումներ են բերում, վորոնց շնորհիվ այստեղ փարթամ բուսականություն և լինում: Անդր-Բայկալում արդեն պատահում են այնպիսի անտառներ, վորտեղ գտնվում են ընկույզնի, կազնի, հացի, իսկ ավելի արեելք, Ամուրյան շրջանում հասնում են՝ մանջուրյան լորի, մանջուրյան մալրի, թզկի, վորոնք փաթաթվում են ամուրյան վայրի խաղողի վորթերով: Անտառների միջև և գետերի հովիտներում ընկած տարածությունները բռնում են տափաստաններով, վորոնք ծածկված են այնպիսի բարձր խոտով, որը ծին նրա մեջ չի յերեսում. քանի մոտենում ենք Մեծ ովկիանոսին, ծառերը և խոտալին բուսականությունն սկսում են ել ավելի փարթամանալ:

Արևելյան Սիբիրի տունդրաներում և տայն գալում ապրում են նույն կենդանիները, ինչ վոր Արևմտյան Սիբիրի համապատասխան շըրջաններում, բայց Արևելյան Սիբիրում կան և այնպիսի կենդանիներ, վորոնք Արևմտյան Սիբիրում չեն պատահում. ալսպես Ամուրի շրջանում ապրում են՝ վագրեր, վարազներ, ամուրյան կատու և բաղմաթիվ լապոնական ու չինական թոչուններ:

Արևելյան Սիրիոսի բնակչության մեծ մասը
ունակությունը ուներ են. սրանք բնակություն են հաստա-
տել միջին զոնայի գետերի հովիտներում նախալեռներում, տափաս-
տաններում և ընդհանրապես ապրելու համար հարմար վայրերում:

Ուստի շատերը շարունակ շփվելով Արևելյան Սիրիոսի
տեղական բնակչության հետ, խառնվել են նրանց հետ և շատ
բան վերցրել նրանցից. այդ պատճառով ել Արևելյան Սիրիոսի
ուստի խստ փոխվելեն. արևելյան սիրիոսիակը կարճահասակ
ե, վոչ այնքան թիկնավետ, ունի լաւ գեմք՝ դուրս ցցված ար-
տուսկրներով և նոսր մազերով:

Չափազանց փոխվել են նաև արևելյան սիրիոսիակի լեզուն.
Նո բազմաթիվ տեղական բառեր և արտահայտություններ ե
վերցրել. վորոշ չափով վերցրել են նաև տեղական հազուստը,
կերակուրը, տնտեսական ինվենտարը և ալին:

Բացի ուստի շատերից, Արևելյան Սիրիոսի մեծ տեղ են բռնում նաև
Բուրյաները, վորոնք պատկանում են մոնղոլական խմբին, յակուտները
(թուրքական խմբին) և տունգուսները (տունգուսական խմբին):

Բուրյաները մոնղոլական տիպի մաքուր ներկայացուցիչներ են.
Նրանք ունեն նեղ բացված աչքեր, լայն այտոսկրներ, կաշվի թուխ
դեղնավուն գուլն, սև աչքեր և սև ու կոշտ մազեր: Բուրյատներն ապ-
րում են Բայկալ լճի շուրջը՝ Բուրյատ-Մոնղոլական հանրապետու-
թյան մեջ. Նրանք բաժանվում են Իրկուտսկի և անդրբայկալյան բուր-
յատների: Իրկուտսկի բուրյատները պարապում են յերկրագործությամբ
և անասնապահությամբ, իսկ անդրբայկալյան բուրյատները միայն,
վերջերս են սկսել յերկրագործությամբ պարապել:


Յակուտներն ապրում են Լենայի միջին հոսանքում, Յակուտա-
կան հանրապետության մեջ (Յակուտիա):

Յակուտները զլիսավորապես անասնապահությամբ են պարապում,
բազմացնում են մեծ մասամբ յեղջլուրավոր անասուններ: Յակուտիան
անասնապահական յերկիր ե, Ակստեղից կարելի յենույնիսկ անասուն-
ներ արտահանել: Պահում են նաև ձիեր, վորոնք աչքի լեն ընկնում
իրենց արտասովոր տոկությամբ:

Յակուտիայի ափելի հյուսիսային շրջաններում պարապում են
ձկնորսությամբ (ձկնորսության կենտրոնը Ժիգանսկ քաղաքն ե, Լե-
նայի վրա), վորսում են սկյուռ, սամույր և աղվես. պարապում են
նաև յեղջերվարությամբ: Վորոշ ոժանդակ զրադշունք ե նույնպես
մամոնտի վոսկրի շահագործությունը: Ավելի հարավում, վորտեղ կիման

մեղմ ե, յակուտները լերկրագործությամբ են պարապում. ցանում են հաճար և գարի:

Յակուտիայում շատ բնական հարստություններ կան: Սակայն յակուտները գեռնս չեն կարողանում իրենց արտադրական ուժերը լայն կերպով զարգացնել վորովինետե Յակուտիայում հաղորդակցության լավ ճանապարհներ չկան, իսկ գետերի վրա նավագնացությունը տեսքում ե ընդամենը 150 որ: Այդ պատճառով Յակուտիայի հանրապետության մեջ արտադրական ուժերի բարձրացման ու զարգացման համար ամենակարևոր հարցը հաղորդակցության ճանապարհների հարցն է:



Նկ. 91. Իրկուտսկ.


Ոռանց յերկարուղիների Յակուտիան չի կարող իր արտադրական ուժերը զարգացնել:

Տունգուսները բռնում են ահագին տարածություն՝ Յենիսեյից մինչև Ոխոտյան ծովը և Ամուր գետը. Նրանց մեծամասնությունն ապրում է Յենիսեյից արևելք, լեռեր Տունգուսկանների ավագանում. տունգուսներում նրանք պարապում են լեղջերվածքությամբ, տարգայում վորսորդությամբ, իսկ հարավում մի փոքր մասը պարապում է յերկագործությամբ:

Արևելյան Սիբիրի մնացած ժողովուրդներն իրենց թվով այնքան ել աչքի չեն ընկնում:

Նրանք ապրում են Արևելյան Սիրիրի արեւելքում և հյուսիս-արևելքում։ Այսպես, Սիրիրի տունդրային գետերի՝ Յանայի, Խնդիզիրկալավի և Կոլխամալի ափերին ապրում են յուկազիրները, Ոխոտյան և Բերդինգան ծովիզերքներին ապրում են կորյակները, Կամչատկա թերակղղուա՝ կամչաղալները, իսկ Սիրիրի ամենահյուսիս-արեւելյան մասը՝ Կոլիմա գետից մինչև Բենուային և Ոխոտյան ծովերի ափերը, բռնել են յուկչերը, Սախալին կղղում և մասամբ ել Ոխոտյան ծովի ափին ապրում են գիլյակները, Բոլոր ալդ ցեղերը պարապում են վորսորդությամբ, յեղջերվարուծությամբ, ձկնորսությամբ և թափառական կլանք են վարում։ Ամուրի ավագանում բնակվում են տունդրաների զանազան ցեղեր. բացի զրանից ալստեղ քիչ քանակությամբ և զլխավորապես քաղաքներում ապրում են չինացիներ և յապոնացիներ. գրուղական աղդաբնակության մեջ շատ կորհացիներ կան։

Զբաղմունիք. — Արևելյան Սիրիրի նստակյաց բնակիչների զլխա-



Նկ. 92. Յակուտի ընտանիքը ճանապարհին,

վոր պարապմունքը յերկրագործուրյունը՝ յել անասնապանուրյունն եւ, Բայց բնական պարմանները յերկրագործության համար շատ աննը-

պաստ են. ընդարձակ տունդրաներն ու տայգաները լերկրագործության համար անպետք են. մյուս շրջաններում յերկրագործությամբ անհնար և պարապել, վորովհետև ամառը կարճատե և, իսկ ձմեռն այսպահ սակավածյուն և լինում, վոր աշնանացանը սառչում, վոչնչանում եւ Ամուրի և Մերձծովյան շրջաններում յերկրագործությանը խանդրում են առատ անձրեները, վորոնք առանձնատպիս գտիս են հացի հնձի և խորհարքի ժամանակի: Յերկրագործությունը մեծ հաջողություն ունի Մինուսինսկի տափաստանում, վորը կոչվում է «Սիբիրի շտեմարան». ցանում են զլխավորապես հաճար և ցորեն: Ալդ հացառատ շըրջանի կենտրոնը կազմում է Կանսկ քաղաքը, վորտեղ և մեծ քանակությամբ հաց և մթերվում:

Հնդհանուր առմամբ Արևելյանը Սիբիրը ԽՍՀՄ-ի հացի պակասություն ունեցող շրջաններից մեկն. հացի պակասորդը ստացվում և Արևմտյան Սիբիրից:

Անասնապահությունը Արևելյան Սիբիրի բնակիչների համար կարևոր նշանակություն ունի. պահում են զլխավորապես խոշոր լեղջերավոր անսուններ ու ձիեր: Տունդրաների բնակիչները պահում են լեղջերուներ:

Ձենուսությունը խոշոր չափերի յե հասել չհուազոր Արևելքում՝ Բերինգյան, Ոխոտյան և Յապոնական ծովերում. ալստեղից ձուկը յերկ է թուղով փոխադրվում և ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասը:



Նկ. 93. Տունդրանի ընտանիքը Ալդան գետի ռայոնում.

Արևելյան Սիբիրի բնակիչների համար կարևոր նշանակություն ունի նաև վորսորդությունը: Տայգաները հարուստ են զանազան աղվա-

մաղ զաղաններով, վորոնց մորթին միշտ լավ և ծախվում: Վորսոր դությունը մեծ նշանակություն ունի մանավանդ յակուտների համար, վորոնք արտահանում են մորթիներ և նրանց փոխարեն ներմռւծում են հաց և գործարանային ապրանքներ:

Հանճային նարսուրյուններ.—Արևելյան Սիբիրի ամենամեծ հարսությունը կազմում են անսառ և նաները, վորոնք ճանապարհների պակասության պատճառով գեռես լայն չափով չեն ողոագործվում: Ապագայում, յերբ Արևելյան Սիբիրը ջրային ճանապարհների և յերկաթուղիների ցանցով կծածկվի, արդյունագործությունը կկազմի բընակչության գլխավոր պարագմունքը և կունենա վոչ միայն համամիութենական, այլև և համաշխատնային նշանակություն:

Մեծ քանակությամբ վոսկի ստացվում և Յենիսեյի տալգայում, և մանավանդ Լենայի Վիտիմ վասակի ափերին (Բողայբո քաղաքի մոտ):

Ցերկաթուղու գծից վոչ հեռու գտնվում է Չերեմիսլի քարածխային ավազանը, վորը նույնպես մշակվում և և ստացված քարածուխը ծախսվում և Սիբիրի յերկաթուղու պետքերի համար: Քարածխի մեծ պաշար կա նաև Յենիսեյի գետաբերանում և վերին Յունգուսկայի ավազանում, Սախալինում և այլ տեղերում:



Նկ. 94. Փայտ, Յապոնիա փոխադրելու համար.

Սալանյան լեռները հարուստ են գրաֆիտով, վորը բարձր վորակունի: Նավթի մեծ պաշար կա Սախալինում:

Զանազան տեղերում գտնվում են արծար կապարի հաներ (Ներչինսկի մոտ), կլայեկ, պղինձ, մանգան և այնպիսի արժեքավոր մետաղներ, ինչպիսին են վոլֆրամը, մոլիբդենը, ոսմիումը և այլն:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Կրասնոյարսկ. — Յենիսեյի ափին, ջրադաշներ, սղոցաբաններ, կաշ-
վի գործարաններ, նավաշինաբռնություններ.

Կանսկ. — Հացի մթերում.

Տենիսելկո, Տուրովսանսկ մորթիների հավաքում:

Իրկուտսկ. — Յերկաթուղու վրա. այստեղից Յակուտիային և Բո-
դայըրուի վոսկու արդյունաբերական շրջանին մատակարարվում ե ան-
հրաժեշտ մթերքներ:

Չերենիսովո. — Քարածխալին արդյունաբերության կենտրոն:

Բոլյայբո. — Վոսկու արդյունաբերության կենտրոն:

Վերխն. Ուդինսկ. — Խճռուղի զետի Մոնղոլիա. անասունների հավա-
քում. բուրյատ-մոնղոլական հանրապետության կենտրոն:

Յակատսկ. — Յակուտիայի քաղաքական և կուլտուրական կրանքի
կենտրոն:

Խաբարովսկ. — Հեռավոր Արևելքի կենտրոն:

Վլադիվոստոկ. — Կարենոր նավահանգիստ. փալտի արդյունաբերու-
թյուն. կուլտուրական կենտրոն:

Բայկուլեչենսկ. — Յեվրոպական մասից ստացված ապրանքների
մաշխումը շրջանում. առետրական կենտրոն. առետու և Մանջուրիա
ենու:

ՑԱՆԿ

Եջ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
--------------------	---

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԽՍՀՄ-Ի ՄԱՍԻՆ	5
--	---

ԽՍՀՄ-Ի դիրքը, սահմանները և մակարդակի մեծությունը:

ԽՍՀՄ-Ի ափերը վողողող ծովերը:

ԽՍՀՄ-Ի բնակիչները

ԽՍՀՄ-Ի պետական կազմը.

ԽՍՀՄ-Ի բնական մասերը:

II. ԿՈՎԿԱՍ	24
------------	----

Ա. ԹԵՂԻԿՈՎԿԱՍ	24
---------------	----

Սահմանները, վարչական բաժանումը, մակերեսույթի կազմությունը, կլիման, գետերը և լճերը, բուսականությունը, հանքային հարստությունները, բնակչությունը, դրադ մունքը — հացահատիկների մշակություն, բամբակի մշակություն, ծխախոտի մշակություն, թելի մշակություն, ալգեգործություն, անասնապահություն, մեղվաքուծություն, շերամապահություն: Գլուխանակնեսությունը հնգամյա պլանում:

Անդրկովկասի արդյունագործությունը: Ելեկտրիֆիկացիա: Ցերկաթուղիներ: Գլխավոր քաղաքները:


Բ. ՖՅՈՒԹՈՎԱՅԻՑ ԿՈՎԿԱՍ	73
-----------------------	----


III. ԽՍՀՄ-Ի ՑԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԸ	79
-----------------------------	----

ԽՍՀՄ-Ի ՑԵՎՐՈՊԱԿԱՆ մասի մակերեսույթի կազմությունը, կլիման, գետերը և լճերը, հողերը, բուսականությունը և կենդանական աշխարհը:

ԽՍՀՄ-Ի ռայոնացումը.

Ա. Ուկրաինա	100
Բ. Կենտրոնական-Սևահողային շրջան	111
Գ. Կենտրոնական արդյունագործական շրջան	114
Դ. Արևմտյան շրջան	125
Ե. Հյուսիս-արևմտյան շրջ. (Լենինգրադի)	128
Զ. Հյուս.-արևելյան շրջ.	137
Ը. Վատկա-Վետլուգայի շրջ.	141
Թ. Ուրալան շրջան	143
Ժ. Միջին-Վոլգան շրջ.	151
Ի. Ստորին-Վոլգյան շրջ.	155
IV. ԿԱԶԱԽՍՏԱՆ	161
V. ՄԻԶԻՆ ԱՄԻԱ (Թուրքեստան)	167
VI. ՏԱԶԻԿՍՏԱՆ	178
VII. ՍԻԲԻՐ	181





3

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041533

[604]
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ (12¹/₄ մամուլ)

486 - Ա 4153



География СССР
по областям Госплана

Госиздат ССР Армении
Эревань—1930

